



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Uta
✓ 1288

date June

1999



ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԱԾԱԽ ՏՂԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԿԱՄ

ՄԵԾ ՊԱՊԻ

ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ



ՊԵՏԵՐՐՈՒՐԳԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂԱՅ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ



Ք Ի Ր Ք

Գ Ե Ր Պ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր Ի Ի Ա Մ Ա Ր



ՈՅԻ=1871

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԻԱԾՆԻ
Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ:

736

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ. Տ. ԳԵՌԳԵԱՅ Դ.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ


ՀԲ 1291

91288. Եւ



ԻՄ ԸՆԿԵՐԱԿԻՑՆԵՐԻՆ.

Բարեկամք. ձեզ քաջ յայտնի է թէ, ինչ ժամանակի եւ հանդառնաց ծնունդ է այս փոքրիկ աշխատութիւնը: Այժմ, երբ մենք իրարուց բաժան, զանազան տեղերում ցրուած, զանազան նորանոր զբաղմանց եւ պարագայից ենթարկուած ենք, այժմ ասում եմ— ո՞րքան մեզ ախորժեկի պէտք է լինի, այն մեր ընկերական ջերմեռանդութեան, քաղցր խորհրդածութեանց բուխնւրից մնացած մի յիշատակ մեր առաջեւ տեսնելը: Թող ուրեմն, այս փոքրիկ յիշատակով դարձեալ մեք բոլորս առաւել սերտ կապուինք նոյն այն առաջուայ սիրովք, եւ միտ բերենք մեր ընկերական սիրոյ փոխադարձ սահանջները : Միւս կողմանէ, թող ստրանով դարձեալ, ինչպէս առաջ էինք, այժմ եւս առաւել անկեղծ միաբանինք մեր յարգանաց զգացմանց մէջ դէպի այն անձինք, որ առաջինք իւրեանց մտրդասիրութեամբ, հիւրընկալութեամբ եւ ոգելից ազդեցութեամբ մեզ կարապետ դարձան մեր բռնած համեստ նախապարհի վերայ:



Թ.Ա.ՐԳՄԱՆՈՂ:

1770

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.

1770

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ի

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատ ժամանակ է, որ ես Թուարանութիւն եմ դաս տալի երեխաներին. քանի որ փորձս աւելանում է, քանի որ նոր և նոր երեխաների հետ սկսում եմ պարապիլ—տեսնում եմ որ մեր դասատուութեան ձևը երեխաների համար բոլորովին անյարմար է: Շատերը կանոնները անգիր են անում առանց կարողանալու նրանց միտքը լաւ հասկանալ, առանց կարողանալու նրանց օրինաւոր բացայայտել:

Երբ մենք մեզ մտքով տանում ենք Աւստրալիայի այն վայրենի ժողովուրդների մէջ, որտեղ, ինչպէս պատմում են, երեք թուից աւելի համարանք չը գիտեն, — աւելի և աւելի զարմանալի են դառնում մեզ համար Թուարանութեան սկզբնական գործողութեանց գիւտերը: Այդ գիւտերի մէջ ամենից լաւ երևում է ընդհանրապէս մարդկային ոգւոյ զօրեղութիւնը, ազատութիւնը և քայլ առ քայլ յառաջընթանալը—այդ նախընթաց գիւտերն են, որ ծագեցին մեզ համար այն մաթեմատիքական լոյսը, որը վերջին դարերումս լուսաւորեց, բաց արեց մարդկութեան առաջը շատ մութ և անյայտ ճանապարհներ:

Այսպէս մէկ լոյս պէտք էր որ ծագէր երեխայի համար, երբ սկսում են նրան թուարանութիւնը ցոյց տալ: Մեր անբաղդութիւնից, ընդհակառակը, կասես թէ՛ նորա առաջը մի սև խորխորատ է բաց լինում և նորա միտքը գուլանում, բթանում է՝ այդ գիտութիւնը ուսանելու ժամանակ. փոխանակ նորանից ստանալու մի նոր ույժ, մի նոր զարգացումն, նա թուարանութիւնից սովորում է բառ առ բառ անգիր անել տարազները, կանոնադրութիւնները, առանց նրանց միտքը հասկանալու, և մեքենայի նման կատարել այն գործողութիւնները, որոնց պատճառը նա չէ իմանում—ահա ձեզ ամենալատթար սովորութիւն, որը որ երեխայ ժամանակից մնում է բոլոր կեանքի մէջ, և որից ազատուիլը շատերի համար բաւականին դժուար է:

Այս բանը մեր նախակրթական դաստիարակութեան մեթոդայի արատաւորութիւնից է յառաջ եկած:

Մեծանուն Փասկալը՝ մարդկութեան յառաջադիմութիւնը և լուսաւորուիլը լաւ ներկայացնելու համար—ասաց "Մարդկային ազգը, բոլոր դարերի ընթացքում, պէտք է երեւակայել իբրև մի մարդ, որը միշտ կայ, ապրում է և անընդհատ ուսանում է:"

Այս դարաւոր մարդկութեան կրթութիւնը, որոյ սկիզբը մեզանից շատ հեռու է, պէտք է ասել՝ որ կրկին սկսվում է ամենայն մի երեխայից, նորա ծնած ժամանակից: Յետագայ դարերի երեխան, իրաւ է, այն օգուտն ունի, որ ծառայելով աւանդութեան նա մէկանց՝ բարդուած ստանում է այն գիւտերի գանձը, որոնք նորա նախնիքը ժողովել են մեծ աշխատանքներով շատ ժամանակների ընթացքում. նա անցանում է տիտանեան քայլերով այն ճանապարհը, որոյ ծայրը նորա (այսինքն նախնիքը) մեծ ջանք կրելով՝ քարշէքարշ են հասել: Բայց չպէտք է մտածել, թէ՛ երեխան կարողանայ ստանալ իրա ժառանգութիւնը առանց հետեւելու այն կարգին, որով կազմուել է այդ ժառանգութիւնը: Արքան ևս շուտաւիոյթ լինի նորա ընթացքը, արժան է՝ որ երեխան անցնի մարդկութեան միւսնոյն ճանապարհը: Եւ մենք էլ պարտական ենք մի անհատի մէջ պատուել այն բնական օրէնքը, որով կառավարուել է ամբողջ սեռը:

Այժմ մեզ յայտնի է, (թէպէտ ոչոքից չենք լսած,) թէ՛ առաջին անգամ հաշիւ անելու հարկաւորութիւն ունեցող մարդիկը չեն սկսել հաշիւ սովորել անջատ, վերացեալ կանոններով, ինչպէս հիմայ տեսնում ենք ուսումնարանների դասադրքերում: Յայտնի բան է, երբ պատահել է նախնական հաշուարարին մի գործնական խնդիր լուծելու,— նա սկսել է իրա խելքին ույժ տալ՝ այս կերպ փորձել — և յետոյ արդէն շատ անգամ միւսնոյնը կրկնելուց՝ կանոն է դուրս բերել: Նա զանազան տեսողութիւններ առաջուց չէր կարող անել: Սկսել երեխայի հետ թուարանութիւնը վերացեալ կանոններով և յետոյ տալ նրան զանազան օրինակներ, խնդիրներ լուծելու — էդ կնշանակէ մարդկային հոգւոյ զարգացման օրէնքին բոլորովին ընդդէմ գնալ:

Աւրեմն ի՞նչ է պատահում:— Ահա ինչ:

Երեխայի այդ կերպիւ խստացած՝ զայրացած իմացականութիւնը սկսում է փախչիլ ամենայն վերացական մտքերից, ամենայն անջատողութիւններից, որոնք ժամանակից յառաջ են ներկայացվում նորան: Այնուհետև միայն խեղճ յիշողութիւնն է գործ դրվում և տխրաբար բեռնաւորվում է զանազան անհասկանալի բառերով և մէկ քանի գործնական

ձևերով, որոնց գործողութեան իսկ պատճառը նրան անյայտ է մնում:

Ուրեմն՝ ճշմարիտ դասատուութեան ձևը կլինի այն, որը, եթէ կարելի է այսպէս ասել, տեղափոխում է երեխային և նորան ներկայ է կացուցանում թուարանութեան ստեղծման ժամանակին: Ահա այս բանը ես ուզեցի փորձել յառաջակայ ԵՐԿՈՒ ԽՆՁՈՐԱԾԱԽ ՏՂԱՅՈՑ պատմութեանս մէջ, որտեղ ես գործ եմ դրել ազատ զրոյց և ո՛չ խրթին շարադրութիւն: Եթէ այս փորձը կատարելապէս չէ հասել իրա նպատակին, — ես յուսով եմ թէ՛ գտնուի մէկ ուրիշը, որ նոյնը առաւել լաւ կատարէ. պատճառը որ այդ ձևով միայն կարելի է երեխային պատրաստել Թուարանութիւն սովորելու: Սորանից յետ՝ կարելի է արդէն յառաջ բերել դասագրքեր, մտաւորական վերացումներ, որք արդէն մէկ անգամ բացուած ճանապարհով հեշտութեամբ կարող են ըմբռնուիլ, փոխանակ բթացնելոյ և նեղացնելոյ մի փոքր՝ դեռ չբացուած ուղեղ:

Ուրեմն՝ այս գիրքը պէտք է լինի պատրաստական գիրք, — գիրք՝ գերդաստանների համար, որը ես ընծայում եմ այն մայրերին, որոնք շատ ուրախ են լինում, երբ տեսնում են թէ՛ իրանց որդիքը առաջի անգամը ձեռք են առնում զարհուրելի թուարանութիւնը, — թուարանութիւն, որը՝ կարելի է, իրանք ևս միտք բերեն թէ՛ լաւ չէին հասկացել:

ԺԱՆ ՄԱՍԷ՝:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mirrored and difficult to decipher.

1800

1800

Մ Ի Բ Ա Ն Ի Ի Օ Ս Բ

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԵՒ ԾՆՈՂՆԵՐԻՆ

ԹԱՐԳՄԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ:

Թարգմանիչը ձեռնարկելով այս փոքրիկ աշխատութեանը, շատ հեռու էր այն մտքից՝ թէ իրաւի հեղինակը կարողացել է բոլորովին հաւանական կերպիւ հասնել իւր նպատակին, այսինքն պատրաստել փոքր երեխայի համար այնպիսի մի թուարանական դիրք, որ նա առանց մեծերի օղնականութեան և վերահայեցողութեան կարողանար ուղղակի կարդալ և իրողապէս օգուտ քաղել: Թարգմանիչը նաև չէ՛ կարող համաձայնել հեղինակի հետ՝ թէ միայն այն եղանակով կամ մեթօդայով, որ նա ընտրել է, կարելի է ամենից լաւ պատրաստել թուարանական ուսումը յաջողակ կերպիւ շարունակելու: Թարգմանիչը առաւել և առաւել գերազանց է համարում Վրուբէի մեթօդան, որ իրաւի կարող է լիովին (թէ տեսական և թէ գործնական) թուարանական նախակրթութիւն տալ: Այն ինչ Մասէինում միայն մի կողմին է դիտաւորութիւն դարձուցած, այն է՝ թուարանութեան գործողութեանց միտքը միայն լաւ հասկացնելուն. բայց բոլորիս յայտնի է, թէ՛ բաւական չէ մի կանոնի միտքը հասկանալը, այլ պէտք է իմանալ ևս այդ կանոնը զանազան դէպքերում, զանազան խնդիրներում գործադրելը. այն ժամանակը միայն կանոնը կրատանայ իւր էական նշանակու-

Թիւնը: Աւ ահա այս է Մասէի վիպասանական ձևի պակասութիւնն էլ, որ նա չէ թելադրում պատմութեան կապից շեղուիլ և զանազան փորձառական խնդիրներով երեխանցը պարապեցնել: Ինչպէս այս բանը վերջումը խոստովանում է (Թէպէտ մի այլ ձև) ինքը հեղինակը: Ուրեմն թարգմանիչը, ընտրելով Մասէին, պէտք է առաջինը աշխատէր սորա այս վերջի թերութիւնը լրացնել իւր ժամանակը ներածի չափ, աւելցնելով այս գրքի վերջումը մի գործնական մաս*): Արկրորդ՝ այս գրուածին մի ուրիշ նշանակութիւն տար, միտք դարձնելով նորա միւս արժանաւորութեանցը, որք աւելի յարմար էին մեր ժողովրդի ներկայ դրութեանը դաստիարակութեան մէջ:

Նա՛ իւր աչքի տակ ունէր այն բաւականին բազմաթիւ Հայկական սերունդը, որ Ռուսաց նահանգական ուսումնարաններում կրթութիւն է առնում, որտեղ արդէն տեղեկութիւն են տալի փոքր ՚ի շատէ Թուարանութիւնից. բայց՝ վայ այն տեղեկութեանց. ո՞ւմ յայտնի չէ, ի՞նչ նեղութիւններ են կրթում մեր խեղճ տղեքը՝ առաջին՝ երկրորդ դասատւում, մինչև հասնում են կոտորակներին կամ տասնորդական կոտորակներին: Յայտնի բան է, այս բանի մէկ պատճառն էլ այն է, որ մեր Հայաբնակ փոքր քաղաքների տղեքը Ռուսերէն չը դիտենալուց՝ սովորածները լաւ չեն կարող հասկանալ. այնու ամենայնիւ չէ կարելի և արդարացնել այդ ուսումնարանների դասատուութեան ձևը, որով ըստ մեծի մասին տղեքը սովորում են մեքենական կերպիւ կատարել զանազան Թուարանական գործողութիւններ, առանց քննելու և հասկանալու նոցա միտքը: Մինչև այս տեղերում կ'տարածուի Գրուբէի մետոդան, որ դեռ ուշ կարող է լինիլ, որովհետև պատրաստված վարժապետներ են պէտք, և այդ ուսումնարանների ընթացքը փոխել է պէտք: Մինչև այդ

(*) Տպագրական հանգամանքները չը թողլ տուին այդ նպատակը իրագործել:

ժամանակը, ասում եմ, Հայ աշակերտները մեծ օգուտ կարող էին քաղել, եթէ ձեռքերին ունենային Մասէի Թուարանութեան պէս դրուածքի Հայերէն թարգմանութիւնը: Արովհետեւ սորա բուն մետոդան իրանց համար ընդունուած դասատուութեան մետոդին համաձայն լինելով՝ իրանց այժմեան հանդամանաց մէջ առաւել ձեռնտու ևս պիտի լինի միայն այն զանազանութեամբը, որ այլ և այլ վէճեր և մտածելու միջոցներ առաջ բերելով, բանը աւելի հեշտացրած և ըմբռնելի է արած. գուցէ այստեղ նոքա գտնէին բացատրութիւն այն ամեն մութը կանոններին, որ նոքա թութակի պէս ուսերէն բլթբլթացնում էին ուսուցչի առաջը: Մանաւանդ որ՝ այդ հասակի աշակերտները չ'պէտք է իրանց բոլոր ուշադրութիւնը դարձնեն առաջարկեալ վիպասանութեան այն մանր մունր հանդամանքներին, որոնք իրաւի՝ կարող են փոքր երեխաներին գլխից ձգել. ընդ հակառակը՝ առաջինների համար այդ հանդամանքները միայն դուարձալի և դրաւիչ զօրութիւն կունենան: Չը խանդարելով խակական դործին, ուրեմն՝ այս դրքոյկը միայն այսպիսի հասակի տղերանց համար կարելի է նշանակել՝ — իբրև ուղղակի առանց ուրիշի օգնութեան կարդալու դիրք:

Թարգմանիչը իւր առաջը ունէր նոյնպէս մեր փոքր քաղաքների հոգևոր դպրոցների վարժապետներին, որոնք մեծ մասամբ լինում են նահանգական ուսումնարաններում կուրսը աւարտողները, և որոնք սովորեցնում են, յայտնի բան է, ինչպէս իրանք են սովորել: Ոոցա համար որովհետև Վրուբէի մետոդան դեռ մի փոքր հեռու է, թէև լինէր էլ Հայերէն առաջարկուած, դոնեւ Մասէից թող տեսնեն նոքա, որ կարելի է վերջապէս իրանց միակողմանի սովորած Թուարանութիւնը՝ առանց անդիր անել տալու զանազան ձևերով հասկացնել — յարմարացնելով մի և նոյն բանը այս և այն աշակերտի զարգացման աստիճանին և ընդունակութեանը:

Վերջապէս վեր առնենք մեր փոքր ՚ի շատէ հարուստ գեր-

դաստուենները, որտեղ շատ անգամ պատահում են, որ կամ
հայրը կամ մայրը կարդալ գիտեն, որոնց մտքին էլ չի դալ մի որ
և իցէ դասագրական Թուարանութեան ձեռք զարնել, որքան էլ
լաւ մետողայով գրուած լինի: Իսկ Մասէի "Խնձոր ծախող
տղերանց պատմութիւնը" առանց դժուարութեան, մինչև ան-
գամ զուարճութեամբ կարող են կարդալ, եթէ բոլորովին չեն
փախչում կարդալուց՝ և եթէ սովոր են ո՛րքան և իցէ մտածել
իրանց սիրելի որդւոց սկզբնական կրթութեան մասին: Այդ
կերպ՝ նոքա պիտի կարողանան իրանց փոքր երեխանց առաջը
բերել Մասէի կողովները, տոպրակները, քսակները կաղինով
կամ կակալով լեքը, իբրև զուարճալի խաղալեք, և միևնոյն
ժամանակը միտք բաց անող պարասպմունք: Այսպիսի օգտա-
կար խաղալեքներով և մտավարժութիւններով միայն՝ նոքա
կարող են զսպել իրանց երեխանցը զանազան անկարգ և վնաս-
աակար չարութիւններից. այս կերպ միայն՝ ճնողքը պէտք է
կարողանան փոքր ժամանակներից իրանց երեխանց սրամտու-
թիւնը, աչքաբացութիւնը, նոցա մտածողական ընդունակու-
թիւնները զարգացնել և ոչ ժամագիրք կամ "Նարեկ զօռով
կարդացնել տալով. որովհետև խեղճ երեխայքը, ո՞վ չ'գիտէ,
թէ՞ դոցա մէջից ոչ մի բառ չեն հասկանում, ուրեմն և ուղ-
ղակի կարելի է ասել, թէ՞ գուլանում են և բթանում. չենք
ասում թէ՞ ժամագիրքը և "Նարեկը վատ են. ասենք, պաշտելի
և պատուելի բաներ են, բայց՝ ոչ երեխայից համար, այլ մե-
ծերի, որոնք կարող են հասկանալ նոցա արժանաւորութիւնը:
Ախր, մարդ մեր ճնողներին և վարժապետներին ասէ, թէ՞
"բերէք ես ձեր ձեռք մի շատ գեղեցիկ Փիլիսոփայական կամ
Աստուածաբանական գիրք տամ Ձինաց կամ Հնդկաց լեզուով
գրված, և ճիպոտը ձեռս առած կանգնեմ ձեր առաջը՝ և հար-
կադրեմ ձեզ կարդալ. (ասենք գիր կապելը առաջուց գիտե-
նայիք) — Ի՞նչ կանէիք. չը պէտք է զարմանայիք իմ դժութեա-
նը, և չը պէտք է իմ ձեռից առնէիք ճիպոտը դրքի հետ միասին

պատուհանից դուրս ձգելիք, ինչ էլ (զորս դու պատուիրեցեր) ձեր սենեակից դուրս անելիք: Բա՛ որ էդպէս է, օրհնեալներ, ի՞նչ էք դուք ձեր որդւոցը կամ աշակերտներին երկու երեք ամբողջ տարի ծեծելով թակելով նրանց անհասկանալի բաներ կարդալ տալի. խելագարութիւն չէ՞ ձեր արածը. և մի՞թէ ձեր որդիքը ձեզ նման Աստուծոյ պատկեր չեն, մի՞թէ նոքա մի այլ արարածներ են, որ երեխանց խելքին մօտ չեղած բաները զօռօվ կարողանան մարսիլ: Աստուած տուել է, որ օրվայ բոլոր մասը մեր փոքր ժամանակը՝ մեզ չեն պարապեցնում մտադմոս և նարեկ բնթբնթացնելով, եթէ ոչ, Տէր մի՛ արասցէ, մէք բոլորս պէտք է յիմարանայինք: Աւրեմն՝ այսպիսի տաղտկալի ուսումից ազատ ժամանակը դոնեա՛ թող մտածող գերդաստունները իւրեանց երեխանցը թէ՛ գրավարժութեան համար, թէ՛ գործ սովորցնելու համար՝ կենդանի երեխայական դրուածներ կարդացնել տան. յոյս ունինք, այդպիսի մի գրքուածի փոքր նմանութիւն կունենայ մեր այս թարգմանութիւնը ևս: Աւ սորան՝ առաջ ծնողները իրանք պէտք է կարդան, որ յետոյ տեսնեն, թէ՛ ինչպէս պէտք է կարդացնել տալ և տղայոցը:

Աւրեմն մի քանի խօսք էլ ասենք այս գրքի գործածման համար, որ լինի բաց ՚ի գրավարժութիւնը, իբրև գիտութիւնը սովորցնելու միջոց:

Դառնում եմ մեր փոքր քաղաքների ուսուցիչներին. սոքա իրանք էլ կտեսնեն, որ այս գիրքը այն գրքերից չէ, ինչ տալիս են տղերանց ձեռը՝ թէ՛ այստեղից մինչև այնտեղ անդիր արան: Ա՛չ, մեր տղերքը, ինչպէս վերը ասացի, սովոր լինելով Սաղմոսը կամ Նարեկը Տիրացուի պէս կարդալուն՝ առանց ջանք անելու մի միտք, մի բան հասկանալ կարդացածից — չը գիտեն ինչպէս կարգն է, կենդանի բարբառով դրուած գիրքն էլ կարդալ և բոլորը ըմբռնել: Պէտք է նրանց այդպէս գիրք կարդացնելիս միշտ ջոյց տալ, որպէզ կէտ է՝ կանգնել, որպէզ հարցնել է

պէտք է, որպէսզ Գարձապետան է, որպէսզ ուրիշ յայնով պէտք է հար-
 դաւ, որպէսզ Բարձր, որպէսզ ցած: Այն ժամանակը միայն երե-
 խեքը բառերը իրար չ'խառնելով, հեշտութեամբ այդպիսի
 գրուածքի միտքը կհասկանան, մանաւանդ եթէ իրանց կարդա-
 ցած առարկաները աչքի առաջը տեսնեն: Բայց որովհետեւ
 Թուարանութեան ուսուցիչը բոլորովին ժամանակ չունի միև
 նոյն դասում և գրավարժութեան ուսուցչի պաշտօն կատարել,
 ուրեմն լաւ է, եթէ իւր աշակերտներին այսպիսի դիրքը անդիր
 անել չ'տայ, որ համարեա մի և նոյն մնասը կլինի՝ ինչ որ Սաղ-
 մոսից: Այլ նա՛ այս դիրքը իւր համար միայն օրինակ ունե-
 նայ: Աւ թարգմանչի էլ դիտաւոր նպատակն այդ է: Հայ վար-
 ժապետը ինքը այս գրքից պէտք է ուսանի չը դանդաղել ոչ մի
 անգամ իր դասերի ժամանակ համրիչ (չչօթի) գործ դնել և
 կամ լօբի, մանր քարեր և այլ սոցա նման բաներ համրել տա-
 լով՝ Թուարանութեան կանոններ դուրս բերել. նա՛ այս գրք-
 քից պէտք է օրինակ առնու իւր Վախակրթական Թուարանու-
 թեան դասախօսութիւնները հարց ու պատասխանով անել,
 հարցերը այն կերպ առաջարկել, որ երեխեքն սկսին մտմտալ,
 իրանք հնար մտածեն կանոն դուրս բերելու, և կանոնը սովո-
 բելուց յետ՝ այնպիսի խնդիրներ առաջարկել, որ երեխեքը
 հեշտութեամբ իրանց խելքով կարողանան այդ խնդիրները կա-
 նոնի տակ բերել: Միով բանիւ՛ նա պէտք է աշխատի իր աշա-
 կերտների հետ այնպէս վարվել՝ և այն կերպ նոցա մտածել տալ,
 ինչպէս Աննամարիկը այս առաջարկեալ պատմութեան մէջ իր
 եղբարց հետ է անում: Որա համար, ի հարկէ, հարկաւոր է,
 որ մեր վարժապետները թողնեն վերջապէս իրանց դահիճու-
 թիւնը, մէկ կողմ ձգեն այն անիծած և ահալի ճիպոտը (ճե-
 ճախայտը), որի տեսքը միայն բաւական է, որ խեղճ երեխոցը
 նոցա դիտեցածն էլ մոռացնի: Բռնութեամբ և դանելով վար-
 ժապետները միայն երեխանց ողին են զայրացնում, նոցա մեղմ
 և ազնիւ զգացմունքները չորացնում, իրանց և նոցա մէջ ան-

վերջանալի ատելութիւն ձգում — և մի՞թէ այս է ուսուցչի պաշտօնը, — ոչ, սիրով, միայն սիրով կարելի է երեխի փոքրիկ ուղեղը վարդացնել, և նրա սիրտը ազնուացնել:

Այ ուսուցիչը ուրեմն հետևելով այս գրքին, մի մեծ նշանակութիւն չպէտք է տայ սորա «հէքեաթի» ձևին, նա սկսած թուարկութիւնից ամենայն անդամ պէտք է վեր առնի մի խնդիր՝ զորօրինակ «ինչպէս տասը թուով, ինչքան կուղէ առարկայ լինի՝ բոլորը հեշտութեամբ համրել»: Աւ աշխատի կամաց կամաց հարց ու պատասխանով այդ խնդիրը բացատրել, ցոյց տալով երեխանցը ոչ թէ անպատճառ քսակ, արկղիկ, կողով, այլ ի՞նչ պատահի, զորօրինակ՝ կոպէկ, երկու շահանոց, մանկթանոց, կամ եթէ ոչինչ չլինի, գոնեայ տախտակի վերայ նկարել այդպիսի առարկաները: Այս գլուխը վերջացնելուց յետ նա պէտք է ամեն մի աշակերտին մի մի առանձին մեծ թիւ տայ նրան արտասանելու և գրելու բոլոր ընկերաց առաջև, այնուհետև գումարումը դեռ չսկսած, նա պէտք է այս գրքի վերջումը դրած չափերը ցոյց տայ*), և եթէ ուսուցիչը չէ ծուլանում, միշտ կարող է գտնել թէ արշին վերջօկները նշանակած, թէ կշիռ իւր փոքր կշռաքարերով, թէ ժամացոյց, թէ դանազան փողեր, այդ բաների չափերը իրողապէս ցոյց տալու համար՝ և ոչ միայն պատմելով: Սորանից յետ միայն պէտք է վեր առնել կրկին գումարման վերաբերեալ մի խնդիր, և Աննամարիկի նման՝ առարկաները իրար տակ շարելով բացատրել և կանոն դուրս բերել, դեռ հանումը չըսկսած՝ էլի գոնեա՞ մի տասը-քսան գործնական խնդիրներ**) պէտք է լուծել տալ երեխան-

(*) Այստեղ ևս այդ չափերը չեն գործածուիլ:

(**) Այդպիսի և նման խնդիրները ցանկացողք կ'գտնեն մեր ընկերական աշխատասիրութեանց Ա. հատ. մէջ, և առհասարակ գործնական մասին վերաբերեալ բոլոր խնդիրները ծնողք և վարժապետք այն գրքից տեղեկութիւն կարող են քաղել, ի՞նչ որ հարկաւոր է: Այստեղ պիտաւոր և կարևորն է գործը հեշտութեամբ աւանդելու եղանակը:

ցը առանձին առանձին, և յետոյ յառաջ քայլել: Այս կերպ՝
 ուսուցիչը եթէ շարունակէ, երեխանց՝ համար բոլորովին աւե-
 լորդ կը լինի մինչև վերին դասատները մի ո՛ր և իցէ դասագիրք:
 Արեխանց անական պարապմունքը՝ (Թուարանութիւնից պէտք
 է լինի՝ ոչ թէ (Թուարանութեան կանոններ անգիր անելը (այդ
 մի դասի ժամանակ, ինչպէս ասի, պէտք է տեսնեն և սովորեն),
 այլ ամենայն անգամ այն օրվայ պատմածից մի կամ երկու
 գործնական խնդիր թղթի վերայ լուծելը, որ յետոյ վարժապե-
 տին ցոյց տրվի:

Վարժապետը՝ եթէ բարեհաճի, այսքանը միայն կարող է
 անել երեխոցը այս գրքի հետ ծանօթացնելու համար, որ սո-
 վորական դասախօսութիւններից ազատ ժամանակը, շարաթը
 միանգամ, այս գիրքը՝ երեխոցը զուարճացնելու համար "հե-
 քեաթի" տեղ բոլորի առաջև կարգայ ինքը, և այն կերպ կար-
 դայ, որ երեխեքը յիրաւի լեն կենդանի բարբառ. մի և նոյն
 ժամանակը գրքի մէջ գործածած առարկայքը ուսուցիչը տախ-
 տակի վերայ պէտք է նկարագրէ, որ բոլորը տեսնեն: Այս կերպ
 ուսումնարանի երեխեքը, որոնցից շատերը բոլորովին միջոց չու-
 նին տանը գիրք կարդալու, բացի իրանց դասերը կրկնելը՝ (այս
 մասին վարժապետը առանց էդ էլ պէտք է ժամանակ կորցնէր,)
 գոնեա՛ մի փոքր կ'սովորին կենդանի բարբառով գրուածը կար-
 դալու ձևին:

Գալով ճնողներին, պէտք է ասել, թէ՛ որքան (Թուարա-
 նութեան ուսուցիչներին դժուար է, որքան նոցա պաշտօնը և
 ժամանակը չի ներում — երեխանց իրանց այս գիրքը կարդացնել
 տալով (Թուարանութիւն սովորցնել, այնքան ճնողներին հեղա-
 ք և նոսր պարպական են իրանց որդւոց գրավարժութիւնը այս-
 պիսի գրքերի վերայ բաց անել: Ամենայն փոքր ՚ի շատէ մտա-
 ծող և ճշմարիտ ճնողական սէր ունեցող մայր կամ հայր՝ կար-
 ղող է ժամանակ գտնել իւր որդւոց հետ օրը մի մի կտոր այս
 գրքից կարդալու, և միշտ վերահասու լինիլ նոցա՝ ինչպէս կարգն

է բառերը արտասանելուն : Արպէս զի գրավարժութիւնը լինի մի և նոյն ժամանակը և մտավարժութեան միջոց, ծնողքը ամենայն կերպ պէտք է աշխատեն, որ բոլոր այս գրքի մէջ առաջ բերած առակները, իրանց որդիքը աչքի առաջ և ունենան, կրթիւնում եմ, ոչ թէ անպատճառ խնձորի ձեով, այլ ինչ պատահի՝ լոբի, կաղին, կակալ և շն :

Գործնական խնդիրների մասին, ինչ որ ասացինք ուսուցիչներին, մի և նոյնը պէտք է ասել և ծնողներին, այսինքն ամենայն մի զլուխ կարդալուց յետը, երեխոցը այդ դիւին վերաբերեալ գործնական խնդիրներ պէտք է առաջարկել փորձառութեան համար : Այդպիսի թուաբանական խնդիրներ ծնողքը կարող են կամ իրանց տնտեսական հաշիւներից վեր առնել, կամ նորը հնարել իրանց երեխայից պարագաներին յարմար : Բաց ի այդ չափերը, կշիռները, փողերը (որովհետև ամենը կարող են ձեռաց տակ ունենալ,) որքան ուսուցիչը, նոյնքան առաւել ծնողները՝ պէտք է ամեն գործողութիւնից առաջ ցոյց տան :

Այս գրուածքի լեզուի կողմից թարգմանիչը աշխատել է ամենայն կերպ պահել Մասէի զուարթ երեխայական ոճը, երբեմն ի հարկէ կարճատելով, մի քանի տեղեր բոլորովին դուրս թողնելով, մի քանի տեղեր աւելցնելով, և աշխատելով ամենայն անգամ այս գրուածքը Հայացնել և աշխարհիկ շինել : Այս վերջի նպատակի համար թարգմանիչը չէ դանդաղել օգուտ քաղելու իւր ընկերների նկատողութիւններից, որոնց թարգմանիչը իւրեան պարտք է համարում՝ յայտնել խորին շնորհակալութիւն : Այսու ամենայնիւ ինչպէս այս գրուածքը, նոյնպէս և մեր շատ աշխարհաբար գրուածները՝ դեռ չ'պէտք է յուսան, թէ՛ բոլորովին կանոնաւոր և արժանաւոր լեզուով լինին, քանի որ մենք չ'ունինք մի օրինաւոր աշխարհաբար լեզուի քերականութիւն :

Ի վերջոյ պէտք է մի քանի խօսք էլ ասել մեր վերջաբանութեան մասին: Նորանում մի քանի ամբողջ երես մեր կարգացողներին մի քանիսին բաւականին խորթ պէտք է թուին. որովհետեւ չեն ներդաշնակում ամբողջ գրուածի հետ, և երեխանց համար մեծ մասամբ անհասկանալի են: Յիրաւի է փոխելով Մասէի չափից դուրս երկարացրած "Մեարիքական սիստեման" և աննպատակ վերջաբանը, մենք լաւ համարեցինք մեր վերջաբանում մասամբ բաժանվիլ երեխաներին և աչքի առաջև ունենալ գլխաւորապէս մեր բաւականին հասած պատանիները, մեր ուսուցիչները և ծնողները, որոնք անշուշտ պէտք է լինին այս գրքի կարգացողների մեծ մասը: Յայտնի բան է, գրքի ամբողջութեան համար մեք պէտք է պահէինք նոյն պատմութեան կապը և մի և նոյն խօսակցութեան ձևը, այնպէս որ ծնողները, եթէ կամենան, կարող են առանց դժուարութեան այս վերջաբանութիւնից իրանց զաւակներին կարգացնել տալ միայն պատմութեան շարունակութիւնը, թողնելով առանց վնասի միջանկեալ մի քանի մտածողութիւնները. էնդուր էլ այդ միջանկեալ մասը մենք դժերով բաժանեցինք:

Այդ վերջաբանով մենք ցանկացանք, որ մեր այդ հասուն կարգացողները բացի դասատուութեան ձևերը հեշտացնելու դադափարը, որ գլխաւորն է, մի քանի ուրիշ մտքի կայծեր էլ դոնեա՛ ընդունէին այս գրքից:

ԹԱՐԳԾԱՆՈՂ.

ՄԵԾ ՊԱՊԻ ԳԱԼԸ

— Հը տղէք ջան, ի՞նչ բանի էք, էդ ի՞նչի էք էդպէս ունքներդ քաշարել (կիտել). երևի թէ՛ էլի չարութիւն էք արել — վրէններիդ նեղացել են:

— Զէ, Մեծ Պապ, էս օր մեր ուշիթելը* մեզ սլաժենիյէ դաս տուեց — հիմայ պէտք է շինենք. շատ ձանձրալի բան է:

— Սլաժենիյէ՞ն որն է:

— Այսինքն՝ Գումարումն:

— Սլաժենի, մսլաժենի ես չը գիտեմ. բայց գումարումն էնքան ձանձրալի է. ընդհակառակը՝ շատ ուրախ բան է. Հը, դու թմբլիկ** տղաս, ասա՛ տեսներ՝ գիտե՞ս՝ ի՞նչ է Գումարումն:

— Գումարումն է էնպէս գործողութիւն, որով որ . . . որով որ . . .

— Հը, Գումարումն է գործողութիւն, որով որ . . . յետոյ:

— Ախրը Հայերէն դժուարանում եմ, — Ռուսերէն եմ սովորում. այ Ռուսերէնը լաւ կասեմ (շրտապա) Սլաժենիյէ եստ դէյստվիէ, աօ կօփօրօճուիդ նէսկօյկիս դաննիս չիսել սօստավլեայետսեայ նօվօյէ չիսլօ, կօփօրօճ . . .

— Պա՛հ, պա՛հ, պա՛, պա՛, կօփօրեւոյց զատ ուրիշ բան չի լսում քու ասածի մէջ. կասես թութակ ըլես, որ դուրս է տալիս երբ և իցէ լսած բառերը իրար յետևից:

— Վայց, Պապի ջան, մէկ ականջ դիր. այ ի՞նչպէս են շինում Գումարումը. (սաստիկ շրտապա) թուերը գրում են մէկը միւսի տակ, միաւորը՝ միաւորի տակ, տասնաւորը՝ տասնաւորի, հարիւրաւորը՝ հարիւրաւորի . . .

(*) վարժապետ.

(**) Հաստ, լիքը, դեր:

— Օ՛հ օ՛հ հօ՛ հօ՛ — էս՝ էլ վատ — կարծես՝ մանածի (թէլի) կըծիկ ըլի քանդուելի՛ս. յետո՛յ, յետո՛յ:

— Յետոյ, բոլոր թուերը իրար հետ դումարում են — հէնց էս է, որ մարդի ձանձրացնում է:

— Օ՛հ, էս արիֆմէտիկայ հնարողի վեզը տակը մնար (չլինքը կոտորուէր), որ մեզ էսքան չը չարչարէր:

— Արիֆմէտիկէն ո՞րն է:

— Այսինքն՝ Թուարանութիւն:

— Աւրեմն շատ սխալում էք դուք. ափսոս չէ՞, Թուարանութիւնը շատ գեղեցիկ բան է. և եթէ խօսք կտաք խելօք կենալ, ես՝ ձեզ մէկ լաւ պատմութիւն կանեմ Թուարանութեան վերայ. թէ լաւ լսէք էդ պատմութիւնը, անպատճառ դուք էլ կ'սիրէք Թուարանութիւնը:

— Թուարանութեան վրայ պատմութիւն . . . մի՞թէ էդպէս պատմութիւն էլ կայ:

— Այո, մէկը հօ՛ չէ. երկուս, երեք, էլ շատ. բայց ափսոս, որ մեծերը չեն ուզում ձեզ պատմել էդ սիրուն և դուրական*) պատմութիւնները:

— Էդ պատմութեան անունը ի՞նչ է:

— «Նրկու խնձոր ծախող տղերանց», պատմութիւն, և դուք կտեսնէք, թէ՛ ի՞նչպէս էս տղեքը ուրախանում էին, երբ նրանց Թուարանութիւն էին սովորցնում:

— Օ՛հ, Մեծ Պապ, ափսոս, մենք չըպէտք է կարողանանք քեզ լսել, որովհետև յետոյ ժամանակ չի մնալ սլաժէնի շինելու: Շուտով վիչխտանի պիտի սկսենք ուչիթելի մօտ:

— Տօ դէ՛ կորցրէք ձեր էդ սլաժենին, վիչխտանին. խեղճ տղէք, ախր՛ր դուք ի՞նչ պէտք է իմանաք ձեր ուչիթելիցը, երբ Ռուսերէն շնորհքով չէք հասկանում: Այ, ես՝ ձեզ միւսնոյն բանը ուզում եմ պատմել Հայերէն լեզուով, մեր մայրական լարբառով, որ բէյիններդ (ղլուխներդ) բան մանի, խելքերդ լուսաւորվի, մտքերդ բացվի՝ մարդ դառնաք, և ո՛չ թէ բթանաք, յիմարանաք օտար, անհասկանալի բառերը անգիր անելուց: Էս օր՝ ձեր վարժապետը ես եմ, լաւ ազանջ դրէք ինձ. սկսում եմ:

(*) Հանոյաւիան:

ԵՐԿՈՒ ԻՆՉՈՐԱԾԱԻ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏՄՈՒԹԻԻՆԸ

առաջին մաս

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԱՄԱՆՍԿՈՎ եղել են երկու խնձորածախ տղերք: Նրանց կնքահայրը, որ շատ բարի ու զիտուն մարդ է եղել, ընծայել էր նրանց մի մեծ այգի՝ գեղեցիկ խնձորի ծառերով: Եղպէս խնձորենիք ոչ ով չէր տեսել. նոքա ամբողջ տարին պտուղ էին տալի, և նոցա բերած խնձորները բոլորովին իրար նման էին: Էս էն բազարի խնձորների պէս չէին՝ որոնց մէկը՝ մեծ, մէկը՝ փոքր, միւսը՝ ջլորած, որթնած. այ էս պատճառով էլ մեր մրգավաճառները լաւ լաւ խնձորները միշտ կողովների (սարաթների) երեսին են շարում. իսկ տակը թողնում են մանրամունքը, որ ի՛նչ է, բոլ մուշտարի (գնող) մօտ գան. բայց իմ ասած խնձորները էն տեսակ լաւ ու իրար հաւասար էին, որ ջոկել ջոկջկել էլ չէր հարկաւոր. հէնց ասես թէ դրուստ մէկ կալապոտից էին եղել դուրս եկած:

Հիմայ՝ դուք ինքներդ մտածեցէք թէ՛ իմ ասած փոքր տղերքը ի՞նչ հեշտութիւնով պէտք է իրանց ծախսը անէին. Մօտ տեղերի երեխերը մեր խնձորածախներին տեսնում էին թէ չէ՛ իսկոյն վազում էին ամենը իրանց մօր մօտ, ու շուտով խնձորի առուտուրը բացվում էր. ձեռք էր որ մրտնում դուրս էր գալի կողովներից՝ առանց կասկածանաց առանց ջոկջկելու:

Մեր երկու տղերքը էս կերպով շատ փող էին աշխատում (օգուտ էին ստանում) ու լաւ ապրում էին իրանց համար: Նրանք էլ աւելի բաղդաւոր կը լինէին, եթէ իրար մէջ վիճարանելու (հիւճաթ) առարկայ չունենային:

Մեծը՝ որ մի հասարակ բարեսիրտ տղայ էր համարձակ ու հաստատ նայուածքով, կարմիր թշերով, լէն ու քիչ ծումրուած ձեռներով, — մեծը՝ ասում եմ, իրան շատ բաղդաւոր ու հարուստ էր համարում, միայն էն ժամանակը՝ երբ վեր թափած խնձորները ժողովում էր միատեղ ու կազմում էր մի մեծ խնձորի կոյտ (դէլ), որտեղ որ տեսնէր մի խնձոր՝ կը թռչէր տեղիցը ու խնձորը կ'ըբերէր, կը ձգէր իրա կիտած տեղը : Էստուր համար փոքր եղբայրը նրա անունը դրել էր Ռէֆ — վերա :

Փոքր եղբայրը՝ բարակ, գոյնը քիչ թուած, երեսահարքը՝ կասկածոտ ու խորամանկ, աչքերը՝ կապուտ, մատները մեծ ու կակուղ, և դէմքը մի փոքր սուր ձևի էր (սլօշօղ) : Սա միշտ վախենում էր զանազան պատահմունքներից, և միայն այն ժամանակը հանգիստ էր լինում, երբ զիտեր թէ՛ իրա կայքը այսինքն խնձորները զանազան տեղերում են պահւած : Պատահում էր, որ եղբայրը մէկ ուրիշ գործի էր լինում կամ մէկ ուրիշ տեղ էր մտիկ տալի, մէկ էլ տեսնեա՝ նա վաղում էր դէզի մօտից, թոցնում էր խնձորները ու թաքցնում էր իրան յայտնի պահանոցներում : Հէնց էս խաղի պատճառով նա արժանացաւ մի բաւականին վատ անունի, այն է՝ Բաժանասէր : Էս անունը նրան տուել էր խեղճ Ռիփ — վերաուր՝ սաստիկ նեղացած ժամանակը, երբ մի անգամ խնձորները ծախելուց յետ եկած՝ չէ գտնում ո՛չ մի խնձոր դեռ առաւօտեան ժողոված շինած դէզից :

Չեղ պէտք է ասել, որ էս ժամանակներումը Թոմասնոսիան ասած բանը չեն զիտեցած եղել՝ թէ ի՞նչ է, Ու էս երկու եղբայրքն էլ, նրա միջից, ի հարկէ ո՛չ մէկ խօսք չէին խմանում :

Նրանք զիտէին մատներով համրել մինչև քոսը : Տասը որ անցնում էր, նրանք էլ բան չէին հասկանում. նրանց վէճը տաքնալու մի պատճառն էլ էս էր : Երբ Ռիփ — վերաուր դարտակում էր փոքրի պահանոցները՝ մեծ դէզ շինելու համար, փոքրը միշտ բողոքում էր, թէ՛ հաշիւը ուղիղ չէ գալի : Երբ Բաժանասէրը քանդում էր մեծ դէզը՝ փոքրիկ կուտակներ շինելու, բաժան բաժան անելու համար, մեծը երդում կրակ էր ուտում, թէ՛ խնձորները պակասել են, թէ՛ ճանապարհին վեր է թափել, ու ո՛չ մէկը նրանցից չէին կարողանում, ո՛չ մեծ դէզի, ո՛չ փոքր դէզերի, խնձորների հաշիւը խմանալ՝ համրանք չ'զիտենալու պատճառաւ. էդպիսի հանգամանքներում նրանց գլուխը խառնուփնթոր էր լինում :

Նրանց բաղդիցը՝ մէկ երեկոյ նրանց այցելութեան եկաւ իրանց քոյր Աննամարիկը, որ կենում էր իրանց խոհեմ, խելօք կնքահօր կնոջ հետ. էս աղջիկը ինքն էլ շատ խոհեմ էր երևում. գեղեցկադէմ, շնորհալի, ասից մինչի գլուխը մարդի գրաւում էր : Աննամարիկը այդի չէր ստացել,

որ խնձորներ ունենար ծախելու. բայց դրա փոխանակ՝ կնքամէրը նրան էնքան ոգի էր ազդել, էնքան նրա խելքը միտքը բաց արել, որ ամեն հանգամանքներում նա գտնում էր մէկանց՝ ինչ որ անելու էր, որքան էլ բանը դժուար լինէր ուրիշների համար:

Սա որ տուն եկաւ, Գիւի — վերադու Բաժանասէրը իրար վերայ սաստիկ գոռգոռում էին մի խնձորի դէզի առջև, որ սենեակի կէսը բռնել էր:

— Ես քեզ չ'ասի՞, խնձորը պակասել է, ասում էր մէկը. ես շատ խնձոր էի մօտ արել, հիմայ ո՞ւր է, էնքան չէ մնացել:

— Ես քեզ ասի թէ դիւի տեղն է, գոչում էր միւսը, ապա տե՛ս՝ թէ ուրիշ տեղ էլ խնձոր կայ:

Վէճը էս ընթացքով շարունակվում էր առանց վերջանալու. ամեն մէկը կրկնում էին միևնոյն բանը հարիւր անգամ:

— Շատ հեշտ է ձեզ համաձայնեցնել, ի՞նչու էք կո՛ւմում, ձայն տուեց Աննամարիկը, խնձորները համբէցէ՛ք, պրծանք զնա՛ց:

— Ե՛ր է բանը որ մենք առաջուց չ'համբեցինք, ասեց փոքրիկ հպարտը:

— Բանն էն է՝ որ մենք ասանկե աւելի համբէլ չը զիտենք, ասեց, առանց ամաչելու մեծը:

— Տասնից աւելի համբանք չ'զիտէք . . . կացէք, մի ուրիշ հնար կը գտնենք էդ դժուարութիւնից պրծնելու. (Տի փոքր փոքր անեցայ յե՛ս) կուղէք, ես ձեզ ցոյց տամ, որ աստ թուով ի՛նչքան որ խնձոր ունէք՝ համբել կարողանաք:

— Օհ, սիրելի Աննամարիկ, ի՞նչքան պէտք է պարտաւորացնես մեզ, ասեց հաստիկ կարմրագէմը, ուրախութիւնից վեր վեր թռչելով ու քրոջ թշերը պաշալչելով:

— Տեսնե՛նք, ի՛նչպէս պէտք է հրամանքդ էդ բանը կատարես, ասեց կապուտ աչերը՝ կասկածոտ դէմքով:

— Շատ խորը կամ դժուարահասկանալի բան չէ. գնացէ՛ք բերէք տոպրակները (քսակներ), արկղիկները (ղութիներ), ու ձեր մեծ քթոցները (կողովներ):

Մոռացայ թէ ձեզ ասեմ, որ սրանց հանգուցեալ հայրը այգեպան էր. և ողորմած հոգի մայրը դեռ կենդանի ժամանակը գնում էր միշտ զիւղերը բաւթա, քեօպ ու զանազան թելեր ծախելու: Ասածներիցս կիմանա՞մք, որ տանը տոպրակներ պակաս չը պէտք է լինէին այգու համար սերմեր պահելու, նոյնպէս էլ շատ քառանկիւնի (զեօրդ զիւլի) սնտուկներ զանազան թելեր զատեր դնելու համար, որ մօրից էր մնացել. քթոցների մասին էլ թէ կամիք իմանալ՝ նրանք զիտութեամբ վեց հատ մեծ մեծ

կողովներ էին շինել տուել, որոնք լցնում էին խնձորներով ու բռնում էին փոփոխակի իրանց իշի վրայ երկու կողմից:

Երբոր բերին ինչ որ հարկաւոր էր, Աննամարիկը Ռիփ — վերառին դարձաւ՝ Տօւրակներից մէկը վերցրով, ու տասը խնձոր համրես թէ չէ, ամենը միատեղ դի՛ր էդ տօւրակի մէջ, ու բերանը պինդ կապի՛ր:

Հրամանը իսկոյն կատարվեցաւ:

— Դէ՛ հիմի էդ տօւրակը տո՛ւր եղբօրդ, ուրիշը վեր ա՛ռ, ու էդպէս շարունակաբար լքցրու ու յանձնէ՛ նրան մինչև խնձորներիդ հատնելը:

— Թէ իմ բանս միայն էդ պէտք է լինի, ես շուտով կը կատարեմ, կը պրծնեմ, գոչեց մեծը ուրախ ձայնով:

Եւ սկսեց լքցնել տօւրակները խնձորներով, ամենի մէջ տասը տասը հատ: Մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը, տասը. մէկ, երկու, երեք էլի մինչև տասը ջրի պէս գնում էր:

Շուտով փոքրը ձեռին ունեցաւ տասը հատ լիքը տօւրակ:

— Տօւրակներիդ դի՛ր արկղիկներից մէկի մէջ, նրան ասաց Քոյրը: Տո՛ւր ինձ լքցրած արկղիկը ու շարունակէ՛ միւլնոյնը անել, քանի որ ձեռիդ տասը տօւրակ մէկից կունենաս:

Աննամարիկն էլ որ տասը արկղիկ ստացաւ փոքր եղբօրից, զգուշութիւնով դարսեց տասն էլ քթոցների մէկի մէջ: Կսպէս ուրախ ուրախ շարունակում էին ամենքն իրանց բանը, մեծը՝ տօւրակներ տալով, փոքրը արկղիկներ, իսկ քոյրը՝ արկղիկները դարսելով տաս ու տասը հատ քթոցների մէջ. մէկ էլ Ռիփ — վերառը ձէն տուեց:

— Ընդ ամենը մնացել է վեց խնձոր, էլ տօւրակը չի լցնել:

— Ես էլ ասեց Բաժանասէրը, արկղիկ էլ չեմ կարողանում լքցնել, միայն երեք տօւրակ ունիմ ձեռիս:


— Ես էլ ասեց Աննամարիկը, եօթը արկղիկից աւելի չունիմ, քթոցները կը մնան. նրանցից միայն հինգ հատն եմ լքցրել: Գործն էլ աւարտվեցաւ. հիմայ դէ՛հ համրենք:

Ամենից առաջ մի շարքում դրեց հատ հատ խնձորները, յետոյ՝ տօւրակները, յետոյ՝ արկղիկները, էլ յետոյ՝ քթոցները:

Աչքաբաց փոքր աղջիկը շատ ուրախ էր. բայց տղեքը դեռ չէին հասկանում՝ բանից ի՞նչ պէտք է դուրս գայ, ու նրա վրայ մտիկ էին տալի զարմացած դէմքով:

— Տեսնո՞ւմ էք հիմայ՝ մենք ի՞նչ արինք: Ամեն մէկ տօւրակում կայ տասը խնձոր, ամեն մէկ արկղիկում՝ տասը տօւրակ, ամեն մէկ քթոցում՝ տասը արկղիկ: Արդէն դուք կարող էք՝ հանդարտ, առանց գլխացաւան-

քի—համրել, ինչքան որ խնձոր ունէիք ձեր դէղումը. ու տասը համրանքից էլ աւելի հարկաւոր չի լինիլ:



Վիճիկները

Աւելիները Տարակները Խնձորները

Չորօրինակ. դուք ունիք առաջուց՝ վեց խնձոր. ահա՛ էտեղ: Յետոյ՝ եօթը արկղիկ, (ամեն մէկն էր ասք տօպրակ.) վերջը՝ հինգ քթոց (որոնց ամեն մէկը միւսնոյն է թէ՛ր ասք արկղիկ), չիմի թէ կամենաք՝ շատ հեշտութիւնով կը գտնէք ձեր հաշիւը:

— Նիսի - վերաոր ուրախութիւնից չէր դիտում, ի՞նչ անէ. բայց՝ Բաժանասէրը դեռ բաւականացել չէր:

— Ե՛հ, թէ՛ որ տասը հատ էլ քթոց լցնուէր, էն ժամանակը, ասաց նա մի փոքր հեղնական ձևով:

— Քթոցներն էլ կ'զարսէինք տասը տասը հատ մեծ սայլերի վրայ:

— Տասը հատ սէլն էլ որ լքցուէր, յետոյ:

— Ե՛ն էլ կը դարսէինք նաւերի վրայ:

— Թէ՛ տասը հատ նաւն էլ լքցուէր:

— Օ՛հ, զուխս տարար եղբայր պատուական, դեռ շատ ժամանակներ պէտք են, որ դու տասը մեծ նաւի հարկաւորութիւն ունենաս խնձորներդ լքցնելու համար:

Փոքր գոռոզը չէր ուզում կօտրուի:

— Ե՛, թէ որ համրելու լինէինք, ասենք՝ շատ ձիաններ, կրկնեց նա, էն ժամանակը՝ ի հարկէ՛ տասը ձին հօ՛ջը պէտք է մի փոքր տօպրակի մէջ դնէինք, տասը ձիով լի տօպրակը՝ մի սնտուկի ևայլն:

— Ա՛յ, էդ խելօք մտածեցիր. ըզորդ որ՝ մէկ ուրիշ հնարք էլ պէտք է գտնուի, որ ասէն քան ի՞նչ կուզէ լինի, մարդ կարողանայ համրել էնպէս, ինչպէս որ նոր համրեցինք խնձորները:

— Նայց, միտքս մէկ բան եկաւ: Արի՛ք, էդ վեց խնձորը, որ կանէ վեց անգամ մէկ հատ, վեց մասոր անուանենք:

Ամեն մէկ տօպրակը, որ իրա մէջ ունի տասը խնձոր, անուանենք ասանասոր՝ այսինքն տասը ունեցող. մեր երեք տօպրակը կանեն ուրեմն՝ երեք ասանասոր:

Ամեն մէկ արկղուցը, որ ունի որսալը որսորդացի կամ (Միւնոյն է) որսալը որսանաւոր, անուանում ենք մէկ խօսքով հարիւրաւոր, ուրեմն մեր եօթը սնտուկը կանէ եօթը հարիւրաւոր:

Տասը հարիւրաւորն էլ անուանելով մէկ հազար, մեր հինգ քթոցները էն ժամանակ կասվին հինգ հազար:

Ուրեմն՝ հիմի մենք ունինք՝ հինգ հազար եօթը հարիւր երեք տասնաւոր վեց էլ միաւոր. էդքան ինչ ունինք. ի՛նչ որ կուզէք՝ խնձոր, տանձ, էշ, ձի, քար, փէտ, էդ համրանքները ամենի համար մնում են Ֆիւնոյնը:

— Էս անդամը Բաժանասէրը էլ չը կարողացաւ չը խոստովանիլ իրա յաղթվիլը:

— Իրաւի՛ կրկնեց նա, ասածիդ պէս ամեն բան կարելի է համրել ու հաշուել: Ապրիս Աննամարի՛կ, էս օր դու մեզ շատ օգտաւէտ բան սովորցրիր:

— Անուշի՛կ Աննամարիկս, ասաց Դիփի — վերաոր, ես ի՞նչքան բաւական եմ հիմայ, որ տեսնում եմ և իմանում եմ մէկ անդամից թէ՛ որքան խնձոր ունինք տանը: Բայց ես ինքս ինձ լաւ դիտեմ, էս ժամին որ աչքիս առաջին՝ էլ չը տեսնեմ տոպրակ, արկղիկ, քթոց, խկոյն բոլոր հաշիւը մտքիցս կերթայ, կը մոռանամ. ուրեմն չե՛ս կարող արդեօք մէկ հնարք էլ գտնել, որ մեր արած հաշիւները, համրանքները միշտ մտքերս մնան:

— Ի՞նչ կայ, ասեց փոքրը դեռ չսպասած քրոջ պատասխանին, դրժուար հօ չէ՛ թղթի կամ պատի վրայ միշտ նշաններ անել, զորօրինակ տասը խնձոր ունիմ՝ կը նշանակեմ հսպէս.

|||||||

երեք տասն ունեմ՝ հսպէս.

||||||| ||||||||| |||||||||

— Օ՛հ, դու իմ միտքը մէկ բան քցեցիր՝ ասաց մեծը ծիծաղելով, չը գիտեմ ո՞ւմ մօտ էր անցեալ օրը լսեցի թէ՛ Օսմանցուի մէկ քանի քաղաքներում և առհասարակ էն կողմերի ռամիկ տեղերում՝ ղահվաչիք որ խանութներում ղահվայ (սուրճ) են ման ածում, — քանի՛ թաս տալիս են, է՛նքան կաւիճով կամ գործլով (ածուխ) խաղիր են քաշում խանութների շեմերի կամ պատերի վրայ՝ որ չը մոռանան. էնտեղի շատ վաճառականներն անդամ, մանաւանդ փունչիքը, որ մեր (այսինքն իմ ու քու) օրին են, ուրիշ հնարք չը գիտենալով՝ էլի մեզ պէս, իրանց պատերը էդ կերպ գծելով սեւացնում են ու խարաք անում, էնպէս որ անծանօթ մարդ

որ պատահում է, կարծում է թէ դրանց շնորհի, պատերի զարդարանքն էլ էդ է: Բայց դու հասկանում ես, որ էդ կերպիւ չէ կարելի շնորհքով հաշիւ տեսնել, մանաւանդ գործը շատ կերկարանայ: Ախր թէ տասը հազար խնձոր կամ մանէթ համրելու լինինք, մէկ մտածի՛ր թէ՛ քանի՞ պատեր, քանի՞ երես թղթեր պէտք է էդ նշաններով լքցնենք:


Տղէքն որ էսպէս երկար խօսում էին. վիճում էին, Աննամարիկը էդ ժամանակը լաւ միտք արաւ, քննեց բանը՝ ու սկսեց:

— Լաւ, լաւ, հանդարտեցէք սիրելիք: Ես՝ էս ժամիս Ձեզ էդ դժուարութիւնից էլ կազատեմ, եթէ դուք ինձ ուշքով ու մտքով ականջ դնէք:

Վերառաւ յետոյ մէկ կաւիճի կտոր՝ գծադրեց տախտակի վրայ հետեւեալ թուանշանները.

1 2 3 4 5 6 7 8 9
 մէկ, երկու, երեք, չորս, հինգ, վեց, եօթը, ութը, ինը.

— Եթէ ամենից վերջը՝ ասաց նա, մնում է ձեզ մէկ խնձոր, դուք պէտք է դրա դէմ դնէք առաջին թուանշանը. եթէ երկու՝ կ'դնէք երկրորդը. էսպէս պէտք է շարունակվի մինչև իննը: Մեր խնձորների հաշուով մնում է վեց հատ, դրէք վեցերորդ թուանշանը. ահա սա է 6: Երեւոյնով դէմ գրեցէք երրորդ թուանշանը—3: Եօթը աւելնե՛լե՛լ դէմ՝ գրեցէք եօթներորդը—7. և հինգ քթոցների դէմ՝ հինգերորդը—5:



Էդ ձեզ կանէ՛ 5736:

— Ձեզ յայտնի է, որ առաջի նշանը աջ կողմից՝ ցոյց է տալի հասարակ յորնե՛րէ, կամ թէ կ'ուղէք՝ ասենք, մասորնե՛րո՛ւ. երկրորդը՝ դէպի ձախ գնալով՝ ցոյց կտայ տուրակները կամ տասնաւորը. երրորդը՝ արկղիկները (հարիւրաւոր). չորրորդը՝ քթոցները (հազարաւոր): Աւրեմն թէ ուզենաք շուտ ու կարճ գրել խնձորների թիւը, պէտք է լաւ մտքով պահէ՛ք հազարի թուանշանը ո՞ր կարգումը՝ ո՞ր տեղումն է գրվում (չորրորդ տեղում՝ դէպի ձախը գալով), հարիւրինը ո՞ր տեղում (երրորդ կարգում), տասնաւորինը ո՞ր տեղում (երկրորդ), միաւորինը ո՞ր տեղում (յառաջին՝ աջ

կողմից). զորօրինակ, դու Բաժանասէր — ջան, ի՞նչպէս պէտք է գրես կարճ նշաններով վէց հազար — իննը հարիւր — չորս հազար և երեք հար հինգերեկ թիւը:

Բաժանասէրը առաւ կաւիճը ձեռք ու սկսեց գրել յառաջ՝ 6, յետոյ՝ 9, յետոյ՝ 4, յետոյ՝ 3, բոլորը իրար յետևից. երբ ամեն նշանը իրատեղին յարմար կարգալ սկսեց, դուրս եկաւ՝ իրաւի՛ վերի ասած թիւը՝ այսինքն՝

6943.

Աննամարտիկը դուրսեց Բաժանասէրի շուտով բանը հասկանալը, նորա սրամտութիւնը, ու շարունակեց էլ լաւ հասկացնելու համար:

— Ասածներիցս տեսնում էք՝ որ մեր գիտեցած իննը թուականները (1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9,) ամեն մէկը առանձին առանձին իրա բռնած տեղին յարմար կարող է նշանակել մէկ, կամ տասը, կամ հարիւր, կամ հազար. զորօրինակ հետևեալ թուումը,

11111

Քէլք առաջին տեղում աջ կողմից, ինչպէս կայ, մէկ հատ է նշանակում. երկրորդ տեղում նրանից դէպ ի ձախ կողմը՝ տասն անգամ աւելի է այսինքն հասնաւոր է դառնում. երրորդ տեղում միւսնոյն նշանը տասն անգամ աւելի է երկրորդից, այսինքն տասը տասնաւոր կամ հարիւրաւոր է դառնում. չորրորդ տեղում՝ տասն անգամ աւելի է երրորդից — տասը հարիւր (կամ մէկ խօսքով) հազար՝ և այլն, երկուսը, երեքը և այլն:

Աւրեմն՝ ինը համրանքով էն որ՝ դուք հիմայ կարող էք համրել, ի՞նչքան որ խնձոր ձեզ պատահի, թէգուզ սայլերով, թէգուզ նաւերով, թէգուզ էլ աւելի, մէկէլ որ՝ թէ մեծ, թէ փոքր թուերը հեշտ և կարճ նշանակել, գրել թղթի վրայ կամ որ և իցէ տեղ:

— Օ՛հ, էս անգամին շատ երկար պատմեցիր. Բայց՝ ասաց Ասպուտը, որ կը սիրէր միշտ կրիթիքայ անել, բայց՝ մէկ բան չասիր, թէ՛ որ մի շարքում կամ տեղում ըննից աւելի ունենամ, է՛ն ժամանակը ի՞նչ անեմ:

— Ի՞նչ անես. ըննից աւելի ունեցար թէ չէ՛ ասել է թէ՛ տասն ունիս. իսկ դու լաւ գիտես, որ հասը խնձորը կանէ մէկ տոպրակ, հասը տոպրակը կանէ՛ մէկ արկղիկ, հասը արկղիկը կանէ՛ մէկ քթոց:

— Եդ ես ինքս հասկանում եմ, շարունակեց միշտ մտմտացող Բաժանասէրը, բայց ասեմք՝ մէկ կարգում ամենևին զատ չ'կայ, տոպրակ կամ արկղիկ չէ մնացել ո՛չ մի հատ՝ զորօրինակ, ես ունիմ միայն հինգ հազար ու չորս խնձոր: Գիտեմ որ հազարաւորների նշանը չորրորդ տեղում

պէտք է գրուի, բայց հարիւրաւոր ու տասնաւոր որ չունիմ, նրանց տեղերում ի՞նչ գրեմ:


— Ե՞րբ է միայն քեզ դժուարացնում. կ'աց, ես քեզ շուտով բաւականութիւն կը տամ:

Աննամարիկը վեր առաւ կաւիճը ձեռք՝ ու նկարեց մի գեղեցիկ բալորակ


0

— Տեսնո՞ւմ ես էս փոքր բոլորակը, սա՛ էլ մի թուանշան է: Սորա՛ անունն էլ դնենք՝ ոչինչ կամ դարձակ թիւ՝ կամ թէ կուղէք էլ կարճ՝ դրօ ասենք: Ուրեմն էս նշանը որ կարգում որ պատահի, ասել է թէ՛ էնտեղ ոչինչ չկայ, դարտակ է. զորօրինակ՝ քու ասած թիւը էս տեսակ կը գրուի. 5004:

Ուրիշ օրինակ: Ասենք՝ մեր համրած խնձորներից բոլորովին տուրակ չը մնար, ու երբոր դարսենք՝ այ՛ էսպէս կը լինի՝



Եթէ արկղիկ չէ մնացել խնձորների հաշվում, զրօն կը դրվի երրորդ տեղում՝ ու կունենանք օրինակի համար.



Ուրեմն, կրկնում եմ, հարիւրաւոր էլ որ չը լինի, տասնաւոր էլ, միաւոր էլ, հազարաւորի թուանշանը էլի միւլենոյնը և միւլենոյն տեղում կը մնայ. զորօրինակ՝

5000 (հինգ հազար)

Ես բանը հասկանալը՝ փլավ ուտելուց էլ հեշտ է, կնպէս չէ՞ տղէք:

Բայց Գիտի — վերաոր, որ սուր չէր մէկ անգամից էսքան երկար մտածել՝ թուլանում էր քիչ քիչ, ուզում էր հանգստանալ՝ և չէր համարձակում ձայն հանել, որովհետև զգում էր թէ՛ Աննամարիկի պատմածը ամենը՝ ինչքան զիտնալու հարկաւոր բաներ էին։ Բայց վերջը՝ որ էլ չէր կարող ինքն իրան զսպել, դարձաւ Աննամարիկին։

— Բարի Աննամարիկ, ես յատուկ շնորհակալ եմ, որ դու էդքան աշխատում ես, չարչարւում ես. միայն կարծեմ՝ առաջի անգամը էսքանս էլ բաւական է։ Իմ խեղճ գլուխս բոլորովին դադրում է։

Աննամարիկը քիչ մնաց որ բարկանայ։

— Է՛հ, կարծում ես թէ՛ ես չեմ բէզարել, որ էսքան հնարքներ եմ մտածել հաշիւներդ հեշտացնելու համար։ Երբեմն էլ հարկաւոր է, պարոնս, աշխատիլ, նեղութիւն կրել, որ բանը զլխէզուխ հասկացուի. եթէ ոչ՝ ծոյլ տղերանց պէս պատերի տակ կամ կտրների վրայ խաղալով ինչ դուրս կը գայ։ Վերջապէս՝ դու որ չես ուզում, ես էլ կը գնամ՝ մի փոքր կը հանգստանամ. էգուց կը գամ կրկին ձեզ տեսութեան, և էս բանը կը վերջացնենք։

Էսպէս անցաւ Աննամարիկի յառաջի անգամի այցելութիւնը. նա՛ սուրբեցրուց իրա փոքր եղբայրներին Թուարանութեան մէկ մասը՝ Ինչպիսիքիւ և արտասանել ինչ-էլը, որ Լատիներէն մէկ խօսքով ասում են ՆՈՒՄԵՐՍԻՍՍԵՆ, կամ Հայերէն ԹՈՒՍՐԿՈՒԹԻՒՆ։



Թ Ո Ի Ա Ր Կ Ո Ի Թ Ե Ա Ն

Շ Ա Ր Ո Ի Ն Ս Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Միւս օրը Աննամարիկը նախաձաշիկից յետոյ ճանապարհ ընկաւ՝ փոքր եղբայրներին տեսութեան գնալու։ Եղանակն էր գեղեցիկ՝ բարեխառն։ Փոքրիկ թռչունները երգում էին ծառների վրայ, զանազան ծաղիկներ արեգակի ճառագայթներից սիրուն սիրուն բաց էին եղել, և տարածում էին իրանց անուշահոտութիւնը բոլոր ճանապարհի վրայ, բայց բարեսիրտ աղջիկը չէր լսում թռչուններին, չէր նայում ծաղիկներին։ Գնալու ժամանակը նա մտածում էր էլի մի հնարք դտնել՝ աւելի հեշտացնել, աւելի հասկանալի անել էն ամենը, ինչ որ երէկ պատմել էր իր եղբայրներին։ Շատ ուրախ էր, որ ինքը նրանց էդքան օգտաւէտ պիտի լինէր, և հէնց էդ էր պատճառը, որ նա ուրիշ առարկաների վրայ էլ ուշք չեր դարձընում։

Երբ նա հասաւ մի թումբի (բլրակի) գլուխ՝ որտեղից երևում էր իրանց այգին ու տունը, բարձրացրուց գլուխը և տեսաւ իրա երկու եղբայրներին, որոնք ճանապարհի վրայ կանգնած սպասում էին նրան։ Մէկ էլ քրոջը նշմարեցին թէ չէ՝ երկուսն էլ վաղ տուին՝ ինչքան որ ուժ ունէին՝ դէպի նա, աշխատելով մէկը միւսի յառաջը կտրել։ Գիտի՞ վերաոք շուտով յառաջը կտրեց, ու դեռ մէկ քանի քայլ հեռու էր քրոջից, որ հեթեթալով գոռում էր.

— Աննամարիկ, սիրելի Աննամարիկ, քեզանից մէկ բան ունիմ հարցընելու։

— Զէ, ես, ես, յառաջ ինձ լսիր, գոչում էր Բաժանաւորը, որ շատ շտապով մօտ վաղեց, յառաջ ինձ լսիր, թէ Աստուած կը սիրէս։

— Ես՝ ի հարկէ առաջ կը պատասխանեմ նրան, ո՞վ որ յառաջին ե-

կաւ, ասաց Աննամարիկը. բայց ամենից յառաջ՝ հարկաւոր է աւարտել էն, ինչ որ երէկ սկսեցինք: Էս ասելուց յետոյ՝ Աննամարիկը տղերանց ձեռները բռնած՝ կամաց կամաց նրանց բերում էր տուն:

— Ես հիմա հասկացել եմ, սկսեց նա, Բաժանասէրը շատ ուղիղ էր մտածում. իրաւի կարելի է ունենալ ձեր խնձորների թուից շատ աւելի մեծ թուեր, նրանց գրելն էլ դժուար չէ. պէտք է միայն առջևը (ձախ կողմից) ինչքան հարկաւոր է, էնքան թուանշաններ աւելացնել: Բայց նրանց արտասանելու՝ մանաւանդ նրանց լաւ իմանալու համար՝ պէտք է մէկ քանի կարգադրութիւններ անել:

Մէկ, երկու, հինգ, վեց, — ինչպէս երէկ արտասանում էինք, — էդ լաւ է, դրանց ձեռք չենք տալ:

Մէկ հարիւրաւոր, երկու հազարաւոր, հինգ տասնաւոր, վեց միաւոր, այ սրանք շատ երկար են, որ թէոր ամեն մէկ շարքին առանձին անուններ տանք, էդ բոլորովին ձեզ գլխից պէտք է քցէ:

Այ, ես ինչ հնարք գտայ:

Թուանշանները կը դնենք շարքով՝ երեք երեք միատեղ՝ հարիւրաւորները, տասնաւորները, միաւորները. և էս երեք կարգը միշտ պէտք է կրկնուին միևնոյն կերպով:

Հարիւրաւոր Թուանշանի տեղ մենք ասենք հէնց իսկ Բէ-Ը հարե-ր. ուրեմն հիմայ կարճ և հեշտ կարող ենք ասել՝ երկու հարիւր, երեք հարիւր, չորս հարիւր և այլն:

Նոյնպէս էլ տասնաւորները՝ կարող ենք շատ կարճ ու հեշտ արտասանել. զորօրինակ՝ փոխանակ ասելու

մէկ տասնաւոր, կասենք	տասը, ինչպէս էլ ձեզ յայտնի է.
երկու տասնաւոր	քսան,
երեք տասնաւոր	երեսուն,
չորս տասնաւոր	քառասուն,
հինգ տասնաւոր	յիսուն,
վեց տասնաւոր	վաթսուն,
եօթը տասնաւոր	եօթանասուն,
ութը տասնաւոր	ութսուն,
ինը տասնաւոր	իննսուն:

Բոլորը հօ հասկանում էք՝ ինչ որ պատմում եմ:

— Օ, շատ լաւ, գոչեց Դիփի — վերադր:

— Է, մէկ տասնաւորից մինչև միւսը, ինչպէս համրենք, ասաց Բաժանասէրը, որ միշտ պատրաստ էր դժուարութիւններ գտնելու:

— Մէկ տասնաւորից մինչև միւսը, մենք՝ կաւելցնենք էլի՝ մէկ, երկու-
երեք, չորս և շն. զորօրինակ ասան խնձոր ունինք՝ ու մէկ խնձոր էլի, կա-
սենք՝ քսանումէկ:

Նոյնպէս էլ՝ տասնումէկ, տասներկու, տասներեք, տասնուչորս, տասն-
ուհինգ, տասնումբց և շն:

Եղպէս էլ կասվի քսաներկու, քսաներեք, քսանուչորս և շն. երե-
սունումէկ, երեսուներկու, երեսուներեք . . . երեսունիններ. քառասուն, քա-
ռասունումէկ, քառասուներկու . . . քառասունիններ. յիսուն, յիսունումէկ,
վաթսուն, վաթսունիններ. եօթանասուն, եօթանասունուերեք. ութսուն,
ութսունըհինգ, ութսունուիններ և շն. իննրսուն, իննրսունումէկ, իննը-
սունը երկու և շն:

— Օհ, էդ շատ ինձ դուր եկաւ՝ ասաց Ռիփի — վերադր ծափ տալով .
Ես կ'ուզէի քու ասած թուանշանների շարքերը աչքիս առաջը տեսնել՝
յետոյ գործ դնելու համար:

Նրանք արդէն մօտկացել էին տանը. Աննամարիկը իրա ձեռի փէտով,
որ ընծայել էր նրան իրա կնքահայրը, աւազի վրայ գրեց իրար յետեւից հե-
տեւեալ թուանշանները.

324 549 672 815

— Տեսէք՝ ասաց աղջիկը, ի՞նչ պէտք է դուրս գայ, եթէ էդ թիւը կար-
դաք, ինչպէս կայ, երեք, երկու, չորս, հինգ, չորս, իններ և շն. կամ եթէ
տասներկու թուանշանը իւրաքանչիւրը առանձին առանձին անուն ունե-
նայի՞ն, ի՞նչ երկար պէլուխա կը լինէր:

Դրա տեղ՝ մեզ բաւական է առանձին անուն տալ ամեն մէկ մեծ
դասին երեք երեք թուանշանից բաղկացած:

Ուրեմն առաջին դասը պէտք է դասուր անուանենք.

երկրորդը՝ հազար
երրորդը՝ միլիօն կանուանենք
չորրորդը՝ բիլիօն կամ երկիլիօն

Հիմայ կարող էք արտասանել վերեւի մեծ թիւը՝ շատ հեշտ կեր-
պով. Սկսենք ձախ կողմի դասից (հէնց միշտ էդ կողմից պէտք է սկսուի),
որ մեր կողմումն է.

չորրորդը՝ երեք հարիւր քսանըչորս (324) բիլիօն
երրորդը՝ հինգ հարիւր քառասունըիններ (549) միլիօն
երկրորդը՝ վեց հարիւր եօթանասուներկու (672) հազար
առաջինը՝ ութը հարիւր տասներհինգ (815) հատ խնձոր, տանձ,

կակալ, էշ, գոմէշ, ձի, ի՞նչ կամենար:

— Բիլլիօնից յետ ի՞նչպէս պէտք է համարուի, հարցրուց Բաժանասէրը, մէկ քիչ ամաչելով էս անգամին, մանաւանդ որ նրա գլուխն էլ սկսում էր քիչ պտուտ գալ :

— Օ՛հ, էդ քեզ շատ հարկաւոր բան չէ. դու էդ թուերին չես հասնի ոչինչ ժամանակ. բայց թէ կուզես իմանալ, հրամայիր, ինչքան կամենաս՝ տրիլլիօն, կվատրիլլիօն, կվինտիլլիօն, նօնիլլիօն, դէցիլլիօն, — բաւ է քեզ, դէ՛հ հիմայ մէկ երեակայի՛ր քեզու քեզ թէ՛ ինչքան՝ զորօրինակ դէցիլլիօ՛ նր

Բաժանասէրը էս անգամին երկարախօս չեղաւ, ու ամէնքը առանց խօսելու մտան տուն. Հապս մեր Ռիփի — վերադի հարն ի՞նչպէս էր, նա՛ թէ պէտ սիրում էր շատ մեծ դէզեր, մեծ թուեր, բայց՝ էս անգամին նա էլ բաւականին ձանձրացել էր՝ կենտիլլիօններ — մենտիլլիօններ երեակայելուց : Սա՛ երբոր ոտքը տուն դրեց, միտքն ընկաւ թէ՛ ինչո՞ւ համար էր նա վաղում Աննամարիկի մօտ դէպի բլուրը, ու էն թուերը՝ որոնք նրան էնքան զարհուրելի էին, թուան նրա գլխիցը :

Իսկոյն նա սկսեց մի երկար պատմութիւն. Բայց փոքր տղերանց պէս, որոնք ամեն բան շտապով են պատմում, իրա խօսուածքի մէջ էնքան անպէտք բառեր մտցրեց, զորօրինակ յետև, վերջ, բղձրդ, հա՛, կաց ևն, որ քոյրը դժուարութեամբ նրան կարողացաւ հասկանալ :

Ձէզ էդ դժուարութիւնից ազատելու համար, ես ինքս միւլնոյնը կը պատմեմ :

Այ, ի՞նչ էր պատահել :

Առ առօտը կանուխ մեր Ռիփի — վերադը՝ ուրախութիւնից ու իրան շատ դիանական կարծելուց՝ որ համբել գիտէ, արթնցած ժամին մէկանց վեր էր թռել տեղից, ու իրա նոր դիտութիւնը փորձելու համար վազել էր շուտով այգին՝ բեռնաւորված դարտակ տուպրակներով, արկղիկներով, որոնց մէջ լքցրել էր խնձորները կարգով ու կանոնով, ինչպէս սովորել էր, առանց սխալվելու : Բայց երբ դէզի մօտ էր քերում իրա նոր հարստութիւնը ուրախացած ու զուարթ կերպարանքով, մէկ էլ նրա քաջալերված դէմքը՝ ամենախնդճ, յուսահատուածի ձև ստացաւ : Բաժանասէրը, որ միշտ աչքը չորս էր պահում, նա էլ առաւօտը վաղ տեղիցը վեր էր կացել մեծ եղբօր յետևից, ու վազելով դէպի դէզը, մինչ միւսը գնում էր դէպի այգին, սաղ + խոյը դարձաւ էր, ու հանել, տարել էր լիքը «բիւլիներ» չորս տեղում բաժանել՝ աւելի ապահովութեան համար : Յետոյ՝ երկու արկղիկնէն հանել էր տուպրակները, որոնք յետոյ պէտք է միանային քթոցների միջի խնձորներին : Եւ վերջապէս գործ դնելով անցեալ օրվայ առած դասը

իրա եղանակով՝ Բայ էր աբել պահանջներում դրած արտաբնական երեւել, ու խնձորները չորս տեղերում աւելացրել էր էնպէս, որ իրա չորս թիւն էլ Բաճաճ (ամբողջ) լինի: Հարիւրաւորներ էլ կային, տասնաւորներ էլ, միաւորներ էլ, էլ ի՞նչ է պակաս:

Գուք հիմայ կարող էք երեւակայել՝ ի՞նչ ձէն բարձրացրուց Նիւի — վերաոր՝ երբոր տեսաւ իւր եղբոր ազնիւ գործքը. բոլոր Աննամարիկի արածը, շարածը կորան, քանակաճ էր համարում. ու բանն էն էր, որ դժուարանում էր քանդուածը վերանորոգել: Առաջ մեծ նեղութիւն չէր եղբոր արած շարութիւնների դէմ՝ հնարք գտնել. հարկաւոր էր միայն կռանալ, բարձրացնել խնձորները, որ նա ցրուել էր, ու կրկին բերել քցկ Դէզի մէջ: Բայց հիմայ նրա խելքը ցնորվում էր տուրակների ու արկղիկների շատութիւնից, ու վախենում էր թէ՛ բանը գլուխ չը գայ. թէ ինքն իրան էր զսպել, կարելի է՝ որ նա խեղճ փորքին քիչ ծեծէր էլ: Բայց նա ալ նիւ տղայ էր, էդպէս անձոռնի բան դժուար թէ անէր:

956

Բաժանասէրն էլ իրա կողմից յուսահատուած էր, տեսնելով՝ որ քիչ է մնում իրան զրկեն իրա սեպհական համարած իրաւունքից. բաւական չէր նրա համար՝ որ խնձորները կարգով՝ համրանքով դրված լինէին տուրակների ու արկղիկների մէջ. գողերը աւելի հեշտ կարող էին էդ ամենը փախցնել. ուրեմն նա մտածում էր՝ ի՞նչ օգուտ է գիտննալ համրանքով՝ թէ ի՞նչ քան են գողացել, բանն էն է՝ գողանալ չը տալ: Ենդուր էլ նա սովորութիւն էր արել իրա ունեցած չունեցածը բաժանել դէս ու դէն, էդ իրա ուրախութիւնն էր՝ որից զրկվիլը նրան դժուար էր: Եւ նա բացարձակ յայտնեց թէ, բանը՝ որ էդ տեղն է ընկել, այնուհետեւ նա ուզում է բաժանուիլ իրա եղբորից՝ և ունենալ առանձին իրա սեպհական մասը, որին ինչ ուղենայ՝ էն անէ:

Ես պատճառաւ երկուսն էլ դարձան դէպի Աննամարիկը՝ նրանից խորհուրդ և կարեկցութիւն խնդրելու: Բարեսիրտ աղջիկը տեսաւ, որ իրայ առաջվայ արած ծառայութիւնը բաւական չէր, հիմայ էլի նոր աշխատանքներ պէտք է յանձն առնէր: Եդ միշտ էդպէս է պատահում. բայց աղնիւ հոգիքը, բարի սրտերը դրանից չեն նեղանալ. ի՞նչ որ սկսել են, միշտ իրանց պարտաւոր են համարում նրան արդիւնաւոր վերջ տալու:




Faint, illegible handwriting covering the upper portion of the page.

Faint, illegible handwriting covering the middle portion of the page.

Faint, illegible handwriting covering the lower portion of the page.

over

Գ Ո Ւ Մ Ա Ր Ո Ւ Մ Ն



— Սիրելի՛ Ղիսի — վերառ, ասաց Աննամարիկը՝ քիչ միտք անկուց յետոյ՝ երբ երեխէն աւարտեց իրա պատմութիւնը, դու կը ցանկանաս որ բոլոր ասած թուերդ ես միացնեմ, մէկ ամբողջ թիւ շինեմ: դորանից էլ հեշտ բան չը կայ աշխարհքումս:

Առաջուց մէկ տեսնենք՝ ի՞նչ է մնացել մեր երէկվայ թուից, վեր անկաւիճը ու գրիւր:

Բաժանասէրը հնդից մէկ քթոց վերցրել՝ բաժանել է, ուրեմն կմնայ միայն չորս. գրիւր 4

Եօթը արկղներից վերցրել է երկուսը՝ կը մնայ հինգ. գրիւր . . . 5

Երեք տոպրակներից ձեռք չէ տուած. գրիւր 3

Վեց հատ խնձորից էլ նոյնպէս ամենևին չեն դիպել. գրիւր . . . 6

Ես յուսով եմ՝ դու էնքան մոռացկոտ չես, որ միտքդ չը լինի թէ՛ ամեն մէկ կողովն է հազար խնձոր, ամեն մէկ արկղիկը՝ հարիւր՝ և ընդէ՛հ, կարդա՛ գրած թիւդ:

4536

Գու ունիս հիմայ, իրաւի, շորս հազար՝ հինգ հարիւր՝ երեասունը վեց խնձոր. Աւզածդ էս չէր:

— Մէկ անկիւնում էլ ձգած էր խառնիխուռն ու թըր արկղիկ ու ևօթն էլ տոպրակ: Սրանց էլ բերին շարեցին կարգով առաջինների տակը, արկղիկները՝ արկղիկների, տոպրակները՝ տոպրակների տակ: Աւ Ղիսի — վերառը դրեց 87:

- Է՛յ, է՛յ, էդ ի՞նչ ես անում, միաւորների շարքը մոռացել ես:
- Է՛՛՛ Էնտեղ ոչինչ չըկայ, դարտա՛ կ է:
- Հապա՛ ինչի՞ համար էր մեր դատարկանշանը կամ դրօ՛ն:
- Վա՛ց ըղձրդ որ:
- Նա՛՛՛ աւելցրուց մէկ զրօ, էդ արաւ 870:
- Ա՛յ, էդպէս լաւ է: Գնացէ՛ք հիմայ միատեղ, բերէ՛ք ինձ մէկ մէկ Բաժանասէրի կիտուկները, նրանց էլ էս կերպիւ կը շարենք

Առաջինը բաղկանում էր երեք արկղիկից, ութը տոպրակից ու իններ
խնձորից,

Գրուեց 389

Երկրորդի մէջ կար երկու արկղիկ, չորս տոպրակ, ութն էլ խնձոր,

Գրուեց 248


Երրորդը պարունակում էր իրա մէջ մէկ արկղիկ, երեք տոպրակ ու
եօթն էլ խնձոր,

Գրուեց 137

Չորրորդում կար չորս արկղիկ, երկու տոպրակ ու վեց հատ էլ խնձոր,

Գրուեց 426

Անամարիկը կանգնեց Գլխի — վերառի հետ թուանշանների ու շարած
խնձորների մէջ տեղը:



— Հետևի՛ր ինձ մեծ
ուշագրութիւնով, ասաց
աղջիկը, ու տես ինչ որ
ես կանեմ խնձորների
հետ, դու էլ էն արա՛
թուանշանների հետ:


Անամարիկը վեր-
ցրուց մէկ փէտի կտոր ու
դրեց խնձորների տակ, որ
նրանով բաժանի արդէն
հաշուած թուերը էն թը-
ւից՝ որը նա կուզէր հի-
մայ ամբողջ ստանալ.
Խակ տղէն էլ մէկ դիժ
քաշեց 426 ի տակը քրոջ
արածին նմանեցնելու հա-
մար:

4536
870
389
248
137
426

6606

Հիմի համրենք խն-
ձորները, ասաց Անամա-
րիկը. Սկսենք միաւորնե-
րից:

Վեց՝ ինն էլ՝ տասն
ու հինգ, ութն էլ՝ քսան



երեք, եօթն էլ՝ երեսուն,
վեց էլ՝ երեսունը վեց:


Երեսունը վեց կամ
երեք տասը ու վեց: Երեք
տասը կանի երեք տոս-
րակ: Գարտակ տոսրակ-
ները տուր ինձ, որ իրաւի
լքցնեմ:

Նա լցրեց տոսրակ-
ները տասը տասը հատ.
մնացած վեց խնձորը դը-
րեց փէտի տակը՝ միաւոր-
ների շարքում:

Գիփ-վերան էլ զրեց
6 իրա միաւորների տակը:
— Էս երեք տոսրակը
որ ձեռներումս է սրանց
էլ համրենք միւս տոս-
րակների հետ:

Երեք տոսրակ՝ երեք
էլ (վերեւից)՝ կանի վեց,
եօթն էլ՝ տասնը երեք,
ութն էլ՝ քսան ու մէկ,
չորս էլ՝ քսան ու հինգ,
երեք էլ՝ քսանութը,
երկու էլ՝ երեսուն:

Հատ բարի. երեսուն
տոսրակ՝ տաս տաս հատ
առած մենք կարող ենք
երեք սնտուկ լքցնել:
Նա լքցրեց երեք դար-
տակ սնտուկ. և որովհե-



տե Աննամարիկին ոչինչ չէր մնում փէտի տակը դնելու տոսրակների շար-
քում, Գիփ - վերան էլ նոյնպէս իրա տասնաւորների տակ զրեց 0:
— Սկսե՛ք սնտուկները. ահա՛ երեք սնտուկ որ ձեռներումս ունիմ (երե-
սուն տոսրակի տեղը):

Երեք՝ հինգ էլ (վերևից)՝ կանի ութը, ութն էլ՝ տասնուվեց, երեք էլ՝ տասնը իննը, երկուս էլ՝ քսանումէկ, մէկ էլ՝ քսաներկու, չորս էլ՝ քսանուվեց, Բսան սնտուկը տաս տաս հատ լքցրեց երկու քթոցի մէջ, մնացած վեց սնտուկը դրեց փէտի տակը սնտուկների շարքում:

Գիփի—վերառն էլ դրեց վէջ իրա հարիւրաւորների տակը:

Սնտուկներից դուրս եկաւ Երի— Բոց, չորս էլ՝ որ ունէինք առաջուց, էդ կ'անի վեց:

— Գրի՛ շուտով քթոցների տակը 6. Գիփի — վերառ ջան, օգնէ ինձ սընտուկները փէտի էս կողմը բերելու:

— Ի՞նչքան ունենք հիմի:

Վեց քթոց, վեց սնտուկ, (տոպրակ չ'կայ) ու վեց խնձոր:

Տեսնենք քու թիւը:

6606. Ճշմարիտ, վեց հազար՝ վեց հարիւր՝ վեց խնձոր ունինք:

Ահա՛ քեզ մի գործողութիւն, որ գիտենալը իմ կարծիքով վատ բան չէ, մանաւանդ քեզ համար:

— Էս գործողութիւնը ի՞նչպէս անուանենք:

— Ինչպէս սիրտդ ուզումէ. բանին լաւ մտիկ տուր, դու ինքդ անունը կ'գտնես: Զորօրինակ՝ լաւ հասկացար թէ՛ ի՞նչ գործ արինք հիմայ:

— Ի՞նչպէս չէ. մենք Գո-մար-է-լու-մի քանի մանր թուեր իրար հետ, ու շինեցինք մէկ մեծ թիւ՝ այսինքն՝ մենք համրեցինք Բէլ ուր կ'երազ մեր խնձորները՝ և իմացանք՝ բոլորը միատեղ ի՞նչքան կ'անի:

— Ուրեմն կարող ես էդ արած բանդ, էդ գործողութիւնը անուանել Միաւորումն. բայց, եթէ ինձ ահանջ դնես, ես քեզ խորհուրդ կ'տամ անուանել մեր հին լեզուի բառով, այն է՝ Գո-մար-է-լու-մի, էդ աւելի լաւ է ցոյց տալի բանը: Ու եթէ պատահի քեզ էլի մէկ քանի թուեր միաւորելու, դու կարող ես ասել թէ՛ գումարումես այդ թուերը:

— Հապա էն մեծ թիւը, որ ստանուամենք վերջումը, ի՞նչպէս անուանեմ:

— Էն էլ, թէ կ'ուզես, անուանիր Գո-մար կամ Ընդամենը. էնդուր որ տուած մանր թուերը ամենը նրա մէջն են պարունակվում, նրա մէջն են հաշուած:

— Տրված թուերին ի՞նչ ասեմ:

— Տված թիւ-

կամ թէ՛ հարցնումեմ քեզ, ի՞նչու համար են էդ թուերը:

— Գո-մար-է-լու-մի համար:

— Ուրեմն դու էլ անուանիր նրանց լաւ ևս Գո-մար-է-լու-մի-եր, կամ կարճ ասել՝ Գո-մար-է-լու-մի:

ԲԱՐՉՈՒՄՆ ԿԱՄ ՀԱՆՈՒՄՆ



Բաժանասէրը բոլոր ժամանակը, երբ եղբօր գործողութիւնը շարունակվում էր, լուռ ու մունջ կացել էր:

Երբ վերջացաւ բանը,

— Նօրաթն իմն է, ասաց նա: Պարոն Դիւի — վերադր ինչ որ կ'ուզէր՝ ստացաւ. քայք պէտք է որ իմ կամքս էլ կատարուի. չէ՞ որ խնձորները ինձ էլ կ'պատկանին:

— Բաժանասէր եղբայր, քիչ խելօք մնաս, ի՞նչ կըլի, սկսեց, Գումարողը: Սիրելի՛, դու տեսնումես, Աննամարիկն ու ես ի՞նչ աշխատանք կրեցինք մեր բոլոր ունեցած չ'ունեցածի ընդամենը կամ գումարը գտնելու համար. էլ ո՞ւր ես ուզում բոլոր արածներս քայքայել անխաղաղասէր մտքով:

— Թո՛ղ, ի՞նչ կ'ուզի՛ անի, մէջ ընկաւ Աննամարիկը: Եդ երկուսիդ համար էլ լաւ կը լինի. եդ կերպով քիչ քիչ ձեր միջլից վէճը կը վերանայ. Ուզածդ ի՞նչ է, բաժանասէր ջան, ասա՛:

Ես կ'ուզեմ իմ փայ խնձորները՝ քսանը հինգ արկղիկ, քսան ու հինգ տոպրակ, քսան ու հինգ էլ հատ խնձոր: Բայց ես կ'ցանկամ նոյնպէս իմանալ, իրաւի եդ քա՞նն է իմ բաժինը, արդե՞ք ուղիղ եմ հաշուել, թէ չէ՞:

— Ի՞նչ ծիծաղելի թիւ առաջ բերիր, այ տղայ: Լաւն էն է թէ որ զրել կ'ուզենք, կարգի դնենք եդ թիւը. զորօրինակ,

Քսան ու հինգ խնձորը կ'անի երկու տոպրակ ու հինգ խնձոր, զրի՛ 5՝ միաւորների կարգում:


Քսան ու հինգ տոպրակդ էլ կ'անի երկու արկղիկ ու հինգ տոպրակ, առաջվայ երկու տոպրակն էլ հետը, կ'անի՝ եօթը տոպրակ, զրի՛ 7՝ տասնաւորների կարգում:

Քսան ու հինգ արկղիկն էլ կ'անի երկու քթոց ու հինգ արկղիկ. սրան միացնենք տոպրակներից ստացած երկու արկղիկը, կ'ունենանք եօթը արկղիկ, զրի՛ 7՝ հարիւրաւորների կարգում:

Երկու էլքթոյ ստացանք արկղիկներից, զրև 2՝ հաղարաւորների կարգում:
 Աւրեմն էդ կլինի 2775, որ դու ուզումես: Իսկ մենք ունինք 6606
 խնձոր: Երկու թիւն էլ զրէ՛ փոքրը մեծի տակ, ու լաւ նկատի՛ (մտիկ տուր),
 ինչ որ ես կ'անեմ:

Աղջիկը տուեց Բաժանասէրի ձեռք մի կտոր ածուխ, կանգնացրեց
 նրան էնպէս, ինչպէս որ առաջ նրա եղբայրն էր:

Նա զրեց երկու թիւն էլ, ու երբ տեսաւ թէ՛ քոյրը խնձորների
 տակին մէկ փէտ զրեց, ինքն էլ իրա թուերի տակ մէկ զիծ (խաղ) քաշեց:



Աննամարիկը՝ փէտի ու
 խնձորների միջոցում դար-
 տակ տեղ էր թողել:

Տեսնումե՞ս, ասաց
 աղջիկը, դարտակ տեղը
 ցոյց տալով, ես պէտք է
 2775 խնձորները դնեմ
 էդ տեղը ու պէտք է հե-
 տեարար վերևի խնձոր-
 ներից դուրս բերեմ, հա-
 նեմ էնքան խնձոր, ինչ-
 քան քու թիւն է ցոյց
 տալիս. ինչ որ մնայ՝ ես
 էն պէտք է դնեմ փէտի
 տակը, դու էլ պէտք է
 զրես քու խաղիդ տակը,
 ինչպէս որ առաջ Ղիսի -
 վերառը անում էր:

Էս ասեց ու վեր ա-
 ոււ նա վեց խնձորը:

— Դու սրանցից ու-
 ղումես հինգը էս զլխից:
 Ահա՛ քեզ, էն մէկ խնձո-
 րը՝ որ կ'մնայ, կը գնայ
 փէտի տակը:

Բաժանասէրը զրեց 1
 միաւորների տակ:

6606
 2775
 —
 3831

— Յետոյ, քեզ պէտք է եօթը տասնաւոր: Մենք, ինչպէս տեսնումես
 աասնաւոր՝ այսինքն տոպրակներ չունենք վերելումը, բայց ունենալը դժուար
 չէ: Ենտեղ կողմումը կայ վեց հատ արկղիկ տոպրակներով լիքը. ուրեմն
 նրանցից մեկը ես կարող եմ, քեզ պէս, դարտակել. մէկ արկղիկի մէջ
 կայ տասը տոպրակ, եօթը քեզ, կմնայ երեքը: Տես հիմայ հաշիւը ի՞նչ
 կարգի ընկաւ:

Աղջիկը մնացած երեք տոպրակը դրեց փէտի տակ, և Բաժանասէրը
 դրեց Յ՝ իրա տասնաւորների տակ:

Հիմայ ես քեզ պէտք է տամ եօթը հարիւրաւոր, կամ եօթը արկղիկ:
 Մենք ունեինք առաջ վեց արկղիկ, և որովհետեւ էս բոպէիս մէկ արկղիկ
 դարտակեցի, վերցրի, ուրեմն հիմայ ունինք միայն հինգը: Հինգ արկղիկով
 քու եօթը չեմ կարող տալ լիովին (էդ հօ՞ հասկանումես, — ախրը դու եօթն
 ես ուզում, իսկ ես ճշմօ հինգն ունիմ). սրա համար ես վեր կ'առնեմ մօ-
 տի քթոցներից մեկը՝ էլի կը դարտակեմ: Մէկ քթոցից՝ դու էլ լաւ դի-
 տես, կը ստանամ տասը արկղիկ, կ'աւելացնեմ առաջվայ հինգի վրայ՝ կլի-
 նի տասնու հինգ արկղիկ, եօթը քեզ կը տամ՝ կը մնայ ութը արկղիկ. էն
 էլ փէտի տակը դնենք: Բաժանասէրն էլ դրեց Տ՝ հարիւրաւորների տակ:
 Մնաց քթոցները: Մենք վեցիցը մէկ քթոց դարտակեցինք, մնումէ ինձ հին-
 գը: Հնգից էլ երկուսը քեզ եմ տալիս, ուզածիդ համեմատ, կմնայ փէտի
 միւս կողմը դնելու միայն երեք քթոց: Օգնիր ինձ քթոցները էս կողմը ան-
 ցրենք:

Բաժանասէրը շտապելով դրեց Յ իրա հազարաւորների տակ, ու իս-
 կոյն քթոցները քուրոջ հետ դրին նշանակած տեղը:

— Աւրեմն քու պահանջածը առնելուց յետոյ, այ ինչ է մնում Պիփի —
 վերառին, երեք քթոց, ութը արկղիկ, երեք տոպրակ, մէկ էլ խնձոր: Տես-
 նենք հիմի քու թիւը:

3831: Աւղիղ էգպէս է: Արկնումեմ, Ղիփի — վերառին մնումէ՝ երեք
 հազար, ութը հարիւր, երեսուն ու մէկ: Աւրեմն 2775 խնձոր պահանջե-
 լով՝ դու լաւ միտք չարիւր խնդճ Բաժանասէրս, թէ եղբօրդ քունիկից ա-
 ւելի խնձոր պէտք է մնայ:

— Թէ բանը դրանից կախուածէ, ասեց մեծը, որը սիրումէր ճշմարտու-
 թիւնը, ես նրան կը տամ ի՞նչ որ ինձ աւելի կը մնայ:

— Ե՛, ի՞նչպէս գիտենանք թէ ուղղակի որքան աւելի է մնում, ասաց
 փոքրը՝ ականջի տակը քորելով:

— Դրանից հեշտը չի լինի: Խնձորներին ձեռք տալ, կարգից հանել հար-
 կաւոր չէ: Միայն թուանշաններով կարելի է բանը վերջացնել. Մտիկ

տո՛ւր, ես հիմայ կը գրեմ փոքր թիւը մեծ թուի տակը, ու սրանից դուրս կ'հանենք առաջինը՝ ինչպէս որ մէկ անգամ արինք:

3 8 3 1

3 7 7 5

1 0 5 6

Սկսենք միաւորներից:

Մէկ հատից, յայտնի բան է, հինգը չենք կարող վերցնել. առնումեմ երեք տասնաւորներից մէկը (ու Յի վերայ կէտ եմ դնում, որ մտից չը քցեմ թէ մէկը հանել եմ). մէկ տասնաւորից ես ստանում եմ տասը միաւոր, մէկ էլ կայ, էդ կանի տասն ու մէկ. որից ես հանումեմ հինգը, կ'մնայ վեց (6):

Երկու տասնաւորներից, որ մնումէ, չեմ կարող հանել եօթը տասնաւոր. մէկ հարիւրաւոր, որ կ'անի տասը տասնաւոր, իբր փոխ եմ առնում 8 հարիւրաւորներից, և աւելցնելով էդ երկուսի վրայ՝ կ'ունենամ տասներկու տասնաւոր՝ դորանից հանում եմ եօթը կը մնայ 5

Մենք ունինք հիմայ վերելը միայն եօթը հարիւրաւոր, պատճառ՝ որ մէկը ութից վերցրինք, շինեցինք տասնաւոր, ուրեմն՝ եօթը եօթից հանենք, ոչինչ չէ մնում. գրենք 0:

Աւերջապէս՝ երեք հազարից ես հանում եմ երկու հազարը, կը մնայ մէկ հազար արկղիկ. թողնում եմ իննը հարիւրաւորների շարքում. էն մէկ արկղիկից ստանում եմ տասը տոպրակ (տասնաւոր), մէկը էլի վերցնում եմ, իննը տոպրակը կ'մնայ տասնաւորների շարքում. մէկ տասնաւորը կը տայ ինձ տասը միաւոր: Ահա էս տասը միաւորից հինգ միաւորը կարող ենք հեշտութեամբ վեր առնել, կը մնայ բոլոր թուից

5995

Ուրեմն 6000ի տեղ՝ մենք էս դիտից կարող ենք գրել այսպէս:

Թէ որ քեզ պատահի ուրիշ ժամանակ էլ էդպէս մէկ թիւ շարած զրօներով, ահա քեզ մէկ հեշտ կանոն. վերցրու 1 զրօներու առաջը դրած թուիցը, էն ժամանակը զրօները կ'դառնան բոլորը 9 մինչև վերջին կարգը՝ որը միայն դառնումէ 10:

Յանկարծ մէկ երկար յորանջմունք լսվեց նրանց մօտի կողմից. էդ Ռիսի—վերառն էր, որ արդէն յոգնել էր:

— Բարի Աննամարիկս, սկսեց նա, վեր ա՛ռ քու խնձորները՝ ու թող տո՛ւր, աստուած սիրես, էդ Մշտահարցին. ժամանակն անցնումէ, իսկ մենք ոչինչ դեռ չենք ծախել էս օր:

— Մէկ բուպակ էլ, կոչեց միւսը: Հարկաւոր է որ Աննամարիկը մի անուն գտնի իմ գործողութեան: Քու գործողութիւնը քեզ համար, իմն էլ ինձ է դուր գալի. կուզէի երկար խօսել էղ գործողութեան վրայ:

— Անունը, ասաց Աննամարը, յայտնի է արդէն՝ Հանոմն կամ Բարձոմն, էնդուր որ՝ էղ գործողութիւնով մենք հանում ենք կամ բարձում ենք (վերցնումենք) մէկ թուից միւսը:

— Իսկ էն թիւը, որ դալիս է գծի տակը, էն ի՞նչպէս:

— Մնացում կամ Մնացորդ, պատճառը որ էդ՝ էն է, ինչ որ մնում է, երբ մեծ թուից հանումենք փոքրը. կամ թէ որ կուզես՝ անուանիր զանազանաթիւն. էնդուր որ՝ ցոյց է տալիս երկու թուի մէջ եղած զանազանութիւնը: Երկուսն էլ ուղիղ անուն են, որը կամենաս՝ դու էն գործ զի՛ր:



ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԻՒՆ

Հիմայ պէտք է ամենն իրանց գործին գնային՝ Աննամարիկն կնքահօրանց տուն, իսկ եղբայրքը խնձոր ծախելու:

Գիւի - վերադր, որ ամուր կազմուածք ունէր, սովորաբար թող էր տալի եղբօրն իշին նստելու, ու ինքն մեծ քթոցը շալակած շուտ շուտ գընում էր իրա ճանապարհը: Նա լքցրել էր քթոցը տոպրակներով, որ աւելի յարմար լինի ձեռաց (պատրաստ) ունենալ տասն տասն հատ, էնդուր որ նա մեծամեծ հարուստ տներում էր ծախս անում:

Բաժանասէրը սկսեց դարտակել իրա երկու քթոցը, որոնք լիքը լիքը լինելով, շատ ծանր էին. նա չէր կարող մէնակ նրանց վերցնել և դնել իշի վերայ: Յետոյ, երբ քթոցները տեղաւորվեցին, սկսեց նա խնձորները խառնիխուռն լքցնել նրանց մէջ, էն մտքով որ առուտուրի ժամանակ՝ մէկ էլ աշխատանք չը կրէ տոպրակի բերան բանալու, և էդպէս բանը ուշացնի. մանաւանդ որ նրա մուշտարիքը (վաճառառու), համարեան, միշտ փոքր տղայք էին, որոնք շատ հազիւ էին առնում տասն խնձոր միատեղ:

Երբ ճանապարհ ընկնելու եղան, Աննամարիկն՝ որ էնտեղ կանգնած մտիկ էր տալիս նրանց գործին, յանկարծ մէկ բան մտածեց. դուք չէք մոռացել, որ նա էլ խնձորի տէր էր դառել, չէ՞ որ նրան էլ ընծայել էին 1056 խնձոր: Առաջ՝ չէր գիտում ինչ անի էդ խնձորները, էնդուր որ դժուար էր նրանց ձեռքով տանել կնքահօրանցը: Հիմայ միտքը եկաւ, որ կարող էր իրա մասն էլ ծախել կամ ծախել տալ, ու էդ կերպով իրա համար փող ունենալ: Փոքր աղ ջիկները շատ ուրախ են՝ երբ իրանց սեփհական բան են ունենում:

Նա հանեց երկու սնտուկ իրա քթոցից, ու մէկնելով դէպ ի տղեքը՝ ասաց.

— Սիրելի եղբայրք, դուք ինձ շատ կը պարտաւորացնէք, եթէ իմ խնձորներս էլ ծախէք. անցեալ օր հրապարակի վրայի խանութներից մէկում ես

տեսայ մի գեղեցիկ ասղաման, այ թէ փող ունենամ՝ մէկ էդ պէտք է գնեմ, մէկ էլ որ ճանապարհիս վրայ մէկ աղքատ խրճիթ կայ, որտեղ ես շատ անգամ հանդիպում եմ, շատ կը ցանկանայի էստեղ տանել մէկ ջուխտնոր կոշիկ փոքր երեխի համար, որի կոշիկները բոլորովին մաշուել են:

Դիւի - վերառը վերցրուց Աննամարիկի օգնութեամբ արկղիկը, ու ըզգուշութիւնով կապեց իրա մեծ քթոցի վրայ:

Էս միջոցում Բաժանասէրը բաց արեց քրոջը պատկանած միւս տոպրակները ու խնձորները, կարկտի պէս թափթափեց քթոցների մէջ, ու նըրանք խառնվեցին իր խնձորների հետ:

— Ա՛խ, Աստուած ջան, գոչեց Աննամարիկը, երբ պրծաւ մեծի հետ ու դարձաւ դէպ ի փոքրը, ա՛խ, էդ ի՞նչ է քու արածդ, Բաժանասէ՛ր. ի՞նչպէս դու պիտի իմ խնձորները զանազանես քու խնձորներից քթոցների միջում:

— Անհոգ կայ, ես մէկ խնձոր կը ծախեմ ինձ համար, մէկ խնձոր քեզ համար, էսպէսով քեզ համար ինչ որ առնելիք լինի՝ մէկ կողմ կը գնեմ:

— Ես դեռ միամիտ չեմ այդ մասին, բայց էգուց կը տեսնենք էլի մեր հաշիւը:

Աննամարիկը ճանապարհ ընկաւ, երկու եղբայրքն էլ գնացին ամենը իրա ճամբէն:

Պէտք է ձեզ ասել, որ էս երկրի փողն էր փոքրիկ, կլոր պղնձի կտորներ, մեր հիմակուայ կօպէքի նման, միայն քիչ բարակ, և անուանվում էր փարայ կամ դրամ և կամ գոօշ. էս գոօշների մէջ տեղը ծակ էին անում թէլի վրայ շարելու համար, թէլը՝ քսակի տեղ էին գործ ածում:

Բաժանասէրը երկու թել վեր առաւ՝ մէկը իրա համար, միւսը քրոջ:

Դիւի - վերառը վերցրեց միայն մէկ թել, որի վերայ պէտք է շարէր բոլոր փողերը, թէ տոպրակ էր ծախել, թէ արկղիկ և թէ քթոց:

Մէկ բան էլ ձեզ պէտք է ասել: Արովհետեւ էս տղերանց խնձորները ամենից լաւերն էին էդ տեղում, և այս պատճառով շատ էլ թանկ էին ծախվում, ամեն մէկ խնձորը՝ ութը գոօշ էր: Էս զինը ամենին յայտնի էր, ու տանտիկիները ո՛չ մի ժամանակ նրանց հետ չա՛ռայ չէին ծեծում: Թէպէտ կինարմատները առուտուրի մէջ երկար խօսել զիտեն, բայց էստեղ հասկանում էին, որ երկար խօսելուց բան չը պէտք է դուրս գայ. էդ խնձորներն էլ էժան չէր կարելի ծախել:

Երբ Աննամարիկը եկաւ միւս օրը առաւօտեան իրա փողն սաանալու, տղեքը՝ երկուսն էլ սաստիկ նեղութեան մէջ էին:

Դիւի - վերառը գիտէր թէ՛ ի՞նչ բան խնձոր է ծախել աղջկայ քթոցից, էնդուր որ յայտնի էր՝ ինչ բան էր պակասել նրա միջից: Բայց չէր կարող

խմանայ թէ ի՞նչ է պարտ իրա քրոջը, էնդուր որ թէ իրա, թէ քրոջ գը-
ռօշները դիտի մէկ թելի վերայ էր խառնիխուռն շարել :

Բաժանասէրը՝ ընդհակառակը՝ լաւ դիտէր՝ ի՞նչ քան փող է դուրս եկել
քրոջը, էնդուր որ նրա գռօշները մի առանձին թելի վերայ էր շարել : Բայց
չէր կարող ասել՝ որքան է ծախել նրա խնձորներից, և որքան գեռ մնումէ
ծախելու :

Առաջ՝ մէկ ամաչում էին խոստովանել իրանց նեղութիւնը, բայց
վերջը բանը բացվեց :

— Լսիր, Աննամարիկ, սկսեց Ղիփի — վերառը — որը քաջ ու կարգով խօ-
սում էր էս անգամին, — քու արկղիկներում մնում է միայն ինը խնձոր, էդ
կանի 91 խնձոր, թէ չեմ սխալվում . ամեն մէկը, ինչպէս քեզ յայտնի է,
աժել է ութն գռօշ . ս'յ գռօշներով թելը, ինչքան որ քեզ կ'ընկնի՝ վեր
սո, դրանից էլ լաւ բան չեմ կարող առաջարկել քեզ :

— Ներողութիւն կը շնորհես. դու կարող էիր ուրիշ հնարք գտնել, խտակ
հաշիւ տալ, որ ես էլ զիտենամ թէ ինձ ուղիղ ի՞նչ քան է ընկնում: Ինչպէս
որ դու չ'ես ուղում, որ՝ իմ փողերիցը քեզ մնայ, էնպէս էլ ես չ'եմ ուզի
քու փողերիցը աւելորդ վեր առնել . ուրեմն՝ ուրիշ հնարք պէտք է գտնենք :

Դու ասիր թէ 91 խնձոր ես ծախել՝ ամեն մէկը 8 գռօշի: Թէ որ ամեն
մէկ հատին տային 1 գռօշ, դու կ'ունենայիր 91 հատ գռօշ . թէ որ 2 տա-
յին, էդ կ'անի 2 անգամ՝ 91 գռօշ . թէ 3 գռօշ տային, կը լինէր 3 ան-
գամ՝ 91 գռօշ ելն: Հիմայ ամեն մէկին տուել են 8 գռօշ, ասել է՝ ինձ կը
ընկնի 8 անգամ՝ 91 գռօշ . դէ՛հ գրի՛՝ վերեւից դէպ ի վայր 91ը ութը ան-
գամ, յետոյ կը գումարենք, կը սլործնինք :

— Ճշմարիտ որ խելօք բան ասիր. ի՞նչպէս ես առաջ չը մտածեցի էդ
մասին

Սկսեց արդէն գրելը :

91
91
9....

— Աացի՛ր, կացի՛ր, դոչեց յանկարծ Աննամարիկը, ես էլ լաւ բան մտա-
ծեցի. էդքան երկար գրել հարկաւոր չէ :

Դու պէտք է 1 միաւորը ութն անգամ գումարես՝ այսինքն մէկ՝ մէկ էլ
երկու, մէկ էլ՝ երեք, մէկ էլ՝ չորս ելն. ութն անգամ էլ պէտք է գումարես
9 տասնաւորը, այսինքն՝ իննը տասնաւոր. ինն էլ՝ տասնեւութն, ինն էլ՝
քսանեւութը ելն: Աւրեմն առաջուց ես կը գրեմ 91-ը, յետոյ կը նշա-

Նակեմ տակը թուով՝ քանի անգամ (մէկ) 1 միաւորը և 9 տասնաւորը պէտք է դումարվի. զօ. 8 անգամ վեր առաւ անուխը ու գրեց.

91

8

...8

Արկնում եմ, 91 թուի մէջ կայ՝ 9 տասնաւոր և 1 միաւոր. տեսնենք առաջ միաւորներէց, յետոյ՝ տասնաւորներէց քանիական դոօշ ենք ստանում:

Աւթը անգամ մէկը, յայտնի բան է՝ կ'անի ութը, այսինքն ճէկ խընձորից մենք ունինք ութը դոօշ:

Մէկ տասնաւորից, որը տասն անգամ աւելի է մէկ հատից, տասն անգամ էլ աւելի ութը դոօշ կը ստանամ, այսինքն 8 տասնաւոր:

Մէկ տասնաւորից՝ որ 8 տասնաւոր ստանամ, իննը տասնաւորից յայտնի բան է, 9 անգամ աւելի պէտք է ստանամ, այսինքն՝ 9ը անգամ 8 տասնաւոր, կամ 8ը անգամ 9 տասնաւոր, էդ միւսնոյնն է:

8 անգամ 9 . . . Գէ՛՛, Գիփ - վերստ, դու էլ Բաժանասէր, 8 անգամ 9 ինչ բան կ'անի:

Տղէքը էս բանի վրայ դուխները քաշ արած մնում էին. աղջիկն էլ տեսաւ որ էդ չին կարող նրանք մեկէն հաշուել:

— Ես կը գտնեմ ինքս, ասաց նա, փոքր ինչ նեղացած, որ իրա հաշիւի մէջ տեղ պէտք է կանգ առնէր:

Աւ համարկով մատների վերայ, նա գրեց քիչ քիչ մէկ շարք փոքրիկ քառակուսիների մէջ հետեւեալ

1	2	3	4	5	6	7	8	9
9	18	27	36	45	54	63	72	81

- Մէկ անգամ իննը իննը
- Երկու անգամ իննը տասն և ութը
- Երեք անգամ իննը քսան և եօթը
- չինգ անգամ իննը քառասուն և հինգ
- Եօթն անգամ իննը վաթսուն երեք
- Ութն անգամ իննը եօթանասուն երկու

— Ահա ես գտայ, գոչեց նա ուրախ ձէնով, 8 անգամ 9 կ'անի 72:

Աւրեմն՝ դու ինձ պա, եւ Գ տասնաւոր խնձորի համար 27 տասնաւոր դոօշ և կամ 720 դոօշ. սրան աւելցնենք 8 դոօշ էլ, որք որ մէկ հատ առանձին ծախած խնձորիս գինն է, ընդամենն կ'անի 728. էդ տուր ինձ և էլ իրարից պահանջելիք չենք ունենալ:

— Օհ, ես շատ բաւական եմ, ասաց Վիտի - վերադր. բայց հասկացրու ինձ մէկ բան էլ. էս բոպպէիս դու ինձ ասացիր թէ՛ Գ անգամ 8, կամ 8 անգամ Գ միևնոյնն է, հաստատ դիտե՛ս որ էդպէս է:

Պատասխանի տեղ՝ Աննամարիկը վերառաւ ածուխի կտորը ու նշանակեց շատ զիծեր էս կերպիւ:

1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1
1	1	1	1	1	1	1	1

— Ամեն մէկ շարքում քանի՞ զիծ կայ:

— Աւթը:

— Քանի՞ շարք կայ:

— Իննը:

— Համբիր էդ գծերը շարք շարք, աջից ձախ գնալով, ի՞նչքան ես գրում:

— Եօթանասուն երկու:

— Վիտես՝ ի՞նչ արիր. դու համարեցիր ամեն 8 զիծը Գ անգամ, էնգուր որ էնտեղ կայ իննը շարք, ամեն մէկը ութը գծից բաղկացած: Ե՛, թէ՛ որ հիմայ համբրես գծերը վերէն դէտ է լայր, մէկ շարքից միւս շարքը իջնելով, էն ժամանակը ի՞նչքան պէտք է ունենաս:

— Էդ ի՞նչ հարցմունք էր, յայտնի բան է, որ էլի եօթանասուն երկու կ'ունենամ, գծերը հօ՛ չեն պակասել, թէ՛ մէկ կողմից համարեմ՝ թէ՛ միւս կողմից, այսինքն թէ՛ լէնքովը (լայնութիւն), թէ՛ երկենքովը (երկայնութիւն), գծերը միշտ կը մնան, ինչքան որ են, էդ ո՛վ չի հասկանալ:

— Ես բոլորովին համաձայն եմ քեզ հետ, որ էդպէս է. համբրելով վերից դէպ ի ցած՝ դու կ'ունենաս ութը շարք՝ ամեն շարքը իննը խաղից կամ 8 անգամ Գ խաղ: Տեսնու՞մ ես ուրեմն՝ 8 անգամ Գը, կամ Գ անգամ 8ը

միւնոյն թիւն է տալիս—72: Կս ամենը կարելի է ամենայն թուի վրայօք՝
Հազար անգամ չորս, կամ չորս անգամ Հազար կ'անի միշտ չորս Հազար.
2 անգամ 3, կամ 3 անգամ 2՝ կ'անի միշտ վեց. ութը անգամ 10, կամ
10 անգամ 8՝ կ'անի միշտ 80 ևլն:

Ուրեմն երկար խօսիլ էլ հարկաւոր չէ. տո՛ւր իմ 728 գոօշը ինձ, ու.
հաւատացի՛ր, որ իրաւի, ինձ էղբանն է ընկնում. ո՛չ աւելի, ո՛չ պակաս.
Հաշիւներս ուղիղ է:



Բ Ա Ձ Մ Ա Պ Ա Տ Կ Ո Ի Թ Ե Ա Ն

Շ Ե Ր Ո Ի Ն Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Գիտի — վերաոր բաց արեց իրա թիւը ու զգուշութեամբ համարեց 728
գոօշը, որ կը պատկանէր իրա քրոջը: Բայց թուելու ժամանակը սորա միտ-
քըն էլ մէկ բան եկաւ: Չեղ յայտնի է՝ որ նա շատ սէր ունէր դէպ ի Բար-
դուհի կամ Գուհարուհի: Յանկութիւնն եկաւ իմանալ՝ ի՞նչ քան արդեօք պիտի
լինի ընդամենը նրա փողը, եթէ իրան հասած բոլոր խնձորները ծախվի:

— Գեղեցիկ Աննամարիկս, ասաց նա քիչ դժուարանալով, ես, կարծեօք,
քեզ բոլորովին պէտք է ձանձրացնեմ. բայց խնդրեմ մէկ աշխատութիւն էլ
կրես ինձ համար: Ե՞նչպէս գիտնեամ ընդամենը որքան գոօշ պէտք է ու-
նենամ՝ եթէ ծախեմ իմ բոլոր 2775 խնձորս:

— Գրի՛ 8 անգամ 2775, ու գումարի՛ իրար հետ:

— Եդ չէ իմ հարցրածը: Ես կ'ուզէի էն կերպ հաշիւ անել, ինչպէս որ
գուն մի քիչ առաջ արիր 91 խնձորի համար:

— Բարի. դու էլ միենոյն խելքը բանացրո՛ւ: 2775 բաղկանում է 2
հազարից, 7 հարիւրից, 7 տասնաւորից և 5 միաւորից: Հիմայ տեսնենք՝
քանի՞ գոօշ տալիս են միաւորները, քանի՞ տասնաւորները, քանի՞ հարիւ-
րաւորները, քանի՞ հազարաւորները, և յետոյ բոլորը իրար հետ կը բարդենք,
կը գումարենք, — պրծանք գնաց:

Նա գրեց կրկին

2775

8

Սկսենք գիտից 8 անգամ 5 . . . : Օհ, ահա էլի դժուարութիւն
չէ, եղբա՛րք, բանը մէկ անգամ կարդի պէտք է զննել, որ յետոյ ջրի պէս
զնայ :

Նա սկսեց շինել մի փոքրիք աղիւսակ, որ անուանվումէ հիմայ Պիւ-
թագորեան աղիւսակ. Պիւթագորոսին ես բան չիմ կարող ասել, որով-
հետեւ նա էլ իրա գետրայ շատ հնարագէտ մարդ էր, և նրանից էլ մեզ լաւ
լաւ գիւտեր է մնացել . բայց ես կարծեմ, որ մինչև նա ծանօթ չը լինէր
Աննամարիկի հաշուահմուտ մտքի հետ, նա դժուար թէ կարողանար առան-
ձին էգ գիւտերը անել :

1	2	3	4	5	6	7	8	9
2	4	6	8	10	12	14	16	18
3	6	9	12	15	18	21	24	27
4	8	12	16	20	24	28	32	36
5	10	15	20	25	30	35	40	45
6	12	18	24	30	36	42	48	54
7	14	21	28	35	42	49	56	63
8	16	24	32	40	48	56	64	72
9	18	27	36	45	54	63	72	81

— Տեսնում ես, ասաց աղջիկը Պեի - վերառին, երբ գրեց պրծաւ, հի-
մայ նոր մէկը դժուարութիւնից աղաւտուեցինք. մատդ զի՛ր Տերտրտ քա-
ռակուսու վրայ ձախ ձեռից դէպ ի աջը, ու ցած բեր վերեւից վար կարգով

Մինչև 5-րորդ շարքը, էդ շարքի մէկ ծայրումը հէնց տեսնվում է 5ը, մասինդ կանգնած տեղը դու կը գտնես 40: Աւ իրաւի էդքան կ'անի 8 անգամ 5ը:

Էս կերպ էլ պէտք է վարուել միւս պատահած թուանշանների հետ: Շատ լաւ կ'անէիր, եթէ մի փոքր նեղութիւն կրէիր, էդ աղիւսակի միջի թուերը կարգով և հասկանալով անգիր անէիր, կամ թէ չէ՝ մէկ անգամ էլ է դու ինքդ էդպէս աղիւսակ շինէիր. առաջուց մէկ քառակուսի քաշէիր, յետոյ միջի գծերը, յետոյ կարգով թուերը գրէիր, ու էդ կերպ կարելի է սրանք լաւ միտքդ մնային. էն ժամանակ դու ամեն թիւ պէտք է կարողանայիր հաշուել ոչ ովի չը հարցրած:

8 անգամ 5՝ էդ կ'անի ուրեմն՝ 40: Աւրեմն քու հինգ հատ խնձորը քեղ կը տան էս գլխից 40 գոօշ, գրենք 40

8 անգամ 7 (նոյի՛ր աղիւսակի վերայ)՝ էդ կ'անի 56: Քու 7 տասնաւոր խնձորները քեղ կը տան 56 տասնաւոր կամ 560 գոօշ, գրենք 560

Հարիւրաւորների թուանշանը միւսնոյն 7ն է, ուրեմն 7ն էլի՛ 56 է. բայց էս անգամիս կ'ունենանք 56 հարիւրաւոր կամ 5600. գրենք 5600

Վերջապէս՝ 8 անգամ 2 հազարը կ'անի 16000. գրենք . . . 16000

Հիմայ բոլորը գու մարենք և կը գտնենք 22,200

Աւրեմն՝ դու քսաներկու հազար երկու հարիւր գոօշի տէր պէտք է գտնաս՝ եթէ ծախես քու երկու հազար եօթը հարիւր եօթմանասուներ հինգ խնձորները:

— Օ՛, Աննամարիկ ջան, ես քու խեղճիդ մատաղ, գոչեց Պիսի — վերաւոր, որը քրոջ վերայ էս անգամը վերջին աստիճան զարմացել էր. ի՞նչպէս դու էդ կերպ հեշտ ու շուտ գտնում ես էդպիսի դժուար բաները:

— Մի քիչ համբերի՛ր: Նորից կրկնենք էն: Աս մէկ հնարք էլ մտածեցի, որ աւելի շուտ գործը կատարվի:

Նա գրեց

2775
8

22200

Հիմայ լաւ լսի՛ր իմ ասածներին:

Երբ ես կրկնում եմ 8 անգամ միաւորները, 8 անգամ տասնաւորները, 8 անգամ հարիւրաւորները, 8 անգամ հազարաւորները, — ես ստա-

նում եւմ հեռեարար՝ միաւորներ, տասնաւորներ, հարիւրաւորներ և հազարաւորներ, միեւնոյն կարգաւ՝ որով գրւումեն առհասարակ թուերը: Աւրեմն՝ էդ կարգով, փոխանակ առանձին առանձին գրելու միաւորներից, տասնաւորներից և շն ստացած թուերը, կարելի է բոլորը մէկ անգամից գումարել և ժամանակ չը կորցնել:

Զորօրինակ, 8 անգամ 5 միաւորը կ'անի 40 միաւոր, կամ 4 տասնաւոր ուղղակի: Գումարի մէջ, յայտնի բան է, էլ միաւոր չը պէտք է լինի, էնգուր որ եթէ միաւորներից — միաւոր չը մնայ — 50 տասնաւորները, հարիւրաւորները էլ միաւոր չեն տալ:

Աւրեմն՝ առանց երկրայելու գրում եւմ՝ 0 միաւորների շարքում:

8 անգամ 7 տասնաւորը կ'անի 56 տասնաւոր: Սրանց վրայ աւելցնում եւմ 4 տասնաւոր էլ, որ ստացանք միաւորներից, կ'ունենանք 60 տասնաւոր կամ 6 հարիւրաւոր: Գումարի մէջ տասնաւոր էլ չը պէտք է լինի: Գրում եւմ կրկին՝ 0 տասնաւորների շարքում:

8 անգամ 7 հարիւրաւորը կ'անի 56 հարիւրաւոր: Աւելցնում եւմ 6 հարիւրաւորն էլ, որ ստացանք տասնաւորներից, կ'ունենանք 62 հարիւրաւոր, կամ 6 հազար 2 հարիւրաւոր:

Գրում եւմ 2՝ հարիւրաւորների շարքում:

Աւելցնապէս 8 անգամ 2 հազարը կ'անի 16 հազար, աւելցնենք 6 հազարն էլ, որ ստացանք հարիւրաւորներից, կ'ունենանք 22 հազար, կամ 2 հազար 2 հազար և երկու հազար:

Գրում եւմ 2՝ հազարաւորների շարքում, 2 էլ տասը հազարի շարքում, և էս կերպ գտանք մէկ անգամից քու 22 200 գոօշները:

— Իէհ, հիմայ բաւակա՛ն է, Աննամարի՛կ. Ես էլ չեմ կարող քեզ բան հարցնել, թէ չէ՞ դուխս տակնուվրայ պէտք է լինի միայն ասա՛, խնդրեմ՝ ի՞նչպէս անուանենք էս գեղեցիկ գործողութիւնը, որ գումարումին շատ մօտիկ է, և գումարումից էլ հազարապատիկ վեր է ու գեղեցիկ:

— Մենք կ'անուանենք նորան Բազմապատկութիւն. պատճառը որ նրանով մէկ թիւը բազում անգամ (բազմապատիկ) աւելանում է թիւը:

— Ասածդ ես լաւ չը հասկցայ:

— 8 գոօշում կայ 8 անգամ 1 գոօշ, այնպէս չէ՞: Լա՛ւ 22 200-ը էլ կայ 2775ը 8 անգամ, այսինքն՝ էնքան անգամ ուղղակի, որքան 8-ը գոօշ կայ, կամ միաւոր թէ գուզես:

Աւրիշ խօսքերով բազմապատկել մեկ թիւը միւսով, ասել է՞ գրտնել մի երրորդ թիւ, որի մէջ մտնում է առաջինը էնքան անգամ, որքան միաւոր կայ երկրորդի մէջ: շրջեն. 2 անգամ 5՝ կանէ 6:

Յի մէջ կայ 3 և 3, էնդուր որ 2ի մէջ կայ 1 և 1, կամ թէ միւսնոյնն է՝ վեցի մէջ կայ 2, 2 և 2, էնդուր որ 3ի մէջ կայ 1, 1 և 1: Հասկանումե՞ս:

— Քիչ ու միչ: Բայց վերջը լաւ որ մտածեմ, կարելի է որ ինձու ինձ հասկանամ. միայն ի՞նչպէս անուանենք առաջին, երկրորդ, երրորդ թուերը:

— Առաջինը՝ զորօրինակ 2775, կ'անուանվի Բազմապարկեալ, այսինքն՝ էն թիւը, որը բազմապատկումէ:

Երկրորդը էստեղ Տն է, կ'անուանվի Բազմապարկիչ՝ այսինքն՝ որը որ բազմապատկումէ միւսին:


Եւ կամ լաւ կը լինի, եթէ էդ երկու թիւն էլ Բազմապարկիչ ասես, պատճառը որ երկուսն էլ առանց փոփոխութեան կարող ենք իրար վերաբազմապատկել:

Իսկ երրորդ թիւը, մեր 22200ը, կ'անուանեմք Արտաբրէալ կամ Արտաբրէալ, այսինքն՝ սրա մէջ ստացուել է կամ դուրս է եկել էն, ինչքան որ մէկ թիւը կրկնվել է միւսով:

— Տէր Աստուած. Աղջի՛ դու ո՞րտեղից գտնումես էդ անունները:

— Գիտես՝ ի՞նչ կայ. մեր կնքահայրը ինձ սորվեցրել է մեր հին գրաբառ լեզուն, էն որ ժամումը կարգումեն Տիրացութիւն, Տէրտէրները, Աւարդապետները: Ա՛խ, քիչ մնաց թէ մտանայի. էդ հին լեզուով գրումեն մինչև հիմի էլ մեր էն խորը, շատ խորը, մինչև անգունդը խոր, գիտնական վարժապետները, որոնց շատ քիչերն են հասկանում իրանցից զատ: Ա՛յ, էդ լեզուից ես էլ եմ կրքեմն կրքեմն բառեր՝ ո՞ճեր գործ ածում, չը գիտեմ ձեր առաջին հպարտանալու համար, թէ նրանցով էդ զիպուածներում բանը աւելի պարզ դուրս բերելու համար — վերջինը հաւատալի. — ես կարող եմ էդ ձեզ վկայել: Հիմի իմացար քո ասած անունները ես ո՞րտեղից եմ առնում — մեր հին լեզուից, բայց նա ձեզ խորթ չը պէտքէ թուի, որովհետեւ թէև հին է, բայց էլի մերն է — ու մեր աշխարհաբար լեզուն էլ նրանից է առաջ եկել կարգով կանոնով, և դեռ էնպէս չէ կատարելագործվել, ինչպէս հինն էր. Բայց յոյս կայ որ՝ քանի շատ խօսինք, զրենք աշխարհաբար լեզուով, նա էնքան աւելի լաւ պէտք է լինի վերջը և ամենին հասկանալի (էս զլխաւ որ բաննէ): Գրաբարիցն էլ անց կը կենայ, միք վախել

Faint, illegible text covering the page, possibly bleed-through from the reverse side. The text is arranged in approximately 20 horizontal lines.



Բ Ա Ժ Ա Ն Ո Ի Մ Ն

— Հապա դու, ասաց Աննամարիկը, դառնալով դէպ ի Բաժանասէրը, տեսնենք հիմի դու ի՞նչքան դուօշ ես բերել ինձ համար:

Փողը համբրեցին, — դուրս եկաւ 688 դուօշ:

— Ես մտածեցի, ասաց տղէն, երբ դու խօսումէիր Վիւի — վերառի հետ: Էլ քու օգնութիւնը ինձ է՛նքան հարկաւոր չէ իմ ծախած խնձորներս հաշիւը գտնելու համար: Ամեն մէկ խնձորի համար ես ստացել եմ 8 դուօշ: Քանի անգամ որ կարողանամ 8 դուրս հանել 688ից, ասել է թէ՛ էնքան խնձոր էլ ծախել եմ: Ուրեմն ինձ կը մնայ մէկ քանի անգամ Բարձում անել՝ ութը ութը հանելով:

Ու կարծելով թէ՛ մի մեծ հնարք գտաւ, իսկոյն նրան գործ գնելու աշխատեց, — դրեց

$$\begin{array}{r}
 688 \\
 8 \\
 \hline
 680 \\
 8 \\
 \hline
 672 \\
 8 \\
 \hline
 \dots 4
 \end{array}$$

— Տօ՛, դիժ տղայ, գոչեց Աննամարիկը, անծուխը նրա ձեռից խլելով, — քանի՞ ժամ ուղումես դու մեզ էստեղ կանգնած պահել: — Արի՛ խելք խելքի տանք մի ուրիշ հնարք մտածենք, որ էդքան չ'երկարի:

— Մենք ունինք Հիմի 688 դուօշ, էնպէս չէ: Եղ բոլոր քու ծախսի Բո-
վանդակութիւնն է կամ Ստացուածն է:

Գորա մէջ կայ՝ ամեն մէկ ծախած խնձորի համար՝ 8 դուօշ, շատ լաւ.

• Ամեն մէկ տասնաւոր խնձորների համար՝ տասն անգամ աւելի, այս-
ինքն՝ 8 տասնաւոր դուօշ:

Ամեն մէկ հարիւրաւոր խնձորների համար՝ ուրեմն պէտք է լինի 8 հա-
րիւրաւոր դուօշ:

Բայց դու ունիս էզտեղ միայն 6 հարիւրաւոր դուօշ: Աւրեմն՝ դու մէկ
հարիւրաւոր խնձոր էլ է ծախել չես. եթէ ծախած լինէիր՝ ակարբ պէտք է
ունենայիր 8 հարիւրաւոր դուօշ և ո՛չ 6 հարիւրաւոր: Հասկանումե՞ս:

Հիմի տեսնենք՝ քանի՞ տասնաւոր խնձոր ես ծախել. դորա համար
մեր 6 հարիւրաւոր դուօշները՝ տասնաւորներ շինենք, կը լինի 60 տասնա-
ւոր դուօշ. 8 տասնաւոր էլ առաջ կար, էդ կ'անի միատեղ 68 տասնաւոր
դուօշ:

Գու էնքան պատշաճօր խնձոր ծախած կը լինես, որքան անգամ 8ը
մտնումէ 68ի մէջ. հասկացա՞ր:

— Հասկացայ, ասեց Բաժանատէրը, էնդուր որ իմ թիկի վրայի ամեն
մէկ 8 տասնաւոր դուօշները նշանակումէ թէ՛ մէկ տասնաւոր խնձոր եմ ծա-
խել և լին:

Ապրիւն. գէ՛հ Հիմի տեսնենք՝ քանի՞ անգամ 8 կայ 68ի մէջ: Յայտ-
նի բան է 8 անգամ: Տե՛ս աղիւսակի վրայ՝ 8 անգամ 8ը կանէ 64. 68ից
հանենք 64ը, կը մնայ 4.

Տո՛ր ինձ էդ 64 կամ 8 անգամ 8ը տասնաւոր դուօշները, ասել է
թէ՛ դու առաջուց ծախել ես 80 խնձոր, յետոյ միւսները:

Հիմի մտում է մեզ 4 տասնաւոր դուօշ, կամ 40. հետեւեալ 8ն էլ
հետը՝ կը լինի 48:

Քանի անգամ 9 մտնի 48ի մէջ, էնքան էլ հատ խնձոր դու ծախած
կը լինես:

Աղիւսակն ի՞նչ է ասում, տես:

6 անգամ 8՝ լինումէ 48:

48ը դուօշը տո՛ւր ինձ, էդ իսկ խնձորի գինն է, ամեն մէկը 8ը դուօշով:

Ել քեզ ոչինչ չէ մտում, և ես գիտեմ հիմայ, որ դու ծախել ես
86 խնձոր, մեր հաշիւն էլ տեղը եկաւ: Աս քեզ տվել էի 100. դրանից
հանէ 86ը, և դու ինձ կը մնաս պարտ 14:

Բաժանատէրը բան չը կարողացաւ ասել, բայց էլի ստիպարար՝ չէր
ուզում կտորիկ:

— Այգապէս մի փոքր թուի հետ ի՞նչպէս 688ը՝ դեռ կարելի է՝ զուլս գալ-
 րայց եթէ ծախած լինէի իմ 2775 խնձորը, և ասենք թէ՛ քեզ բոլորովին
 յայտնի չէր էդ թիւը. ևս պէտք է ստանայի ծախելով խնձորները ութ
 ութ գոօշով, ինչպէս դիտենք առաջուց՝ 22200 գոօշ: Իհհ, տեսնենք էս
 վերջի ահագին գոօշների թուից, — դու ի՞նչպէս պէտք է գտնէիր առաջինը՝
 խնձորներու թիւը, եթէ նա իրաւի քեզ յայտնի չը լինէր:

— Շատ հեշտ է, էլի առաջուայ պէս պէտք է վարուենք: 22200 թուու-
 մը, տասը հազարաւոր գոօշների թուանշանը՝ այսինքն 2ը իրա մէջ, յայտ-
 նի բան է, ո՛չ մի անգամ 8 չունի. դրանից ևս տեսնում եմ, որ խնձորների
 թուում տասը հազարաւոր չը պէտք է լինի, այսինքն մի ամբողջ տասը
 հազարաւոր խնձոր ամենեւին չէ ծախւել:

2 տասը հազարաւորը ևս շինուամե՛հ հազարաւորներ, կը լինի 20 հա-
 զարաւոր, 2 էլ կայ, կանէ 22 հազար:

22ի մէջ 8 մտնումէ 2 անգամ, որ կը լինի 16. էդ 16ը հանենք
 22ից, կը մնայ 6 հազարաւոր:

Աւրեմն ծախւել է 2 հազար խնձոր, որ կանի 16 հազար գոօշ:

Գրենք մէկ կողմից 16000, միւս կողմից 2000

Մնացած 6 հազարը միաւորուած 2 հա-
 բիւրաւորի հետ, կանէ 62 հարիւրաւոր:

62ի մէջ 8 մտնումէ 7 անգամ, որ կը
 լինի 56, և մնումէ 6 հարիւրաւոր:

Աւրեմն ծախւել է 7 հարիւրաւոր խրն-
 ձոր, որից ստացուել է 56 հարիւրաւոր գոօշ:

Գրենք էլի մէկ կողմից 5600, իսկ միւս կողմից 700

6 հարիւրաւորը, որ մնումէ, կը լինի 60
 տասնաւոր: Ել տասնաւոր չը կայ, որ աւել-
 ցենք, էնդուր որ 22200ի մէջ տասնաւոր-
 ների կարգում 0 է:

60ի մէջ մտնումէ 8ը էլի 7 անգամ,
 որ լինումէ 56, և մնումէ 4 տասնաւոր:

Աւրեմն ծախուել է 7 տասնաւոր խրն-
 ձոր, և ստացուել է 56 տասնաւոր գոօշ:

Գրենք մէկ կողմից 560, միւս կողմից . . . 70

4 տասնաւորն էլ, որ մեզ մնումէ, կանէ
 ազդակի 40 միաւոր, էնդուր որ միաւորների
 կարգում էլի 0 է:

40ի մէջ 8ը մտնումէ ուղիղ 5 անգամ:

Ուրեմն ծախուել է 5 խնձոր, և ստացուել է 40 գոօշ:

Գրենք մէկ կողմից 40, միւս կողմից 5

Հիմայ դէ՛հ գումարենք, և կը գտնենք

մէկ կողմից 22200, միւս կողմից 2775:

Ուրեմն մենք գտանք 2775 խնձոր, որ բոլոր զինը կ'անէ 22,200 գրօշ, էս չէ՞ր ուղածդ. թէ կամենաս իմանալ՝ ուղիղ է արդեօք գտածս խնձորներիդ թիւը՝ թէ սխալ, պէտք է 2775ը բազմապատկել 8ով, որ ամեն մէկ խնձորի զինն է (այսինքն 8 գոօշը):

Եւ դու զիտես արդէն ի՛նչ կը ստացվի:

— Իսկ դու զիտե՞ս, Աննամարիկ ջան, ասաց ժպտալով Գիսի—վերաոր, որ բաւականին ձանձրալի բաներ սկսեցիր պատմել, առաջուայ պէս ուրախ չէ անցկենում ժամանակը:

Խեղճ տղէն լաւ կ'անէր՝ թէ ամենեին չէր խօսել:

— Չէնդ կտրի՛ր, գոչեց սրտնեղած Բաժանասէրը. ամօթ չունի՞ս, որ էսպիսի մի օգտաւէտ և հասկանալի գործողութեան մէջ տեղում ուղումես բանը խափանես: Թէ զօրութիւն չունիս հինգ ըոպպէ ուշադրութիւնդ վրէժ պահելու, դնա՛ քեզ համար խաղ արա՛ քու սնտուկների և քթոցների հետ, և թող մենք մեղ աշխատենք: Ախրր ես ուղումեմ բան սովորել, զիտե՞ս՝ թէ չէ:

— Ա՛յ խելօք տղէ՛ն, ասեց Աննամարիկը, ղօչչա՞ղ Բաժանասէրս, ես քեզ շնորհակալութեան տեղ հիմայ ցոյց կը տամ, ի՛նչպէս քու գործողութիւնը աւելի հեշտ կերպով կատարես:

Ու գրեց աղջիկը հետևեալը . . .

22,200	8
16	
" 62	2775
56	
" 60	
56	
40	
40	
" "	

— Լաւ մտիկ արա՛, դու էստեղ ամենը կը գտնես, ի՛նչ որ առաջուց արինք: Մէկ խաղ պէտք է քաշվի վերևից վայր, որ մէկ կողմ՝ ընկնեն դուրս

հանելու թուերը, մէկ խաղ էլ՝ ձախից յաջ՝ Յի տակ, որ զատվի մեր խընդրած 2775 թուիցը:

Նշմարեցիր դու արդեօք, որ 2775 գտնելու ժամանակը՝ առաջուց մենք գտանք հազարի թուանշանը, յետոյ՝ հարիւրաւորի թուանշանը, յետոյ՝ տասնաւորի, յետոյ՝ միաւորի. բայց փոխանակ երկար գրելու՝ 2000, յետոյ 700, յետոյ 70, յետոյ 5, և փոխանակ նրանց մէկ էլ գումարելու, կը գրենք հէնց գլխիցը մի հասարակ 2, և լաւ մտքերս կը պահենք՝ որ հազարաւորի տեղումն է, նրա յետեից կը գրենք իսկոյն հարիւրաւորի թիւը՝ 7 (երբ գտնենք), սրա յետեից էլ տասնաւորների թիւը՝ 7, որ կը լինի երկրորդ կարգում, և վերջապէս՝ 5 միաւոր էլ կը բռնի իրա տեղը. էս կերպով մենք կուենանք 2775, և կը լինի միւսնոյնը՝ 2 հազար, 7 հարիւր, 7 տասն և 5. բայց աւելի կարճ և շատ քիչ տեղ կը բռնի:

Միւս կողմից, ի՞նչի է պէտք, որ գրումենք առանձին առանձին 16000, յետոյ՝ 5600, յետոյ՝ 560, յետոյ՝ 40: Երբոր 16ը ես գրումեմ հազարաւորի տակ, միւսնոյն կարգում. էդ արդէն ցոյց է տալիս, որ 16ը հազար է, էլ երեք զրօ հարկաւոր չէ դնել: Միւսնոյն ժամանակը էդ տեղում հեշտութեամբ մեր ուզած բարձումն էլ կը լինի, օրինակի համար՝ 16ը 22ից, էն 6ը որ դրանից մնումէ, յայտնի բան է, 6 հազար է, էն դուր որ հազարաւորի կարգի տակն է: Եւ երբ որ էդ մնացորդ 6ի կողքումը գրումեմ՝ 2 վերեւի հարիւրաւորների թուանշանը, ես ստանումեմ միւսնոյն ժամանակ 62 հարիւրաւոր, էնդուր որ 2ը հարիւրաւորների կարգի տակն է, էս կերպ շարունակումեմ գործը և տասնաւորների և միաւորների հետ, և վերջումը բոլորովին յայտնի երևումէ թէ՛ էն չորս թիւը, որ իրար յետեից հանումենք 22200ից, բաղկացնումեն զատու էլի 22200, պատճառը որ, երբ վերջի թիւը հանեցինք 22200ի մնացած մասնից, այնուհետեւ էլ բոլորովին ոչինչ չը մնաց:

Ի՞նչ կասես դու էս բանին, ախպէր:

— Ես հասկանումեմ, որ դու էդ ամենը խելօք խօսեցիր. բայց զեռ հարկաւոր է, որ մէկ անգամ ես ինքնս էլ քննեմ առանձին, մէկ էլ կրկնեմ: Գորա մէջ ախրը շատ նոր բաներ կային, էնպէս մէկ անգամից գլխիս մէջ չին տեղաւորվիլ:

— Ինչպէս կ'ուզես, էնպէս արա՛, Բաժանասէ՛ր ջան. ես տեսնումեմ, որ դու խելքով տղայ ես, ամեն բան ուզումես հասկանալ, իմանալ, քննել, քու սեպհական խելքով, և ո՛չ թէ ուրիշի ասածները յիմարաբար կրկնել առանց մտմտալու. ապրի՛ս, էդ ինձ շատ ուրախութիւն է պատճառում: Էիմի էլ բան ունիս հարցնելու, թէ չէ՞:

— Աղջի՛, մինչև հիմայ դու ամեն մէկ գործողութեան մէկ մէկ անուն էիր տալիս. էս իմ գործողութիւնն էլ հալածած մի անուն կ'ունենայ, և կարծեօք, արժում էլ է մի սահմանափակ անուն:

— Հաստ բարի. սորա անունը գնենք՝ Բաժանումն, կնդուր որ սրանով մէկ թիւը կտորւումէ, Բաժանումն էնքան մաս, որքան ժամայ կայ միւս տված թուի մէջ: Աս անգամին, օրինակի համար, մենք 22200ը բաժանեցինք 8 մաս, և ամեն մէկ մասը դուրս եկաւ 2775. և իրաւի էդ թիւը ուժը անգամ միայն մտնումէ 22200ի մէջ, այսինքն՝ էնքան անգամ, որքան միայն որ կայ 8ի մէջ:

— Տեսար, եղբօրդ գործողութեան համար զրարար լեզուից անուններ գտայ, այ քեզ համար էլ:

22200 կ'անուանենք Բաժանելի, պատճառը որ՝ էս էն թիւն է, որը որ բաժանում են:

Տն էլ կը լինի Բաժանարար կամ Բաժանելի. էդ անունը դու չես մտած նայու, որովհետև բաժանելի թիւը՝ քեզ նման բաժանումէր մի ուրիշ թիւ՝ մէկ քանի մաս:

2775ը կ'անուանենք Բանէբոբոբ (Բանորոբ):

— Այո, էդ ի՞նչ ծիծաղելի բառ էր, ամենեւին չեմ լսել, էդ շատ հինը կը լինի:

— Հասկանալը դժուար չէ, Բանէ Երոբոբ բառիցն է առաջ եկել. և ցոյց է տալիս ուրեմն թէ՛ մէկ թիւը միւս թուի քանի երրորդ կամ ո՞ր մասն է:

Աամ թէ կամենումես, կարող ես էդ 2775ը Բանորոբ թիւ անուանել, կնդուր որ ցոյց է տալիս մի թուի որեւիցէ մասը:

— Հա՛ ողորդ, դու էն ժամանակը՝ էն ի՞նչ էիր ուզում գտնել՝ երբ ես քու ձեռից, մտքովդ է, խլեցի ածուխը:

— Տը քանի անգամ է մտնում 688ի մէջ:

— Էդ հօ՛ բաւականին երկարէր, բայց ի՞նչ պէտք է անելիք դու 22200ի հետ, ասա՛ տեսնեմ, քանի՞ ժամ դու պէտք է կորցնէիր Տը առանձին առանձին հանելով՝ էդ ահագին թուիցը: Դէ՛ հ, հիմի շնորհակալ եղիր ինձանից, եթէ ոչ, դու 2775 անգամ շահածս պէտք է շինէիր, պա՛, պա՛ պա՛, պա՛ ա . . . :

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՐՈՐԴ:

Մ Է Կ Ք Ա Ն Ի Խ Օ Ս Ք Է Լ

ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒԹԵԱՆ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄԻ

Վ Ե Ր Ա Յ

— Փայք քեղ, Աստուած, ասեց հանդ քաշկով Դիւի—վերաոր, կարծեօք, բանը վերջացրիք՝ թէ գեռ չէ՞:


— Օհ, շուտով պատասխանեց Բաժանասերը, դու ես էսպէս՝ այսինքն Դիւի քու օգուար սիրող տղայ ես եղել, ուրիշին ինչ կըլի՞ ըլի, գուցար քարը . . . : Ես ախրը ոչինչ չէի ասում, երբ քու սիրած գործողութիւնը անուամէիք, որ աւելի երկար էր: Բայց իմ համար ընդհակառակը՝ քիչ ժամանակ գործ դրվեց, թէպէտ նա աւելի արժուակէր. և նա աւելի գեղեցիկ է, քանք քունը:

— Ահ, ի՞նչպէս կարելի է էդ կերպ բան ասել. Բազմապատկութիւնը միշտ լաւ է քու Բաժանումից: Եւ էնքան խառը բան չէ: Բայց մի բան էլ պէտք է ասել, որ երկուսն էլ ինչքան լաւ լինեն, յառաջուանների պէս զուարճալի չեն: Ամեն բան աչքի առջև էր, ամեն բան տեսնումէինք և աւելի լաւ հասկանումէինք:

— Պահ, ինչ ծոյլ գլուխ է, գոչեց ծիծաղելով Աննամարիկը. հասկանարդու խելքը, միտքը, յիշողութիւնը ի՞նչի համար է, եթէ նա չը քննէ, չը հասկանայ մէկ անգամ տեսած բաները առանց միւս անգամ տեսնելու, էդ ասած խօսքերդ՝ (կարծես) կ'ասես իշի բերնից լսած ըլիս:

Բայց դու որ սիրումես իմ առաջուայ ձեւ, մենք հիմայ էլ կարող ենք սկսել տուրակներից, արկղներից:

Ա. եր առնենք ամեն մէկս 5 խնձոր, 4 տոպրակ և 6 արկղիկ



Ահա մեր երեքի մասն էլ առանձին առանձին կարդաղրվեց, բաւա-
կան ես հո հիմի որ տեսնուամես:

Էդ տեղ կայ երեք շարք, ամեն մէկում 645 խնձոր: Հիմի պէտք է ի-
մացվի թէ ի՞նչքան կը լինի 3 անգամ 645 խնձորը:

Յն է Բաղճատարիկ թիւը, 655ը Բաղճատարիկէն, Էն թիւը, որ հիմա
ուղումենք իմանալ, կը լինի Ստացուածը կամ Արտարբեւը:

3 անգամ 5 կանէ 15. ես հիմի մէկ ուրիշ տեղում պէտք է դնեմ
հինգ խնձորը, իսկ տասը խնձորը արդէն մի տոպրակ է շինում:

3 անգամ 4 տոպրակ կանէ 12. մէկ տոպրակ էլ ձեռիս կայ, էդ էլ
լինի 13 տոպրակ՝ այսինքն՝ 3 տոպրակ և մէկ արկղիկ: 3 տոպրակը դնենք
5 խնձորների էս կողմը, և մէկ արկղիկ ձեռում պահենք:

3 անգամ 6 արկղիկ կանէ 18, մէկ արկղիկ էլ աւելի՛ էդ կանէ 19:
Ահա 9 արկղիկը դրվումեն տոպրակների կողքումը, իսկ տասը արկղիկ կը
դարսվին մի քթոցի մէջ:

Ընդամենը ի՞նչքան եղաւ: 1 քթոց, 9 արկղիկ, 3 տոպրակ և 5 խնձոր:

Գուք լաւ դիտէք հիմայ ինչպէս պէտք է էդ դրվի:

1935

Ահա քեզ Ստացուածը, որ դուրս եկաւ 245ը 3 ուլ բաղճատար-
կելով:

Հիմա բաւական ես:


— Դու իրաւի շատ պարտաւորումես, սիրելի Աննամարիկս. թէ միւս անգամ էլ մոռանամ, էն ժամանակը ի՞նչ կուզես՝ արն:

— Բա՛ Բաժանումը, ասեց Բաժանասէրը, որ շատ քաջութեամբ պահպանումէր իրա գործողութեան իրաւունքները, մի՞թէ՛ չէ՞ կարելի նրան էլ էր ձեռով կատարել:

Անպատճառ: Դու տեսնումես հօ՛ էդ 1935, ոք ես միաւորեցի էս բոսպէիս, թէ կուզես, արի՛ էլի բաժանենք մեր երեքի մէջը:

1935ը կըլլնի Բաժանելին, 3ը Բաժանիչը. իսկ էն ինձորների թիւը՝ որ ամեն մէկը մեզանից պէտք է ունենայ, կը լինի մասնաւորը կամ քաներորդը:

Հիմի էս տեղ կայ մի քթոց Տայն: Ուրեմն՝ շատ յիմարութիւն կը լինի, եթէ կարծենք, թէ՛ ամեն մէկիս մէկմէկ քթոց կընկնի:



Ուրեմն քթոցի միջից հանենք արկղիկները, միւսների հետ կը լինին 19 արկղիկ: Բաժանենք 19 արկղիկ մեր երեքի մէջ, ամեն մէկիս կընկնի 6 հատ՝ և կը մնայ մէկը:

Էդ արկղիկներից էլ հանենք տոպրակները, միւսների հետ կուսնենանք 13 տոպրակ:


Բաժանենք 13 տոպրակը երեքիս մէջ, ամեն մէկս կըստանանք 4՝ և կը մնայ մէկը:

Էս տուրակից էլ հանենք խնձորները, միւսների հետ կը լինի 15 խնձոր (3 անգամ 5 կանի 15 խնձոր)։ Մենք կունենանք ամեն մէկս 5 խնձոր, և ոչինչ էլ չի մնալ :

Մեր բաժանումը ահա կատարեցինք. 1935 խնձորի կոյտը բաժանուցաւ, և ամեն մէկս ստացանք 645 խնձոր : Ահա քեզ Մանուոր թիւը կամ քաներորդը :

Սեցցէ՛ Աննամարիկը, գոչեց Բաժանասէրը՝ ծափ ծափելով ու բախութիւնից : Հիմայ բանը ես բոլորովին հասկացայ : Բայց մենք, կարծեօք, քեզ շատ երկար պահեցինք : Հիմայ հարկաւոր է քեզ ճամբայ ընկնել, որ ճաշին տուն հասնես. իսկ ես շտապումեմ գնալ պատմել մի քանի ընկերներիս՝ ինչ որ հիմայ լսեցի քու շնորհիւր : Էնպէսները կան, որ ինձ լսելիս՝ քիչ մնումէ թէ անկաջները բերանս կոխե՛ն . . . :

Երկու եղբայրք գրկեցին քնքուշութեամբ և համբուրեցին իրանց քրոջը, որը բարովից յետը բռնեց իրանց կնքաւորանց տան ճամբէն՝ և գնաց : Ճամարիտն ասեմ, նրա երեսը էս անգամին կաւ կարմրել էր : Ետը մտածեցէք՝ թէ նա որքան աշխատանք կրեց՝ երբ ախպրտանց հետ էր : Բայց ինչպէս սովորաբար էլ պատահումէ, երբ մարդ մի լաւ աշխատանք կամ գործ անում պրծնումէ, նա իրան զգումէր Էնպէս թեթեւացած, որ գնալիս տեղը՝ կասես՝ թռչումէր փոքրիկ թռչունների ծլվտոցից, քիչ էր մնում թէ պար գար : Ծաղիկները էս անգամին նրան աւելի գեղեցիկ էին երևում և անուշահոտ բուրումէին : Բոլոր շրջակայքը նրան համար ծաղր և ծիծաղ էին հագել, խնդում, ցնծում, ուրախանում : Եւ անցող զարձաղներն էլ՝ որ պատահումէին, կանգնումէին, մտիկ տալի և ասում, «երնէ՛կ դրան, ի՞նչ բաղդաւոր աղջիկ է . . . :



Ե Ր Կ Ր Ո Ր Պ Մ Ա Ս

Գ Լ ՈՒԽ Ի ՆՆԵՐՈՐԳ

ԿՈՏՈՐԱԿՆԵՐԻ ՍԿԻԶԻԸ

ԲԱԺԱՆԱՍԷՐԻ քէֆին քէֆ չէր հասնում: Դիփ—վերառն էլ նրա օրինակից քիչ քիչ սկսեց ուրախանալ: Առաջիկայ դասի փոքր ինչ զրժուարութիւնը, նեղութիւնը՝ Դիփ—վերառը՝ կասես՝ մեկանց մոռացաւ ուրախութիւնից՝ երբ շալակեց իւր սիրելի քթոցը, և զգաց թէ՛ ինչ որ սովորել էր՝ մտքումն է մնում: Մեր երկու Խնձորածախները ուրախ ուրախ գնացին իրանց գործին. բայց պէտք է ասեմ՝ ձեզ, որ էն օրը, համարեա՛, ոչինչ ծախս չը կարացին անել: Եկող գնացողին պատմումէին էն գեղեցիկ բաները, որ Աննամարիկը նրանց սովորցրել էր, և ամեն կողմից նրանց կանգնացնումէին, միւսնոյնը կրկին ու կրկին ասել էին տալի, որ բանը լաւ հասկացվի:

Մի փոքր ժամանակում էս հիանալի զիւտերի համբաւը ամեն տեղ տարածվեցաւ: Ժողովուրդը փողոցներում էս նոր լուրի վրայ էր որ խօսումէր: Ընդհանուր ցնծութիւն էր էլի. կասես թէ՛ վաղուցուայ ամբարիշտ թշնամույն յաղթել էին. և իրաւի յաղթվել էր տղիտութիւնը, որ ամենից վատ թշնամին է մարդիս համար: Ախր, էն ժամանակներում՝ երբ Թուարանութիւն զեռ չը զիտէին, մարդիկ շատ խեղճ դրութեան մէջ էին:

Մէկ բան համարելու ժամանակ՝ պէտք էր մատեներով համարէին. երբ շատ բաներ պէտք է համարէին, բոլորովին հաշիւը կորչնումէին, սկսումէին իրար մեղադրել. և էսպէս համարանքի ժամանակ անպատճառ մի մեծ վէճ էր բացվում, ինչպէս ձեզ յայտն է, պատահեց մեր Խնձորածախների հետ :

Էս դժուարութիւնները անցկացան խելօք Աննամարիկի շնորհքով. բայց ժողովուրդը նրան չէր դիտում և չէր տեսնում, և բոլոր փառքը և պատիւը Ղիփ—վերառին և Բաժանասէրին էր մնում. ու սրանց անունը բերանից բերան ընկնելով հասաւ մէկ օրուայ մէջ էս կրկրի ամեն կողմերը: Յայտնի բան է, էս պատահմունքը էն տեղի թագաւորն էլ իմացաւ, ու իսկոյն ուղարկեց իր զլխաւոր նախարարին, որ գտնի բերէ իրա մօտ փոքր Խրնձորածախներին. նա ամենից առաւել ա՛խ ու վա՛խ կը քաշէր ուղիղ հաշիւ չը գիտնալուն համար: Սա մի բարի թագաւոր էր, շատ սիրումէր իր հպատակներին, որոնց թիւը հասնումէր 26746 ը, ինչպէս նա միւս օրը իմացաւ Աննամարիկի գտած համարանքի միջնորդութիւնով: Մինչև հիմայ նա էսքան միայն գիտէր, շատ կամ քաւկանին հպատակ ունի, բայց թէ ի՞նչքան իսկապէս, էդ նորան անյայտ էր:

Երբ Ղիփ—վերառին և Բաժանասէրին ըրին պալատը, թագաւորը հրամայեց պալատականներին կարգաւ նստել աթոռների վերայ մեծ գահիձումը, և ինքն էլ նստեց իրա գահի վերայ, մէկ կողմից թագուհին՝ միւս կողմից իւր օրդի Օսկարը, որի տասներկու տարին շուտով լցուելու էր: Շուտով բերին մի գեղեցիկ սեաներկ տախտակ, որը որ գանձապետը հաշուատետրի տեղ էր գործածում, և որի վերայ կաւիճը ձեռին գծեր էր անում գանձի բոլոր ելումուտը նշանակելու համար. և դուք լաւ իմանումէք՝ ի՞նչպիսի դժուարութիւն էր էդ նորա համար: Ամենը ուշադրութիւնով (լսումէին) սպասումէին. որովհետև թագաւորը խոստացել էր իրա նշանը՝ պարգևը էն մարդին՝ ո՛վ որ շուտ և լաւ հասկանայ բանը:

Գահիձումը ճանձը թռչէր, ձէներ կխմացվէր, էնպէս որ սուս էին, երբ մեր տղէքը ներս եկան: Նրանք սկսեցին պատմել և բացայայտել թուարկութիւնը, մէկը թուանշաններն էր գրում, միւսը տուրակների, սնտուկների և քթոցների ձևերն էր քաշում. և դասի էս առաջին մասը բոլորը ընդունեցին համաձայն գովասանքներով: Յետոյ տղէքը ամենն առանձին սկրսեցին սովորեցնել փառաւոր ժողովին իրանց սեպհականած գործողութիւնները, Ղիփ—վերառը՝ Գումարումը և Բազմապատկութիւնը, իսկ Բաժանասէրը՝ Բարձումը և Բաժանումը:

Նրանց մէկ քանի անգամ կրկնել տուին, ինչպէս երևումէ, պալատականները բաւականին հաստաղուխ էին: Երբոր վերջապէս նրանք աւարտե-

ցին, թագաւորը դարձաւ դէպի պաշտօտականները, ու հարցրեց երեք անգամ .
 Այլ կամի՞ կարող է ստանալ խոստացած պարգևը : Այլ ով ձեռն չէր տալի .
 Թագաւորը նեղանալու հետ էր, մէկ էլ թագաւորական խոհանոցից մի տը-
 ղայ, որ զլիւնն ականջ էր դնում մի կիսարաց դոնից, վստահութեամբ ներ-
 կայացաւ : Ծիծաղաշարժ տղէն վերջումը Բաժանման վերայ քիչ դժուա-
 րացաւ, բայց բոլոր մնացածը կնպէս լաւ հասկացել էր, որ թագաւորը գրը-
 կեց նրան, համբուրեց, նրան իրա սնական Հաշուարար (անուանեց) շինեց,
 և նրա վզիցը կախ արեց իրա նշանապարգևը :

Ես ձեզ էս ամենը պատմումեմ, որ խնայք թէ՛ ի՞նչ բաներ պատա-
 հեց, ի՞նչ ներգործութիւն ունեցաւ էս երկրումը Քուարանութեան գիւտը,
 էն Քուարանութեան, որ մեր հիմակուայ տղէքը անմեղ տեղը էզպէս ար-
 համարհումեն : Ամբողջ երկու շարած ամեն տեղ միայն էս մասին էին խո-
 սում : Խանութները հրաւիրանքներ էին անում ու խաղումէին «Պումա-
 րումն», կամ «Քարձումն», ձեւարանների ուսումնականները միշտ պարա-
 պած էին Բաղմապատկութիւնով կամ Բաժանումով, և ամբոխը ժողով-
 վումէր նրանց մօտ, ծափահարումէր ուրախութեամբ, երբ որ Ստացուածը
 կամ Մասնաւոր թիւը ուղիղ էր դուրս գալի :

Էս տեղ պէտք է առաջուց ասեմ, որ Բաժանաւորս զգուշութեան հա-
 մար՝ որ չը սխալի իր մեծ գործողութենում, հասարակութեան առաջև
 Բաժանում անելիս չէր վեր առնում որեիցէ գրուին եկած թուեր : Մտքին
 ունեկով Աննամարիկի արածը, Բաժանումը բացատրելու համար, նա միշտ
 էդ գործողութիւնը անումէր առաջուց դուրս բերած Ստացումներէ վերայ,
 որնոր նա բաժանումէր նոյնպէս առաջուց Բաղմապատկելով : Էս կերպով
 առաջուց զիտէր թէ՛ ի՞նչքան պէտք է լինի իր Մասնաւոր թիւը, և շատ
 բնական է՝ որ նորա Բաժանումները ուղիղ էին լինում, ոչինչ չէր մնում
 վերջին Բաժանումը անելից յետը :

Պարոնները, որ մէկ անգամ սովորել էին էդ կերպ գործ կատարելը,
 շատ բաւական էին դեռ : Առաջի անգամները խելքերը գնումէր էդ գործո-
 ղութիւնից՝ չը մտածելով թէ՛ ի՞նչու համար է նա, ի՞նչ նշանակութիւն
 ունի : Երողապէս նա պիտանաւորութիւն չունէր, որովհետև էդ կերպով
 դանումէին մի կնպիսի թիւ, որը որ արդէն յայտնի էր առաջուց, ուրեմն
 էդ՝ իստակ քէֆի կամ անմեղ հետաքրքրութեան բան էր : Առաջինը, որը
 որ սկսեց էդ բանի վերայ մտմտալ և առաջարկել՝ որ պատահական՝ այսինքն՝
 որեիցէ թուերով Բաժանում անեն, բաւականին պարսաւանք կրեց : Նրան
 ասին թէ՛ նա իր խելքին շատ զօռ (ույժ) է տալի, թէ՛ բոլոր բանը պէտք

խարար (փշացնի) անի՝ չը հետեւելով մէկ անգամ ընդունածին կամ աւանդութեանը. նա էլ ձէնը կտրեց, էլ բան չասաց:

Վերջապէս թագաւորը որ ամենից շատ սէր էր ցոյց տալի էս նոր գիւտին, մի օր իրա պայտաւումը մեծ հանդէս ունեցաւ Քուարանութեան համար: Նա ուրախութիւնից չէր դիտում ինչ անէ, երբ իմացաւ իր հպատակների ուղիղ և իսկական թիւը: Դիւի—վերաոր և Բաժանասէրը երեւացին հանդիսում զարդարված, կոկված գեղեցիկ շորերով, ոսկէ քամարներով. ախլը հիմի մեծաւոր անձինք էին դառել: Բաժանասէրի վերայ էնքան նշաններ և պարգևներ էր կախ արած, որ ման գալու ժամանակ նրանց ճընկըր ճընկըրտոցի ձէնը բաւականին հետուից լսվումէր: Եսկ Դիւի—վերաոր կուրծքի վերայ ունէր մի մեծ ոսկիէ աստղ երկար ճառագայթներով: Աննամարիկի մասին ոչ ում չէր խօսում:

Հանդիւի հերոսները վեհանձն դէմքով մօտկացան սև տախտակին, որ մէկ անգամ էլի յաջող բացատրութիւններ անեն մէկ քանի ծեր պալատականների համար, որոնք որ մինչև հիմայ դեռ չէին կարողացել ամենը լաւ հասկանալ: Պարոն Տնական — Հաշուարարը նրանց ետեւումը համեստ կերպիւ կանգնած, սպունգը (սունգար) ձեռին պատրաստ էր միշտ էն թըւանշանները, որ էլ հարկաւոր չէին, իսկոյն սրբելու:

Հանդէսը զուարճութենով շարունակվումէր. և մեր տղերանց համար էս օրը փառք և պարծանք էր. բայց վերջումը մի ահագին ամօթ էր սպասում նրանց:

Բաժանասէրը վերջացրեց իր գլխաւոր բացատրութիւնը՝ երբ բաժանումէր մի Բազմապատկութեան Ստացուած, որ առաջուց արել էր նրա ախպէրը: Ներկայ եղողները սկսեցին ծափահարել, գովեստներ ասել. երեք անգամ ծափահարութիւնը թագաւորի նշանով կրկնեցին: Նա էլ համեստ կերպով գլուխ իջեցրուց, բայց մտքումը բաւականին ուռել էր:

Յանկարծ գանձապետը ոտաց վերայ կանգնեց առանց հրաման ուղիղու, սկսեց էսպէս խօսալ:

Թագաւորը ապրած կենայ, ասաց նա գլուխ ուարով բարեսիրտ թագաւորին. կարելի՞ է թող տաք նուաստիս մի առաջարկութիւն անել, որ մի օգտաւէտ բանի գործ դրուի պարոն Բաժանասէրի էս հիանալի գործողութիւնը, որը որ էնքան ծափահարութեան արժանացաւ: Մենք բոլորս էս բարերադդ երկրումը 26746 հոգի ենք, որ օրհնումենք քու ազնիւ օրերը, քու թանկագին կեանքը: Մենք կը ցանկայինք ցոյց տալ քեզ մեր երախտագիտութիւնը էս անմահ գիւտի պատճառով, ոյր որ քու թագաւորութեան փառքը և անունը պէտք է հասցնէ մեր յետագայ ցեղերին: Թող

ամենքս տանք քիչ բան, մէկ մէկ դրամ: Եւ պատուարժան տղերանց խնձորները ծախուամեն հիմայ՝ էս վերջին ժամանակներում մէկ հատը 8 դրամի, — [ժող պարոն Բաժանասէրը քաջութեամբ 26746 բաժանէ 8 ում, և մեզ ասէ՝ ի՞նչքան խնձոր 2եր Մեծութեան համար կարող ենք գնել՝ իբրև մեր նուաստ ընծայարեւութիւնը 2եզ:

Մի խորը փրսփրոց լսուեցաւ հանդիսականների մէջ էս համարձակ նորութեան վրայօք: Աուրօրէն փորձել մի՛ք բաժանումն, որի մասնաւոր թիւը յայտնի չէ, էդ ի՞նչ կարելի բան է: Աւանդութեան հետևողները քիչ էր մնում ձէները բարձրացնէին. բայց խորամանկ Պանձապետը բանը էնպէս տեղից էր բռնել, որ դժուար էր ընդդէմ գնալը, ընդդիմութիւնը վատ կողմից կիմացվէր. որովհետև խնձորների առաջարկութիւնը Թագաւորի պատուոյ համար էր: Թագաւորը առաջ մէկ ուղեց չընդունել:

— Իրաւի, սիրելի՛ Պանձապետ, ես ի՞նչ եմ անում էդքան խնձորը, հարկաւոր չէ:

Բայց իսկոյն ամեն կողմից բողոք լսուեցաւ: Թագուհին ձէն տվեց թէ՛ խնձորները շատ հարկաւոր են իրանց ձմեռուայ պաշարի համար, որ դեռ պատրաստած չէր: Օսկարը երդում կերաւ թէ՛ նա արդէն համը տեսել էր, շատ գեղեցիկ խնձորներ են, ամեն ժամանակ չէ կարելի ձարել: Եւ տեղ թագաւորը պէտք է հնազանդէր:

Բանն էս կերպ էր, որ Պանձապետը հանելով քսիցը իր մէկ դրամը՝ և մնացածը թագաւորական գանձից վեր առնելով, որ յետոյ ժողովի, յանձնեց բոլոր 26746 դրամը իր տիրոջը:

Բաժանասէրը բոլորովին գունամափ եղաւ, երբ հրաման ստացաւ կատարել դեռ չը փորձած գործողութիւնը. նա զգումէր՝ որ մի վատ փորձանք կը պատահի և քիչ էր մնում թէ՛ թողնի՝ բոլորովին հեռանայ. բայց չէր կարելի: Գողգոջուն ձեռքով սկսեց տախտակի վերայ գրել. և ժողովի աչքերի առաջը բացուեց հետևեալ գործողութիւնը, որ ամենը անհանդստութեամբ սպասումէին վերջանալուն:

26746	8
24	

27	3343
24	


34	
32	

26	
24	

2	

Անբաղդութիւն. մնումէր 2

Գործողութիւնը չաւարտուեց. և գործ կատարողն էլ չէր գիտում ի՞նչ
անէ: Նա ամենևին իրա զուխը կորցրուց:



ՏԱՍՆՈՐԴԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ

Ե՛լաւ, ասեց թագաւորը, էս երկու դրամը՝ որ մնումէ, ի՞նչ անենք. ես կուզեմ իմանալ էդ Չ դրամին ի՞նչքան խնձոր կընկնի. դէ՛հ, աշխատի՛ր որդիս, իմ քեզ տուած պարզէները անմեղ չը հանես. հը՛, տեսնեմ քեզ, ի՞նչպէս պէտք է գործը սկսես :

Բաժանասէրը յանկարծ սկսեց լաց ըլիլ :

— Ես չեմ գիտում, ասեց նա: Խնձ դրանից աւելի չէ սովորցրած:

Եւ ապերախտը էստեղ վերջապէս միտքը բերեց Աննամարիկին:

— Թէ կարելի բան է, միայն իմ քուրը, կըմկըմալով ասումէր նա, միայն իմ քուրը կարող է մեղ բացատրել էդ բանը :

Շուտով թագաւորի ձիանքից ամենից լաւերը լծեցին կառքին, գլխաւոր Ախոռապետը (սայլապանի տեղ) նստեց էս շտապ գործի համար: Շատ քիչ ժամանակում կառքը յետ դարձաւ. և մինչդեռ ախոռապանները վազվզումէին փրփրոտած ձիանոց մօտ, Աննամարիկը թեթեւ ճընձղկի պէս շնորհքով թռաւ գետնին:

Մեր առաջուայ Խնձորածախներ խկոյն նրան դէմ վազեցին՝ ոտները իրանց փառաւոր հագուստի փեշերքին քցելով: Աննամարիկը որ նրանց տեսաւ, ծիծաղը չը կարաց բռնի :

— Ա՛ոյ, Աստուած ջան, էս ի՞նչ հագուստ է ձեր վրէն, այ տղէք: Ես չէի գիտի թէ՛ դուք էդպէս մեծ պարոններ էք դառել :

— Ա՛խ, Աննամարիկ, փրնփրնթաց Բաժանասէրը, ծիծաղի ժամանակ չէ. մենք և մեր բաղդը կորչելու ենք, եթէ դու մեր օգնութեանը չըհասնես:

Աւ նա շուտ շուտ՝ զարհուրած դէմքով՝ պատմեց քուրծը՝ ինչ որ պատահել էր. բայց Աննամարիկը բանը դեռ լաւ չէր հասկանում, որովհետեւ Ախոռապետը շտապելուցը նրան ոչինչ չէր յայտնել :

— Ես կհամանամ էս սահաժիս ինչ անելու ենք, հանդարտութեամբ ասեց Աննամարիկը : Ե՛րբան շատ մի տրորվիլ . ես զիտեմ որ մի մեծ բան չը պէտք է ըլի :

Նա վստահութեամբ մտաւ դահլիճը՝ առանց ամաչելու ու ահ քաշելու մեծ մարդկերանցից, որոնք յայտնի բան է՝ նրան ուտելու հօ չէին. և էնպէս մի շնորհալի կերպիւ բարեւեց հանդէսին՝ որ ամենի սրտին մէկանց դուր եկաւ. մինչև անգամ Գանձապետը չը կարողացաւ թաղցնել իր փոքրիկ ժպիտը :

Մի մօտակայ ծառայող մէկ քանի խօսք ասեց թագաւորի ականջին. որը որ բաւական զարմացաւ, երբոր իմացաւ թէ՛ հիմի միայն տեսնումէ Թուարանութեան իսկական հնարողը : Ախր թագաւորներն էլ մեզ պէս մարդիկ են, մինչև բանը տեղեակի չիմանան՝ չեն կարող հօ ինքնիրանցից զիտնալ . ընդհակառակը նրանք աւելի են խարվում ուրիշներից :

Էս միջոցիս մի խորը լուծիւն տարածվեց :

Աննամարիկը աչքերը քցել էր էն խղճուկ Ձի վերայ, որ կասես թէ՛ ամենեւին իրա տեղի յարմար չէր :

— Թագաւորը ողորմած կենայ, ասեց նա վերջը : Էս երկու միաւորները որան անգամ պակաս են տասնաւորներից, տասնաւորը տասն անգամ պակաս է հարիւրաւորից, հարիւրաւորը տասն անգամ պակաս է հազարաւորից, և էսպէս գնումէ մինչ ի թուի միւս ծայրը : Քանի՛ որ գլխի թուից ցած ենք իջնում դէպ ի աջ ձեռը, թուանշանները տասն տասն անգամ պակաս կամ քիչ թիւ են ցոյց տալի : Էս բանը ձեզ պէտք է պատմած լինին :

Հիմի ո՞վ է մեզ արգելում միւլենոյնը շարունակել միաւորից դէնն էլ՝ դէպ ի աջ կողմը : Միաւորից տասն անգամ պակաս կամ քիչը հասկանալի է որ նրա ասաները (կտորը) պէտք է լինի. ասել է թէ՛ միաւորը ունի իր մէջ, կամ կարող է ունենալ տասը մաս, այսինքն՝ մէկ հատ բան կարելի է մաս մաս անել՝ շինել տասը հաւասար կտոր, էդ ամենիդ հօ յայտնի է. ուրեմն 1 դրամը կարող է 10 մաս ունենալ, ինչպէս օրինակի համար՝ երկու շահանոցը 10 կողէկ ունի ևլն. էն ժամանակը երկու դրամը կունենայ 20 մաս :

Հիմի որ մեր էս դժբաղդ Ձն շինենք 20 մաս, արդէն հեշտ է 8ով բաժանելը :

Նա գրեց

20	8
16	25
40	
40	

” ”

— Տեսէք, ինչ արինք. որովհետև 2ը ուղղակի չէր կարելի Տի վերայ բաժանել, կրկնուամ, մենք էդ 2 միաւորը՝ տասն տասն մաս կոտորելով՝ շինեցինք 20 տասներորդ կտոր :

20ի մէջ Տը մտնումէ 2 անգամ, որ կը լինի 16 :

Բայց, խնդրեմ էս բանը լաւ մտքերումդ ունենաք, որ մենք ոչ 20 միաւորը, այլ 20 տասներորդ կտորը բաժնեցինք Տի վերայ. ուրեմն մեր ստացած 2ն էլ կը լինի 2 տասներորդ կտոր՝ և ոչ ուրիշ բան, այսինքն՝ 2 միաւորից տասն անգամ պակաս: Էդ 2 տասներորդը, ինչպէս տեսնումէք, ես գրեցի մասնաւոր թուումը :

Հիմի մեր 16 որ հանենք 20 տասներորդ կտորներից՝ կը մնայ 4 տասներորդ կտոր :

Էդ կտորները՝ այսինքն միաւորի տասն բաժնի մէկը՝ եթէ էլի տասը տասը մաս բաժնենք, միաւորի տասներորդից տասն անգամ փոքր, այսինքն՝ միաւորի հարիւրերորդ կտորը կստանանք. և իրաւի, ինչպէս որ տասը անգամ տասը (տասնաւոր) կանէ հարիւր, էնպէս էլ տասն անգամ պակաս միաւորի տասներորդը կը լինի հարիւր՝ որ ասել է հարիւր միաւորի տասներորդը: Ուրեմն մեր 4 տասներորդները կարող ենք շինել 40 հարիւրերորդ:

40ի մէջ Տը ուղղակի մտնումէ 5 անգամ. և էստուր համար էլ 40 հարիւրերորդը Տը պարունակումէ իրա մէջ 5 հարիւրային անգամ. էդ 5 հարիւրերորդը գրումենք մասնաւոր թուով 2ի յետևը, և գործողութիւնն էլ թամամեց պրծաւ :

Ուրեմն 26746ի մէջ Տը մտնումէ՝ առաջ 3343 անգամ, յետոյ 2 տասնորդ, հինգ հարիւրորդ, կամ մէկանց 25 հարիւրորդ անգամ, այսինքն՝ դուք կստանաք 3343 ամբողջ խնձոր և 25 հարիւրերորդ կտորներ:

Օհ, օհ, ասեց թաղաւորը, որը որ քիչ Գիփի — վերառի նման էր՝ և չէր սիրում շատ երկար մտածել. օհ, օհ, էդ ինձ բաւականին մութն է թվում :



Մէկ էլ Աննամարիկը նշմարեց՝ որ զլխաւոր ծառան մի թէփշու վերայ բերումէր երկու սիրուն բաղարջ առանձին թաղաւորի գերդաստանի համար :

— Չեր Մեծութիւնը, ասեց նա, խնդրեմ ողորմած լինիք՝ հրաման տաք, որ ես էդ 2 բաղարջը 8 մարդի մէջ բաժանեմ :

Թագաւորը նշանակեց թագուհուն՝ իրան և փոքր թագաւորացին, յետոյ Գանձապետին, յետոյ Աննամարիկին և նրա երկու եղբայրներին, յետոյ ութը լրացնելու համար՝ իր տնական Հաշուարարին, որ էս տեղ մտա էր: Պարօն Հաշուարարը, որ առաջ խոհանոցումը բաղարջ եփող էր, հիմի թագաւորի հետ բաղարջ ուտող էր դառել: Տեսնումէք զփառութիւնը ի՞նչպէս մարդի բարձրացնում է :





Երբոր ընտրութիւնը արին պրծան, Աննամարիկը հանեց իր ջեբից մի փոքրիկ դանակ, և 2 բաղարջից ամեն մէկը տասը հաւասար կտոր արաւ, ուրեմն եղաւ 20 կտոր :

— Տեսէ՛ք, ասաց նա, մենք ունինք էս տեղ 20 տասնորդ կտոր բաղարջ. նրանցից ես 16 դնումեմ մէկ կողմ, էնդուր որ ամենքս հաւասար հաւասար կրտսանանք 2 կտոր,



մնումէ 4 կտորը :

Էդ մնացած 4 կտորից էլ ամեն մէկը տասը փոքր կտոր արեց,



10

10

10

10

և ունեցաւ՝ ինչպէս տեսնու յէք՝ 40 կտոր :

Յետոյ շնորհքով և զգուշութենով երկու մասի ծայրովը վեր առաւ 40 կտորներից մէկը,

— Մտիկ արէ՛ք, ասաց նա, այ՛ ձեզ մի ամբողջ բաղարջի հարիւրերորդ (մասը), պատճառը որ էսպէս տասը կտոր է հարկաւոր, որ բաղարջի միայն տասներորդ մասը դառնայ: Էդ հարիւրերորդներից մենք քառասուն կտոր ունինք. բաժնենք մեր 8 ի մէջը, ամենքիս կընկնի հինգ հինգ կտոր: Մենք արդէն ունէինք երկու երկու կտոր, որոնք ամեն մէկը էսպէս 10

փոքր կտոր է անուամ: Աւրեմն ամեն մէկիս փայլը (մաս) կը լինի՝ 25 հարիւրերորդ կտոր բաղարջ:

Աւրեմն 2 միաւորը՝ որ բաժանուամենք Տով, մասնաւոր թիւը կը լինի 25 հարիւրերորդ:

— Ապրի, աղջիկը, գոչեց թագաւորը, և բոլոր պալատականները կրկնեցին՝ ապրի, ապրի: Միայն Օսկարը քիչ անբաւական էր. էնդուր համար որ յոյս ունէր՝ թէ՛ 2 բաղարջ իրանց երեքի մէջ փայ կանեն (կըբաժանեն) և ո՛չ ութի. ուրեմն և իրա մասը բաւականին մեծ կը լինէր. թագուհին գուրգուրացնումէր նրան իրա փայ բաղարջը տալով. բայց չէ, հաշիւը տեղը չէր գալի, էլի քիչ էր: Ճարահատեալ թագուհին նշան տուեց ծառայատէրին, որ էլի բաղարջ բերեն:

Էս միջոցին միւսները սկսեցին մաս մաս իրանց փայլը ուտել. և թագաւորը՝ դեռ բաղարջը բերնումը՝ սկսեց շնորհակալութիւն անել Գանձատէրին, որ էդպէս գեղեցիկ բան միտքը բերեց, և իրա առաջարկութիւնով օգտեց զիտութեան յառաջադիմութեանը:

— Է՛ հիմի, սիրուն աղջիկս, ասեց նա Աննամարիկն, երբոր կուլ տուեց պրծաւ իր վերջի հարիւրերորդ բաղարջը, հիմի սկսենք էլի առաջվայ գործը՝ թէ ինքդ էլ ցանկանումես: Ի՞նչպէս պէտք է գրենք մեր խնձորների թիւը:

— Ինչպէս ես ձեզ մէկ քիչ առաջ պատմեցի, նոր թուանշանները պէտք է կարգով դնել միաւորների թուանշանների յետեւից. սակայն միաւորների տեղը նշանակելու համար մենք կը գրենք միաւորների յետեւից իսկոյն մի ստորակէտ (,) որ գրանով զանազաններ նրան հետեւալ աւելի փոքր մասներից

Նա գրեց 3343, 25.

— Էս ստորակէտից որքան թուանշան ուղենաք՝ կարող էք դնել: Նրանց նշանակութիւնը քանի՛ դնայ՝ տասը տասը անգամ՝ կը քիչանայ, ինչպէս որ ստորակէտից առաջև սկսած միաւորից քանի՛ դնայ՝ տասը տասը անգամ՝ կը մեծանայ, կ'աճի:

Էդպէս, միաւորներից ձախ կողմը գնալով՝ մենք ունենումէինք տասնաւոր, հարիւրաւոր, հազարաւոր, տասը հազարաւոր և յն. այսինքն՝ միշտ տասն անգամ՝ աւելի էին նշանակում: Միաւորներից աջ կողմը որ գնանք՝ մենք կ'ունենանք տասներորդ, հարիւրերորդ, հազարերորդ, տասն հազարերորդ մասեր, այսինքն, կրկնումեմ, նշանակութիւնները քանի՛ դնումեն՝ քիչանումեն տասն տասն անգամ. պատճառը, ձեզ լաւ յայտնի է, որ տասներորդ կտորը միաւորից (մէկ հատ ամբողջ բանից) փոքր է, հա-

րիւրերորդից՝ հազարերորդը աւելի փոքր է և շն: Աւրեմն մեր ստորակէտը ցոյց է տալի էն կէտը, որտեղից թուերի նշանակութիւնները մէկ կողմը վեր են ելնում՝ միւս կողմը վար են իջնում:

— Պահ հ, Աստուած վկայ, շատ գեղեցիկ միտք է, զոչեց ուրախութիւնսից թագաւորը:

Մէկ քիչ միտք անկուց յետոյ,

— Հահ, ասեց նա, տեսնու՞մք որ դու էդ ստորակէտի վրայ շատ դիտաւորութիւն ես դարձնում, և մեծ նշանակութիւն ես տալի դրան. դէ՛հ ասա՛ տեսնեմ, ջանիկս, ի՛նչ դուրս կը գայ՝ եթէ սխալմամբ նրա տեղը փոխուի, էն ժամանակը էլ ոչինչ չէ՛ կարելի հասկանալ:

— Ներեցէ՛ք, Տէ՛ր իմ, շատ կարելի է հասկանալ: Եթէ ստորակէտը մի թուակարգ ձախը առաջ տարվի, էն ժամանակ բոլոր թիւը տասն անգամ կը քիչանայ: Եթէ երկու թուակարգ առաջ տարվի, թիւը հարիւր անգամ կը քիչանայ: Եւ էսպէս մինչև վերջի թուանշանը: Եթէ հիմի ստորակէտը մէկ կարգ դէպ ի աջը յետ տարվի, բոլոր թիւը տասն անգամ կ'աւելանայ. եթէ երկու կարգ՝ հարիւր անգամ կ'աւելանայ, և էսպէս մինչ ի վերջին թուանշանը:

Եւ, ինչպէս նոր մտածեցի էդ մասին, էդ մի հիանալի հնարք կը լինի հեշտութեամբ, կաւիճի մէկ խփելուցը՝ բաժանել, կամ բազմապատկել մի որևիցէ թիւ՝ 10 ուլ, 100 ուլ, 1000 ուլ, և շն: Օրինակի համար՝ 10 ուլ բազմապատկելու համար՝ ստորակէտը պէտք է մի կարգ յետ տանել. 10 ուլ բաժանելու (այսինքն պակասացնելու) համար՝ պէտք է ստորակէտը մի կարգ առաջ տանել. բանը արած պրծած կը լինի:

Տեսէ՛ք էս տեղ 3343,25 խնձոր ունինք, ստորակէտը մի կարգ յետ եմ տանում, հիմի տեսէ՛ք՝ 33432,5:

Էս տեղ տասն անգամ աւելի խնձոր կուեննանք: Ստորակէտը մի կարգ առաջ եմ բերում իր իսկական տեղիցը, տեսէ՛ք՝ 334,325:

Էս տեղ տասն անգամ պակաս խնձոր կուեննանք:

— Լաւ ասումես համա՛ն այ դալում (հնարագէտ) աղջիկ, կարող ես արդեօք էլ լաւ բացատրել, հասկացնել մեզ էդ բանը:

— Առաջին դիպուածում (երբոր ստորակէտը յետ տարանք)՝ մեր զխաւոր թուին այ ինչ պատահեց. նրա 5 հարիւրերորդ մասերը՝ 5 տասներորդ դառան, այսինքն 10 անգամ աւելի եղան. 2 տասներորդ մասերը՝ 2 միաւոր դառան՝ այսինքն՝ էլի 10 անգամ աւելացան. 3 միաւորները՝ 3 տասնաւոր դառան. 4 տասնաւորները՝ 4 հարիւրաւոր դառան և շն: Աւրեմն

ամեն մէկ կարգը տասն անգամ մեծացաւ, ասել է թէ՛ բոլոր թիւը տասն անգամ Բազմապատկեցաւ կամ աւելացաւ :

Միւս դիպուածում (երբոր ստորակէտը մի կարգ առաջ բերինք) մեր պիտաւոր թուի 3 միաւորը՝ 3 տասներորդ կտոր դառան, ասել է թէ՛ 10 անգամ քիչացան. էնպէս էլ միւս կարգերը միաւորներից՝ թէ դէսը, թէ դէնը, տասը տասը անգամ պակասեցին մեր առաջուայ թուի դէմ, ուրեմն բոլոր թիւը 10 անգամ բաժանվեց կամ պակասեց :

— Անչափ բաւական եմ քեզանից՝ հոգի ջան, դու իմ բոլոր հարցմունքներին խելօք պատասխան տվիր. Միայն մէկ բան հարցնեմ էլի. ո՞նց անուանենք էդ թուերը՝ որ առաջ բերիր և որոնք որ ստորակէտից յետն են դրվում :

Աննամարիկը մէ քիչ մտքումը պտուեց. մէկ էլ ծիծաղելով դռչեց.


— Էլ ի՞նչ անուն ենք պտուում, երբոր անունը ինքնիրան պատրաստ կայ. էդ թուերը ախրը միաւորի կտորներն են, ուրեմն կոորնէր կամ կոորրակնէր ասենք. դրանից էլ լաւ անուն. և որովհետեւ էս կտորները միշտ տասն տասն են բաժանվում, կամ տասն տասն անգամ մանրանում, մենք էլ կասենք Տասներորդական կոորրակնէր :


Թագաւորը մօտ կանչեց Աննամարիկին ճակատը պաչ արեց ասելով,

— Զօրանաս դու, դիտուն աղջիկ :




The first part of the paper is devoted to a general
 consideration of the subject. It is shown that the
 results of the experiments are in accordance with
 the theory. The second part is devoted to a
 detailed description of the apparatus used. The
 results of the experiments are given in the
 following table. It is seen that the results are
 in good agreement with the theory. The
 third part of the paper is devoted to a
 discussion of the results. It is shown that the
 results are in good agreement with the theory.
 The fourth part of the paper is devoted to a
 summary of the results. It is shown that the
 results are in good agreement with the theory.
 The fifth part of the paper is devoted to a
 conclusion. It is shown that the results are
 in good agreement with the theory.





ԳԼՈՒԽ ՄԵՏԱՍԱՆԵՐՐՈՐԴ

ՀԱՍԱՐԱԿ ԿՈՏՈՐԱԿՆԵՐ



Էս բույճին Օտոպայատը մի թեւիշու վերայ ներս բերեց նրկու ուրիշ բաղարջ :

— Լաւ բան է, ծիծաղելով ասեց թագաւորը, որի քեֆը շատ տեղն էր : Այ էս բաղարջներն էլ կարելի է բաժանել :

Բայց Օսկարը շտապելով վեր կացաւ տեղիցը :


— Հայրիկ, կոչեց նա, մենք արդէն զիտենք Ձի բաժանումը Տով : Հիմի ես շատ ցանկանումեմ տեսնել Ձի բաժանումը Յով : Ի՞նչ կըլի էս նրկու բաղարջը բաժանել տաս միայն մեր երեքի մէջ :

— Ինչպէս դու կամենումես, էնպէս կանենք, հոգի ջան, — ես շատ ուրախ եմ, որ դու էդպէս սէր ունիս բան սովորելու : Գէ՛հ, սիրուն աղջիկ, սկըսենք ուղած բաժանումը :

Աննամարիկը միտք արաւ. բայց էս անդամին սովորականին հակառակ, մի քիչ անհանգստութիւն էր տեսնւում նրա վրէն :

— Ձեր հրամանով, Տէր, ասեց վերջը նա, ես կը փորձեմ բաժանումը մէկ բաղարջի վերայ : Եթէ բանը տեղ չը հասնի, միւս բաղարջը ուրիշ կերպ կը բաժնենք :

Աւ վեր առաւ մի բաղարջ, կտրատեց տասը հաւասար կտոր. երեք կտորը տուեց թագաւորին, երեքը թագուհւոյն, երեքը նոցա ժառանգին, որ բոլորը կանէր իննը. մի տասներորդ կտորը մնումէր:



— Էդ կտորն էլ կտրեց տասն մաս. երեք թագաւորաղուները մէկ մէկ կըտոր էլ ունեցան, էլն մի փոքր կտոր մնումէր:

— Այ էս բանիցն էր, որ ես վախումէի, գոչեց նա. Էս կերպ թէ կուզ մինչ ի էգուց կտրենք, մեզ միշտ պէտք է մնայ մէկ կտոր:

Մտիկ արէք, ահա մեր բաժանումը տախտակի վերայ:

Աւ թողեց բաղարջները, ձեռք առաւ կաւիճը՝ դրեց:

10	3
9	
— 10	0.33333...
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	
9	
— 10	


Ժանարար Յի վրայ ամբողջապէս չէ կարող բաժանակել. էտուր էլ մենք
 1ը շինեցինք 10ը կտոր, բաժանեցինք 3ով, և մասնաւոր թուումը ստա-
 ցանք նոյնպէս փոքր փոքր կտորներ՝ և ոչ միաւորներ: Հիմի հասկանումք՝
 ինչի միաւորների տեղումը եւս զքօ գրի. էնդուր որ միաւոր ամենեին չը կար:
 Աւրեմն՝ երբոր ունենումենք միայն տասներորդ, հարիւրերորդ, հազարեր-
 րորդ և շն. կտորներ, նրանց գրելու համար հարկաւոր է առաջ՝ միաւորների
 տեղումը զքօ գրել, յետոյ՝ ստորակէտը դնել, յետոյ՝ էդ մասերը իրար
 յետեից կարգով գրել. հեշտ բան:

— Էդ զորդ ասիր, համա մեր Բաժանումը էլի ի՞նչպէս պէտք է վերջաց-
 նես, խելօք աղջիկս:

— Է՛հ, է՛հ, ի՛նչ խելացի եմ կղել եւ էլ, դոչեց յանկարծ Աննա-
 մարիկը, ինքն իրա վրայ ծիծաղելով. բանը էտտեղ քթիս չառջեն է՛ եւ
 գնացել եմ հեռու տեղերում՝ պտուումեմ:

Աւ կրկին վերառաւ իր դանակը, երկրորդ բաղարջը երեք հաւասար
 կտոր արաւ:

— Ա՛յ, ասեց նա, դուք կ'ունենաք ամեն մէկդ բաղարջի երրորդ հասը:



— Թէ էդ էր միայն քու դտածը, էդ հեշտ բան էր, եւ էլ կարող էի անել
 միւսնոյնը: Բայց դու էն ասա՝ թէ ի՞նչպէս երկու բաղարջը բաժանելի էր
 կերպ:

— Երկուսն էլ կը բաժանելի երեք երեք կտոր, և էդ կտորներից ամեն
 մէկիդ կընկնէր երկու կտոր:

— Ա՛յց, կ'այց, կ'այց, էդ հաշուովը մենք միւսնոյնը կարող էինք անել, մեր
 առաջվայ բաղարջները կարող էինք բաժանել 8ով:

— Չեր մեծութիւնը ճշմարիտ ասեց: Էդ կերպով ամեն բաժանում կա-
 րելի է կատարել՝ վերջացնել, կ'ուղէ լինի նրա մնացուածը և նրա բաժա-
 նարարը:

Ասենք թէ, օրինակի համար, 11 բաղարջը պէտք է բաժնել 6 մարդի մէջ :

11ումը մտնումէ 6ը Գէ անգամ, և մնումէ 5:

Էդ 5 բաղարջից ամեն մէկը էնքան կտոր պէտք է անենք, որքան որ մարդ կայ, այսինքն՝ ամեն մէկ բաղարջը 6ի վրայ պէտք է բաժնենք. և ամեն մի մարդը կը ստանայ էնքան կտոր, որքան որ բաղարջ կայ, այսինքն՝ 5 հատ բաղարջից մէկ մէկ վերցնելուդ կտոր վերցնելով, կը ստանայ 5 վեցերորդ կտորներ:

Մտիկ արէք, ինչպէս ևս ուղումեմ գրել էդ բաժանումը:

$$\begin{array}{r} 11 \quad | \quad 6 \\ \underline{6} \quad | \quad 1\frac{5}{6} \\ 5 \end{array}$$

Ինչպէս տեսնումէք, 11 բաղարջը որ բաժանենք 6 մարդի վրայ, ամեն մէկը կը ստանայ 1 սաղ բաղարջ և $\frac{5}{6}$ (հինգ հատ վեցերորդային) կտոր բաղարջ: Եւ էդ կտորակը, տեսնումէք, ինչպէս նշանակեցինք, բաժանումի մնացուածը (5ը) գրեցինք վերևը, բաժանարարը (6ը) գրեցինք տակը:

Վերևի 5ը ցոյց է տալի՝ թէ ամեն մարդը քանի կտոր ունի. Ես նրան պէտք է անուանեմ Համարացոյց թիւ. որովհետև նա ցոյց է տալի կը տորների համարները (թիւը), որքանու թիւներ:

Տակի 6ը ցոյց է տալի՝ թէ ամեն մի բաղարջ ինչպիսի մանր կտորներ է բաժնուել: Սրան էլ պէտք է ասեմ Յայտարար կամ Անանացոյց թիւ, որովհետև ցոյց է տալի կտորի անունը, այսինքն ինչպէս կտոր է, կէ է, թէ երբոր մաս է, կամ շրջաք (քառորդ), հինգերորդ և ըն:

Էս տեղ մենք ունինք վեցերորդաւոր կտորներ, ուրեմն ինչպէս ասեցի՝ մասնաւոր թիւը կը լինի

Մի բաղարջ և հինգ վեցերորդական:

— Թէ էդպէս է, ասեց թաղաւորը, որ էս անգամին շատ ուշք ու մտքով ականջ էր դնում, առաջուայ 25 հարիւրերորդ կտոր խնձորի տեղ իմ 2 դրամիս դէմ՝ ևս կուենեամ 2 ու թերրորդ կտոր, էդ էլ լաւ է ինձ համար. կտորները աւելի մեծ են և մարդի աչքին բան կերևայ: (Մտիկ տուէք...):

Յայտնի բան է, էդ բոլորովին միևնոյն է, կրկնեց Աննամարիկը, առաջի դիպուածում, խնձորը 100 կտոր է բաժանած, և դուք ունիք նրանցից 25 կտոր:

Երրորդ դիպուածում, նա բաժանուած է 8 կտոր, և դուք ունիք նրանցից 2ը:

25 ը կանէ 100 ի չորրորդ մասը. 2 ը կանէ 8 ի էլ չորրորդ մասը. էն կերպ, թէ էս կերպ, դուք կը ստանաք միշտ մի խնձորի չորրորդ մասը :

— Տեսա՞ր՝ մայրիկ ջան՝ ասեց Օսկարը թագուհւոյն, էն անդամին երկու բաղարջից ինձ ընկնումէր միայն մի չորրորդական կտոր բաղարջ . էս անգամին մի բաղարջից ինձ ընկաւ մի մեծ երբորդական կտոր. տեսա՞ր, որ քու փայտիլն էլ իմ հաշիւը տեղը չէր գալի, էնգուր որ ես ունեցայ միայն երկու չորրորդական, բայց ունենալու էի երկու երրորդական մաս :

— Մի մեծ բան չէ կորցրածդ՝ որդի ջան, շատ քիչ զանազանութիւն կայ :

Աղջիկ — պարոն, խօսքը դարձրեց թագուհին դէպ ի Աննամարիկը, կարող ե՞ս արդեօք մեզ ցոյց տալ՝ ի՞նչ զանազանութիւն կայ 2 երրորդ և 2 չորրորդի մէջը :

— 2 եր ուղածին համաձայն, թագուհի, էս տեղ պէտք է Հանուս անել : Մի բոպէ ժամանակ տուէ՛ք ինձ մտածելու :

Աւելի պարզութեան համար ես գրումեմ առաջուց երկու կոտորակներն էլ :

$$\frac{2}{5} \quad \frac{2}{4}$$

Հիմի արի՛ք լաւ մտածենք բանի էութիւնը :

Եթէ երկու կոտորակներ միւսնոյն Անուանացոյց ունենային, նրանց հետ Հանումը շատ հեշտ կը լինէր. Փոքր Համարիչը (կամ Համարացոյցը) պէտք էր հանել մեծ Համարիչից. էս կերպ էլ հեշտ կը լինէր գումարելու ժամանակը. հարկաւոր էր միայն Համարիչները (համարացոյցները) գումարել իրար հետ. Ինչպէս որ էս սահմանաւոր առանց երկար ու բարակ մտածելու՝ միւսնոյնը արաւ Նորին Բարձրութիւնը Բրինձ Օսկարը. նա տեսաւ որ մի չորրորդ՝ մի չորրորդ էլ՝ անումէ երկու չորրորդ. և մի երրորդ՝ մի երրորդ էլ՝ անումէ երկու երրորդ մասն :

Բայց էդ գործողութիւնները կատարելու համար անպատճառ պէտք է որ Աոտորակները միւսնոյն Անուանացոյցն ունենան. Անկարելի է երկու չորրորդը հանել 2 երրորդից, ինչպէս որ անկարելի է գումարել իրար հետ 3 խնձորը և 6 շունը, կամ 2 փութը և 2 ֆունտը (գրվանքէն), մինչև որ փութը ֆունտ չը շինենք (այսինքն 1 փութի մէջ 40 ֆունտ կայ, 2 փութը ուրեմն կը լինի 80 ֆունտ*). հիմի այ էդ 80 ֆունտը կարելի է գումարել տրված 2 ֆունտի հետ՝ որ կանէ 82 ֆ.), ուրեմն ի՞նչ կուզէ լինի, թէ

(*) Կստեղ փութը եւ ֆունտը կարող են Յայտարար կամ Անուանացոյց կոչվել, որովհետեւ ցոյց են տալի թէ էդ կշիռները մի ուրիշ իրանցից մեծ կշռի

երրորդ մաս, թէ քառորդ, թէ շուն, թէ խնձոր, թէ կօպէք, թէ արշին՝
Գումար և Բարձում (Հանում) կարելի է անել, երբ որ էդ զատերը միև-
նոյն բնութիւնը ունեն, կամ համաստեսակ են, զորօրինակ՝ արշինը արշինի
հետ, կօպէքը կօպէքի հետ ևլն :

Աւրեմն մեր $\frac{2}{5}$ ի և $\frac{2}{4}$ ի Անուանացոյցները հարկաւոր է որ՝ միևնոյն
շինենք, բայց էնպէս որ Ատտորակների առանձին առանձին որքանութիւնը
ամենեւին չը փոխուի. ի՞նչպէս անենք :

Նա մի լաւ մտիկ արեց երկու կոտորակներին. յետոյ ուրախութեամբ
ձեռք ձակատին խփելով՝

— Գտայ, ասեց նա, էստեղ երկու բան կայ.

Մէկը՝ որ եթէ մի կոտորակի Համարացոյցը և Անուանացոյցը բազմա-
պատկումենք որեւիցէ թուով, օրինակի համար 4 ով, կոտորակը ամենեւին
չի փոխում իր որքանութիւնը կամ արժէքը, էնդուր համար որ Համարի-
չը՝ որ բազմապատկումենք $\frac{1}{4}$ անգամ, նա ցոյց է տալի թէ $\frac{1}{4}$ անգամ աւելի
կտոր ունինք. բայց միևնոյն ժամանակը որ Անուանիչը բազմապատ-
կումենք 4 ով, նա ցոյց է տալի թէ՛ կտորները 6 անգամ աւելի մանրա-
նումեն, այսինքն՝ միաւորը $\frac{1}{4}$ աւելի կտոր է բաժանուում, ուրեմն կոտո-
րակի որքանութիւնը ո՛չ աւելանումէ՛ ո՛չ պակասանումէ :

Անենք էդպէս՝ ինչպէս պատմեցի $\frac{2}{5}$ ի վրայ.

$$2 \text{ անգամ } \frac{1}{4} \text{ ն անում է } \frac{8}{4}$$

$$3 \text{ անգամ } \frac{1}{4} \text{ ր անում է } \frac{12}{4}$$

$\frac{1}{12}$ միևնոյն է թէ $\frac{2}{5}$:

Չեր մտքումը պէտք է լինի, որ 3 անգամ $\frac{1}{4}$, կամ $\frac{1}{4}$ անգամ 3՝ միև-
նոյն ստացուածն է տալի :

Աւրեմն 3 ով բազմապատկենք նոյնկերպ $\frac{2}{4}$

$$2 \text{ անգամ } \frac{3}{4} \text{ անում է } \frac{6}{4}$$

$$4 \text{ անգամ } \frac{3}{4} \text{ անում է } \frac{12}{4}$$

$\frac{6}{12}$ միևնոյն է թէ $\frac{2}{4}$:

Հիմի ի՞նչ շինեցինք :

Ամեն մէկ Ատտորակի երկու անգամը (այսինքն Համարացոյցը և Անուա-
նացոյցը) բազմապատկեցինք միւսի անուանացոյցով, 2 ը և 3 ը—4 ով, իսկ

որ մասն են, կամ մասն՝ անունն են ցոյց տալի, զորօրինակ, ֆունտը փութի
քառասներորդ մասն է, ուրեմն 2 ֆունտ ասած, կամ $\frac{2}{40}$ փ. (երկու բա-
ռասներորդ մաս փութի) ասած, բոլորովին միևնոյն է :

2ը և 3ը — 3ով: Էս կերպով երկու անուանացոյցները իրար վրայ երկու անգամ բազմապատկուելով՝ հարկադրեալ երկու անգամն էլ միևնոյն ստացուածը պէտք է տային:

Ուրեմն փոխանակ $\frac{2}{5}$ ի և $\frac{2}{4}$ ի, որ մէկը միւսից չէր կարելի հանել, մենք ունինք հիմի $\frac{8}{12}$ և $\frac{6}{12}$, որոնց Հանումը շատ հեշտ է:

Դուրս բերենք 6ը 8ից՝ մնումէ 2, այսինքն 6 տասներկուերորդը՝ 8ը տասներկու — երկուերորդից՝ մնումէ 2 տասներկուերորդ ($\frac{2}{12}$):

— Թաղուհի, չը նայելով Չեր բարեգթութեանը դէպ ի նորին Բարձրութիւնը, բայց Բրինձը էլի կորցրել է 2 տասներկուերորդ բաղարջի կտոր էն բաժանումից՝ որ ես առաջարկեցի:

— Երկու տասներկուերորդ, ի՞նչ շատ է, ասեց Բրինձ Օսկարը:

— Էդ անումէ Դէլ Քէյքըրը. այ ինչ պատճառով. ինչպէս որ բազմապատկեցինք, հիմի էլ եթէ բաժնենք կոտորակի երկու թուերն էլ միևնոյն թուով, նրա որքանութիւնը ամենեին չի խախտուիլ:

Էնդուր որ, եթէ $\frac{2}{12}$ բաժանենք 2ով, կստանանք $\frac{1}{6}$

$\frac{1}{6}$ միևնոյն է թէ $\frac{2}{12}$:

Երաւի՛ երկու կտոր բաղարջի տեղ՝ մենք ստանումենք միայն մէկը, էդ ճշմարիտ է, բայց միւս կողմից բաղարջը 12 կտոր բաժանվելու տեղ, միայն 6 կտոր է բաժանվում և յայտնի երևումէ, որ մեր նոր ստացած Դի կորը հաւասար է առաջվայ երկու կորին, Էնդուր որ՝ եթէ էդ վեց կտորից ամեն մէկը կտրենք երկու մաս, կը ստանանք էլի 12. ուրեմն մի վեցերորդը հաւասար է երկու տասներկուերորդին:

Օսկարը, որ կուլ տալու էր բաղարջի վերջի կտորը, գլխով արեց, իբր թէ՛ բոլորը հասկացաւ, և ձեռքը քցեց մօրը փէշին՝ որ դուրս գնան:

— Մի քիչ էլ համբերեցէք, ասեց Աննամարիկը. երբոր ձեզ պատմումէի Բազմապատկութեան և Բաժանումի վրայ՝ իմ միտքս մէկ բան եկաւ:

Մի Կոտորակ բազմապատկելու համար, զորօրինակ 3ով, կարելի է 1) բազմապատկել նրա Համարիչով, կամ 2) բաժանել Անուանիչը 3ով, որը որ պատահի կամ աւելի պատշաճ լինի:

Առաջին դիպուածում կը ստացուի 3 անգամ աւելի միևնոյն կտորներ, երկրորդ դիպուածում էդ կտորները երեք անգամ աւելի խոշորանում՝ մեծանում են. ուրեմն երկու դիպուածումն էլ կոտորակը բազմապատկվումէ:

Մի կոտորակ՝ ասենք Յով բաժանելու համար հարկաւոր է կամ 1) բաժանել նրա Համարիչը, կամ 2) բազմապատկել նրա Անուանիչը, էլի որը որ հեշտ է:

Առաջին դիպուածում Յ անգամ պակաս կտոր կունեցուի, երկրորդում՝ էդ կտորները երեք անգամ աւելի մանրանումեն:

Ես կարծումեմ, որ էս բանի վրայ էլ տեղեկութիւն ունենաք, լաւ է ո՞վ դիտէ, կարելի է վերջը մեզ մէկ տեղ հարկաւորի:

— Չեր մեծութիւնը կամենումէ էլ ուրիշ բաներ փորձենք՝ պտուներ, շարունակեց Աննամարիկը՝ դառնալով դէպ ի թագաւորը, որ սկսումէր որոնջկտալ:

— Ո՛չ՝ սիրելի՛, պատասխանեց թագաւորը՝ ինքն իրան քիչ թափ տալով: Ամեն օրը իր աշխատանքն ունի. էս օրվայ համար էսքանը բաւական է. հիմի մենք դիտենք թէ՛ էդ ի՞նչ բան է էդ կոտորակ ասածը: Մնացածը յետոյ՝ երբոր հարկաւոր կը լինի, էն ժամանակ կ'իմանանք:

Էս ասելով նա վերկացաւ տեղիցը. էնդուր որ էս անգամին անսովոր երկար նստեց. ոտքերը բռնուել էին (թմրել). նրա հետ իսկոյն բոլոր ժողովն էլ ոտքի կանգնեց:

Թագուհին առաջ եկաւ՝ զրկախառնեց Աննամարիկին, որի մօտ հէնց էն բոպէին հաւաքվեցին բոլոր պալատականները, և ամենքը էնքան զովասանքներ նրա վերայ թափեցին, որ խեղճ աղջիկը կարմրեց՝ և չէր դիտում՝ իր մէկին պատասխանէ:

Թագաւորը տեսնելով նրա փոքր ինչ շփոթիլը, բռնեց նրա ձեռից և տարաւ հեռու մի պատուհանի մօտ:

— Լսիր, որդի՛ ջան՛, ասեց նրան հայրաբար, ես քեզ պարտական եմ մի լաւ շնորհակալութիւն անել քու աշխատանքի փոխարէնը, որ մեզ էնքան բանը սովորացրիր: Ասա՛, ի՞նչ է ուզածդ, ի՞նչ ծառայութիւն ցանկանումես՝ կունենաս իմ պալատումը. քեզ համար դիմի պատրաստ է:

— Տէր իմ, ես ո՛չ մի պալատական տեղի հարկաւորութիւն չեմ զգում հիմի. ես շատ բաղդաւոր ապրումեմ իմ կնքահօրանց տանը: Բայց եթէ Գուք սիրումէք ինձ՝ իբրև ձեր որդին, ես խնդրումեմ՝ որ թոյլ տաք իմ երկու եղբայրները էստեղից տանեմ ինձ հետ: Արովհետև նոցա վրայի ծիծաղաշարժ կլապիտոնէ, ոսկէ, արծաթէ թանկագին հագուստը, առհասարակ, ներեցէ՛ք յանդգնութեանս, պալատի աւելորդասիրութիւնը և պալատականների վարմունքը, որ նրանց անսովոր է, պէտք է զոռոզացնեն նրանց և յետ ձդին իրանց իսկական աշխատանքից:


Յայտնի բան է, Աննամարիկի էս վերջի խօսքերը՝ թէ պալատականները լսէին, պէտք է լաւ նեղանային. հէնց թագաւորը ինքն էլ մտքումը քիչ զայրացաւ. բայց աղջկայ հանդարտ և խելացի դէմքը՝ մեծ պատուոյ արժանի լինելը՝ նրան կակղացրին. միայն քիթը բարձրացնելով էսքանն ասեց .

— Էս գիտնականները, կասես, մի կերպ լինին, չը գիտեմ ինչի սաստիկ հպարտ են, չեմ ասում գոռոզ, և բանը ուղղակի առանց քաղաքավարութեան երես առ երես ասել գիտին :

Յետոյ որ հանդարտեց .

— Տար քու եղբայրներին, սիրելի որդեակ, թէ որ կամենումես . Բայց դու որ ուրիշ պարզեատրութիւն չես ուզում, ես քու անուանը պէտք է ընծայեմ մի գեղեցիկ լրես իմ թագաւորութեան պատմութեան մէջ :

Աննամարիկը գլուխ տուեց՝ և իր եղբարց հետ հեռացաւ . Իսկ նրա անունը իրաւի պատմութեան մէջ ընկաւ . Չեր անբաղդութիւնից այս թագաւորութեան բոլոր պատմութիւնը յետի ժամանակներում կորցվել էր . այ էս է պատճառը, որ մինչ ի հիմի դուք չէիք լսել Աննամարիկի մասին՝ նրա գիւտը, որ շատ մեծ խելքի բան է : Տեսնումէք, Աննամարիկը՝ որ խելացի լինելով՝ իրա գեղեցիկ խելքը Դոյն իր սեպհակաձօզտին գործ չուծեց, այլ առաւել ուրիշներին հաղորդեց, շատ մարդկանց դժուարութիւնները հեշտացրուց. կնդուր էլ նրա անունը անմահ մնումէ. և ես գիտեմ՝ որ նա իր կիանքում էլ երջանիկ պէտք է լինէր :



Բանը շատ չերկարացնելու համար, ես ուզում եմ ձեզ պատմել մեր պատմութեան վերջը :

— Գիտի — վերադր և Բաժանասէրը հա՛ղորդ, պէտք է վերջապէս ձեզ ասել սոցա իսկական անունները, մեծի անունն էր Գէորգ, փոքրինը՝ Յակոբ . : Ուրեմն՝ Գէորգը և Յակոբը յետ որ եկան թագաւորի պալատից՝ սկսեցին էլի իրանց խնձորի առուտուրը : Էս միջոցին, յայտնի բան է, սոցա անունը Աննամարիկի անուան հետ էլ աւելի բարձրացաւ . ամեն տեղ նոցա ընդունումէին փառքով և պատուով : Միւսնոյն ժամանակ քանի գնումէր՝ սոցա խնձորի առուտուրը աւելի և աւելի մեծանումէր : Ժողովրդի հետաքրքրութիւնը մէկ անգամ շարժել էր, ամեն տեղից գալիս էին սոցա գեղեցիկ խնձորների համը տեսնելու, սոցա հիանալի հաշիւներին

միտք զնկու. ամեն տեղ կրում էին սոցա խնձորները սայլերով, բեռներով, մէկ մէկ տոմսակ վրէն կայրած, որտեղ նշակվումէր խնձորների թիւը և մի քանի փոքր հաշիւներ:

Կսպիսի յաջողութիւնը տեսնելով մեր Խնձորածախները՝ չըկարողացան թէ ըմբռնէին իրանց ազահութիւնը. սկսեցին մէկին մէկ, մէկին երկու զին նշանակել իրանց խնձորներին. որովհետև առնողը դեռ պակաս էր:

Էս բանը սաստիկ զայրացրուց Քէորզի և Յակորի կնքահօրը. նա բոլորովին արգիլեց խնձորները իրանց գնից աւելով ծախելը. նա ահ էր տալի տղոցը, որ թէ նոքա չը հնազանդեն իւր հրամանին, նա իր ընծայած այգին նոցա ձեռից կը խլի: Բայց կնքահայրը խելօք մարդ լինելով՝ զիտէր՝ որ ահը կամ վախը կնքան չի ըմբռնել մարդին վատ գործքերից՝ որքան համոզմունքը: Ասանորոյ սկսեց երկար ու բարակ նրանց հասկացնել, որ նոցա արարմունքը բաց ի անիրաւութիւնը՝ հէնց իրանց սեպհական օգտին էլ մնաս է: Նա ասումէր, որ ժողովրդի հետաքրքրութիւնը շատ շատ շարունակի՝ մի—երկու շաբաթ. այնուհետև էլ ո՞վ է գժվել, որ դայ ու ձեր թանգ ու կրակ խնձորները առնի. այնուհետև ձեր խնձորները պէտք է ծախվի մի քանի հարուստների և փողի դադր չիմացողների մօտ. իսկ ժողովուրդը պէտք է հեռանայ ձեզանից, և ձեր խնձորի մեծ մասը մնայ, խարաք լինի, տասնապատիկ էժան ծախվի, կամ թէ դուք այնուհետև պէտք է սկսէք՝ ում կարողացաք՝ թանկ ծախել, միւսին էժան, երորդին խարել, չորորդին երգում ուտելով հաւատացնել, միով բանիւ՝ պէտք է կորցնէք ձեր ազնուութիւնը և պատիւը, որ ի՛նչ է՝ մի քիչ ձեր ապրանքը ստղացնէք:

Եւ ընդհակառակը, եթէ բոլորը իմանան, որ ձեր մօտ խարէութիւն բոլորովին չը կայ, ո՛չ ոքից աւելի զին չէք առնում, որքան կարելի է՝ ժամանակին յարմար աշխատումէք էժանացնել, միւսնոյն ժամանակը լաւ բան էք տալի, ձեր օրումը փթած բան չէք ծախել: Յայտնի բան է, բոլորը կը սկսեն ձեզանից և ձեզանմաններից բան առնել, և ձեր միւշտարին (գնողները) ո՛չ մի ժամանակ չի պակասիլ. ձեր ապրանքը լաւ կը սաղանայ, և ձեր խղճմտանքը իստակ կը լինի, բոլորն էլ ձեզ կը պատուեն ձեր ազնուութեան համար:

Անքահայրը նրանց շատ օրինակներ էր բերում, թէ էն ազգն է հարուստը՝ որի վաճառականները խղճմտանօք են գործ բռնում, ճշմարիտ են վաշվում, խարէութիւնը իրանց պատուին անարժան են համարում, իսկ ամեն մի բանի երգում ուտելը՝ մեծ ամօթ: Միով բանիւ, նա հասկացրուց իր սանիկներին, թէ որքան մեծ բան է առուտուրի մէջ բարի անունը: Եւ երևակայեցէք, սիրելիք, որ մինչ ի հիմայ էլ կան շատ վաճառականներ:

որ չ'են ուղում հասկանալ էս բանը՝ ինչպէս կարգն է. կարծումեն թէ Բարի—անունն էն է՝ որ մարդ յայտնի գող չը լինի, անաստուած չը լինի. իսկ զանազան ստախօսութիւնները, սուտ երդում ուտելը, տնաքանդ խարէութիւնը, դոքա մեծ հմտութիւն և աչքաբացութիւն են համարվում: "Ի՞նչպէս կարելի է, ասումեն, որ վաճառականը քանի՛ կարող է աւելի չը վեր առնի իր մուշտարուց, ի՞նչպէս կարելի է մէկին—մէկ, մէկին—երկու գին չուղեր առաջի անդամից, կարելի է մուշտարին խամ է:" Միով բանիւ, նրանք չ'են էլ կարող երեւակայել, որ վաճառականը առանց խարէութեան կարողանայ փող աշխատիլ: Եդ վաճառականները իրար մէջ խօսալիս հօ չեն ամաչում իրանց արածներից, ընդհակառակը մեծ հպարտութեամբ պատմումեն, ինչպէս նա (ինքն) "անցեալ օրը ֆլանիտունը շինել է, էսքան կամ էնքան մանէթ աւելի պոկել է": Միւսը իւր դուքնի տղին, կամ "ղախաղարին" զովելիս՝ ի՞նչ է առաջ բերում—"չատ շունն է" կամ "չատ զօջաղն է էդ մեր տղէն. օր չի լինիլ, որ ատլաս կամ զանաւուղ չափելիս մի երկու արշին չը գողանայ չափի մէջ". լսողները նախանձելով գոչում են "աստուած է բանդ յաջողում, էլի":

Էս խօսքերից կարող էք հասկանալ, որ ասածս վաճառականաց մէջ խարբեայութիւնը բնական՝ սովորական բան է դառել, այսինքն՝ ո՛չոքի համար ամօթ կամ մեղադրութիւն չ'է: Մօտիկն ասեմ, դուք հօ տեսած կը լինէք՝ "մուշտի կռուի" ժամանակ, որ երկու հակառակ կողմ իրար են խառնվում, հասնող հասնողի խփումէ, գձլում է, գլորեցնում է. մէկը միւսի աչքին է թրքմբացնում, երորդը՝ չորորդի գլուխն է ճեղքում, էլ ո՛վ է էստեղ մտածում, թէ իրար խփելը, ծեծելը մեղք է, անիրաւութիւն է, մնաս է. ինքը որ չը խփի, ուրիշները նրան կը սկսեն խփել՝ մնաս հասցնել, ճարահատեալ պէտք է մասնակից լինի կռուին: Այ էս կերպ է ասածս վաճառականների կեանքը: Յայտնի բան է՝ սոքա ինչպէս մարդիք և ո՛չ գաղաններ՝ բարեկամութիւն, ծանօթի պատիւ պահել և այլ սոցանման բաներ գիտեն, բայց առուտուրի մէջ կ'ասես բոլորը մոռցվումէ: Մէկը խարումէ միւսին ամենավատթար կերպիւ մի տասը քսան մանէթ աշխատելու համար. միւսը ուսն անգամ սուտ տեղը Աստծու անունն է տալի փթած ապրանքը մինի վզին կապելու համար. էս միւսը երորդի հետ խօսք է կապում իրանց ապրանքը մէկ գնով ծախելու, իսկ տեղն ընկած ժամանակին ծածկաբար իր ապրանքի մեծ մասը լաւ "սաղացնում է", մինչդեռ միւսը բանից տեղեկութիւն չ'ունի: Չորորդը իր ծանօթի նեղ դրութիւնը գիտենալով՝ իբրև մօտիկ մարդ աշխատումէ ծածկաբար սուտ ու փուղ լուրեր տարածել նորա կայքի մասին, թէ ի՞նչ է, ինքը այդ կայքը կէս կամ քա-

աորդ գնով կարողանայ ձեռք բերել : Աս կերպ իրար միս ուտելով ապրումեն : Սորա աչքով տեսնուած բաներ են և միշտ պատահումեն այդ վաճառականների մէջ , և ես կարծեմ որ շատերը , որոնք ծանօթ են այդ կեանքին , եթէ չեն ուզում կեղծաւորութիւն անել , միւսնոյնը պէտք է ասին :

Էլ չ'են մտածում էդ վաճառականները , թէ բաց ի էն՝ որ նորա այդ կերպ իրանց կեանքը ապականումեն , հաւատարմութիւնը իրանց միջից վերացնումեն . մէկը միշտ աչքը չորս պէտք է անի , որ միւսը գաղտնի նորա գլխին չը խրիի՝ փոխանակ աղնուարար և բացարձակ իրար հետ առւտրական մրցողութիւն անելու : Բաց ի էդ , ասումեն , իրանց ազգի անունն էլ են կոտր ձգում : Օտար ազգերը ծանօթանալով նոցա հետ , և քիչ քիչ տեսնելով նոցա արարմունքները , սկսումեն մտածել թէ՛ բոլոր ազգն էլ այդպէս է . և բոլոր ազգի անունը վերջը նոցանում ստանում է "խարէբայութեան" և "ցածութեան" նշանակութիւն : Էլ ո՞ւմ հասկացնես թէ ազգի մեծ մասը հաւատարիմ , բարեսէր , իր քրտնքի և ձեռքի աշխատանքով դատող և խաղաղ ապրող ժողովուրդ է , որի կեանքը քիչ նմանութիւն ունի վաճառականների կեանքի հետ : Յայտնի բան է , այդ ազգերին կարելի ասել , որ իրանց ստորին գասի վաճառականները , որոնց մէջ դեռ չ'է տարածվել լուսաւորութիւնը , պատմածս վաճառականներից պակաս չ'են , մինչև անգամ տասնապատիկ վատ են և ատելի , մի՞ թէ ուրեմն իրանց ազգերին էլ անբարոյական պէտք է ասել : Ո՛չ , ամեն տեղ , որտեղ վաճառականութիւնը լուսաւորուած չէ , որտեղ վաճառականները հնարք չը գիտեն առւտուրի մի քանի գլխաւոր վատ կողմերը ուղղելու , ամեն տեղ միւսնոյն ցածութիւնը , մանրավաճառական ոգին տեսնվումէ : Ուրեմն թող պատմածս վաճառականների մէջ էլ տարածվի քիչ քիչ լուսաւորութիւնը , տեսնենք նորա ուրիշ ազգերի օրինաւոր վաճառականներից տասնապատիկ աղնիւ կը լինեն՝ թէ չէ : Ե՛հ , ո՞ւմ հասկացնես էդ բաները . մէկ անգամ , որ մի ազգի անուն կոտրէ ընկնում անկիրթ վաճառականների շնորհքից , ժամանակներ են պէտք , շատ աղնիւ հոգի մարդկանց աշխատութիւններ են պէտք , որ բանը ուղղվի :

Ցաւն էն է , որ այսպիսի վաճառական ժողովուրդը՝ իւրեան շատ աստուածապաշտ և քրիստոնեայ ժողովուրդ է համարում : Բայց ի՞նչ բանում է կրկում դոցա քրիստոնէութիւնը , ամեն օր եկեղեցի գնալում արդեօ՞ք : Մի մարդ ասի դրանց . ի՞նչ անեմ ձեր եկեղեցի գնալ ու գալը , երբ նորա գլխաւոր պահանջներից ո՛չ միւսը չ'էք կատարում : Եկեղեցին ամենայն օր անիծումէ ձեր առաջև ստախօսութիւնը , սուտ երգում ուտելը ,

խարէութիւնը. իսկ ձեր կեանքի մէջ ամենից շատ այդ ախտերն են տարածուել: Նկեղեցին ամեն օր Աւետարանով քարոզումէ ձեզ ընկերասիրութիւն և միարանութիւն, իսկ դուք ընդհակառակը՝ հէնց էդ ազգաշէն և օգտ լի առաքինութիւններից է՝ որ բոլորովին զուրկ էք: Նկեղեցին ձեզ խրատումէ աղքատաց օգնութիւն, իսկ դուք էս անծանօթին մի դոօշ, էն անծանօթին մի կօպէկ տալով՝ կարծումք թէ բոլոր մեղքերդ քաւեցիք— պրծաք, հոգիներդ էլ դրախտը ձգեցիք: Այն ինչ՝ ձեր արածով աշխատութիւնը չի պակասիլ, և եթէ ճշմարիտն ասենք կամ եթէ շատերին խորթ չը թուի, միայն այդ կերպ օգնելուց՝ աղքատութիւնը աւելի աճումէ, քան թէ նուազում: Մի տեղ որ մտադառնալ կամ խօսիրայ է ծնում, աշխատումեն իսկոյն ցաւի բունը, անմաքուր և աղբոտ տեղերը խտակել, և ո՛չ թէ մի քանի մարդ առողջացնելով բաւականանալ. միայն այս վերջի կերպով ցաւին չէ կարելի դէմ դնել. դու մէկին կը բժշկես, ցաւը տասին կը հիւանդացնի, և քանի գնայ՝ էնքան աւելի կը սաստկանայ: Աւրեմն մէկըն ասի դրանց, թէ ուղումենք իրաւի աղքատութեան առաջը առնել, թէ ուղումենք ճշդիւ Նկեղեցուց կամ Նորա դուլի Քրիստոսի պատուէրը կատարել, սկսենք բանը հիմքերից, զոհենք մեր էստեղ էնտեղ աննպատակ ցրուելու կօպէկները և գումարները մէկ անդամից դպրատունների համար: Արհեստաւորների ուսումնարաններ բաց անենք, կամ դոցա համար վարժապետներ պատրաստենք՝ որ աղքատների բազմանգամ սերունդը այնտեղ ապահովի, կրթութիւն ստանայ, գործ սովորի, իսկք ու միտքը լուսաւորի կեանքի և ապրուստի նեղ ճանապարհները բաց անելու համար, որ յետոյ ո՛չ իրան և ո՛չ ժողովրդի վզին աւելորդ բեռ լինի. ընդհակառակը՝ ամենքը ժողովրդին օգտաւէտ անգամ դառնան:

Բայց ասածս վաճառական ժողովրդի մէջ կարելի է կտոր կտոր ամեն մի շռայլ կամ կիսաօգուտ բանի համար փող հաւաքել, բայց ո՛չ մէկ անդամից՝ ամենահարկաւոր գործնական ուսումնարանների համար, որք են իրաւի աղքատութեան գլխաւոր անհետացուցիչքը: Եղպէս ժողովրդի մէջ հազիւ հազ մարդ կարող է տեսնել էս տեղ էն տեղ մի յետ ընկած հոգեոր դպրոց, ո՛չ աւելի:

Ի՞նչից է պէտք է հարցնէք, որ գոքա իրանք իրանց կեանքը պղտորումեն, այդքան յամառված են. միթէ Աստուած էդ մարդկանց մէկ անգամ չար է ստեղծել:

Ո՛չ, ո՛չ, սիրելիք. չար մարդ աշխարհքի երեսին չէ ծնվում. թէ հազարից մինը պատահի, էն էլ կամ խելագար պէտք է լինի՝ կամ մի անսովոր պակասութեան տէր. ո՞վ չի ուղում լաւ ապրի, ո՞վ չի ուղում ա-

ուանց ուրիշին վնաս տալու իր հացը գտնի: Պիտեցէք, որ ամեն մարդկա-
 յին սրտի մէջ վառվումէ արդարութեան ճրագը. շատ դժուար է նրան բո-
 լորովին հանգցնելը: Աւ ի՞նչ էք կարծում, մի՞թէ ասածս վաճառական-
 ները, խաւար մարդիկը, բաւական են իրանց կեանքից: Չէ: Թէպէտ իրանք
 դեռ պարզ չեն զգում, որ իրանց կեանքը «մուշտի կուռի», նման է (ախր
 էդ կեանքին որ սովոր են՝ ուրիշ կեանք չեն տեսել դեռ). բայց էլի մի խո-
 ըր անբաւականութիւն կայ. զգումեն որ կեանքը լոյս պէտք է լինի. բայց
 իրանք խաւարի մէջ են ապրում. զգումեն՝ որ իրանց կեանքում ստու թիւ-
 նը, խարէութիւնը, կեղծաւորութիւնը շատ տարածվել է. էնդուր էլ
 նրանց մէջ ամեն տեղ ասումեն «դրուստի գրակը ծակ է», կամ «դրուստ
 խօսողի տակը քեահլան ձի պէտք է՝ որ ասէ ու փախչի»: Տեսնումէք, ի-
 րանք էլ հասկանումեն՝ որ ճշմարիտ մարդը նրանց մէջ չէ կարող ապրել,
 պէտք է փախչի հեռանայ նրանցից:

— Բա՛, որ զգումեն, ի՞նչի չեն իրանց կեանքը լաւացնում:

Գէ՛, էդ է, որ դրանց կեանքը մէկ անգամ ծուռը ճամբայ է ընկել.
 պապերից, մամերից, թշուառ անցեալից, ներկայ սխալ դրութիւնից մէկ
 քանի լաւ բաների հետ՝ ի՞նչ վատ սովորութիւններ ասես, ի՞նչ վնասակար
 կարգադրութիւններ ասես, ի՞նչ յիմար և անպիտան կեանքի կամոններ ա-
 սես, որ դրանց վերայ կոռուի կոռուի ցեխի պէս կրպած չը լինի: Հարկա-
 ւոր է գիտութեան աղբիւրները, գիտութեան լայնարձակ ծովերը, որ դրանք
 լուացվեն, խտակվեն. հարկաւոր է լուսաւորութեան օրհնած իւղը, որ
 դրանք օժվեն, Աւետարանի լոյս իսկապէս ճանաչեն, ճշմարիտ քրիստոնէք
 դառնան: Հարկաւոր են անձնազոհ կամ լաւ ևս ասել՝ ստութեան դէմ
 կուռով, իրանց օգուտը հասարակաց օգտից չը զատող մարդիկ, որ ցոյց
 տան դրանց ուղիղ ճանապարհը, որից անգիտութեամբ շեղվել են: Աւր է,
 էդպէս ժողովրդի միջից քիչերն են դուրս գալի. այդ քիչերն էլ մեր մեղա-
 ցից այնքան հեռու են դուրս գալի ժողովրդից, որ ո՛չ իրանք են հասկա-
 նում ժողովուրդի իսկ ցանկութիւնները և պիտոյքները, ո՛չ ժողովուրդը
 սոցա ասածները կամ քարոզածները, էնպէս որ՝ ճարահատեալ ախ ու վախ
 անելով ապրումեն և կեանքները մանրիմունը բաներով են անցկացնում:
 Եդպէս ժողովրդի մէջ գիտութիւնն էլ շուտ չի տարածվում, էնդուր որ
 մեծ մասը աղքատութեան մէջ տապակվումէ, ժամանակ ունի՝ որ մտածէ,
 քննէ, բան սովորի, սեր սպիտակից ջոկէ: Հարուստների մէջ էլ գիտութիւնը
 ուշ ուշ է (տարածվում) մտնում. որովհետև դրանց շատ մասը ասածս
 վաճառականներն են, որ ամեն բան հիմնումեն խարէութեան վերայ. ու-
 րեմն էլ գիտութիւնը նրան ի՞նչ հարկաւոր է: Օրինակի համար՝ դրանց


երկրումը բայց օրամասնադի բրդեղէն, բամբակեղէն կայ, ի՞նչ նեղութիւն մէկ էլ կրեն, իրանց որդւոցը այնպէս գիտութիւններ սովորացնել տան, և այնպէս տեղեր ղրկեն, որտեղ նորա այդ նիւթերը գործնական կերպիւ պատրաստել, նոցա զանազան ձևեր տալը իմանան. հաշուագրքեր կարդան՝ մեծ մեծ առևտուրական գործերի ձեռնամուխ լինելու համար. փող մծտ անեն, իրարու հաւատարմութիւն ցոյց տալով ընկերութիւններ կազմեն. հա՛, ի՞նչ հարկաւոր է զաւօդներ, Փաբրիկներ կառավարել գիտենան, որ էդ իրանց տեղի էժան բուրդից, բամբակից, թելից լաւ, զիմացկող բաներ շինեն. ի՞նչ հարկաւոր է էդքան նեղութիւն կրել, երբ գիտեն՝ թէ իրանց որդիքն իրանց նման ընդունված վաճառականական խաբէութիւնները և ձևերը սովորելով պէտք է կարողանան իրանց ժառանգութիւնը որքա՛ն և իցէ պահպանել, ուրիշներին ի՞նչ կըլի ըլի, նրանց ի՞նչ նեղութիւն :

Աւրիշ օրինակ ասեմ. դրանց երկրում շատ տեղերում՝ պարարտ հողեր, դաշտեր կան, որ մարդի համար տալիս են զխաւոր բարին, անդին ցորենը. Թ՛ող խեղճ գիւղականները իրանց պապերից, լաւ ևս ասել, Ադամից մնացած ծանր ծանր «գութանի», համար՝ որտեղից որ է՝ տաններկու ջուխտ եղ կամ գոմէշ գտնեն, գառն քրտինքներ թափելով մի կտոր հող վարեն. տարվայ մեծ մասը արեգակի տակ տապակվելով ցորենը ցանեն, հնձեն, ծեծեն Վաճառականին ի՞նչ նեղութիւն. գեղացուն մի քանի կտոր չի՞թ կամ կտաւ նիսիայ (պարտք) կը տայ, յետոյ նրա երկու ամբողջ ամսվայ քրտնքի աշխատանքը ձեռիցը կ'առնի, պրծանք գնաց: Ել ի՞նչ հարկաւոր է, որ հարուստները իրանց որդւոցը երկրագործութիւնը, այգեպանութիւնը ծաղկած տեղեր ղրկեն, Ֆիրմերների մօտ, որ էնտեղերքը իսկապէս բան սովորեն, գան իրանց և իրանց գեղացւոց հողերը աւելի լաւացնեն՝ պարարտացնեն: Նորահար գութանները գործածել իմանան, կամ իրանք էլ լաւերը հնարեն, եթէ բանը գիտեն, որ երկու ձիով կամ մէկ եղով աւելի հեշտութեամբ և աւելի շուտ վարուի: Ի՞նչ նեղութիւն մէկ էլ կրեն, խեղճ գեղացիներին, որոնց վրայ է, համարեա՛, հիմնուած իրանց հարստութիւնը, այդ գիւղացիներին սովորեցնեն նոր գութաններ բանացնելը. նրանց սովորեցնեն ամեն տարի սերմնափոխ ցանք անելը, որ երկար ժամանակներով գեաինները անպտուղ և անպէտք (խոյան) վեր ընկած չը մնան՝ մինչև էդ հողերի կշտանալը և միւսանգամ էլ ցանք անելը: Ի՞նչ հարկաւոր է, որ "գուհիկ" գիւղացիների հետ ընկերութիւններ կազմեն, մի քանի օրավար տեղը միացնեն, նրանց բաց ի օգտաւէտ աշխատելու ձևեր ցոյց տալը, փողով էլ օգնեն, որ համ գիւղացիք ուրախութեամբ առանց դժոխային տանջանքի աշխատեն և նրանց աշխատանքը առատութեամբ վարձատրվի, համ հա-

լուստների փողերը՝ առանց խաբերայութեան՝ առանց "մուշտի կուռի" աւելի և աւելի շահվի, է՛նչպէս որ հարուստ վաճառականները իրանց օգտի համար աշխատելով, միևնոյն ժամանակը աղքատներին էլ օգուտ տան, հարստացնեն, որ բոլոր ժողովուրդը լիանայ, զարգանայ և լաւ կեանք ունենայ, վաճառականութիւնն էլ ոտքի կանգնի: Եղպէս բաների հետեացնելու տեղ, այդ ասածս հարուստ վաճառականներից մինը թէ ուզումէ իր որդուն բաղդաւորացնի, իսկոյն տալիս է նրան չինովնիկութեան, "իմ որդին, ասումէ, մենձաւոր պիտի դառնայ". և սկզբից այնպէս տեղից է կրթել տալի՝ որ որդիքը իրանք ևս չընի համար "հողի տան". որովհետեւ այն տեղերից դուրս եկած մի տղայ ոչ շնորհքով վաճառական կարող է լինել, և ո՛չ մի այլ առւտրական, հարկադրեալ՝ նա էլ "չինովնիկութիւնը" իր գլխաւոր ապաստանն է համարում: Լաւ, ես հօ՛ բան չեմ ասում, "չինովնիկութիւնը" վատ բան չէ, ասենք նա էլ իր օգուտն ունի, ասենք մի քանիսը նրանցից ժողովրդին բաւականի օգուտ էլ տուել են և հիմայ էլ աւելի օգուտ պէտք է սպասել նոր կրթուած "չինովնիկներից" (որովհետեւ առաջվայ "չինովնիկների" մեծ մասը ճշմարիտ գիտութիւն չստացած և "մուշտի կուռ" կեանքին ոգւով կրթուած լինելով, կամ հետուից նորա մէջ ընկնելով, իրանք էլ սկսումէին գռել, գռփել, պլոկել, ժողովրդի վերջին հիւժերը ծծել): Ասենք նորերից շատերն էլ բաղդաւորվում են, պատուի՝ փառքի տիրանում. բայց մէկն ասի էդ վաճառականներին, մի՞ թէ էդ չինովնիկութիւնն է ու կայ, էլ միւս բաները ձեր գլխից կտրուել է: Մի՞ թէ ձեր որդին պակաս փառք և պատիւ կունենայ, եթէ նա ճշմարիտ վաճառականութեան կրթութիւնը ստանայ, եթէ նա լեզուագէտ, հաշուագէտ, լուսաւորված, իւր ժողովրդի բարօրութեանը ձեռից դալածի չափ աշխատող վաճառական մարդ լինի: Ի՞նչպէս էք կարծում՝ այնպէս մի վաճառական էն մեծ չինովնիկներից պակաս հարստութիւն և ազատութիւն կունենայ, չինովնիկից տասնապատիկ բաղդաւոր չե՞ն լինելու արդեօք ձեր հարուստ որդիքը, եթէ նոքա լաւ տեղերում՝ սովորեն տնտեսական գիտութիւններ, որ յետոյ դան ու կարողանան իրանց օգտի համար ձեր երկրի, ձեր ժողովրդի մէջ ծաղկեցնել այգեպանութիւնը, երկրագործութիւնը և սորա նման ազգաշէն բաները: Ի՞նչպէս էք կարծում, սոցա հարստութիւնը ժողովրդի հարստութեան հետ տարեց տարի պէտք է շատանայ, թէ ոչ: Եթէ մի քանիսը էլ ձեր որդկերանցից զրկվին այնպէս տեղեր, որտեղ նոքա ամենահարկաւոր գիտութիւններ սովորեն, և միևնոյն ժամանակը՝ ինչպէս կարգն է՝ դաստիարակութեան ձևերը իմանան, ուրեմն իսկ վարժապետութեան համար տնօրինված ուսումնարաններում կրթվեն և ո՛չ միայն համալսարան-

ներում, ճնամարաններում, յետոյ գան ձեր մնացած որդւոցը, ձեր ազգի երեխանցը խելք ու հարստութիւն տուող գիտութիւնները տարածեն. ի՞նչ պէս էք կարծում, քիչ պատիւ և փառք կունենան ձեր ժողովրդի մէջ, սոցա և ձեր անունը սերունդից սերունդ չը պէտք է արդեօք փառաւորվի: Ախրը, եղբարք, չինօվնիկութիւնը տեսանք, գիտե՛նք ի՞նչ բան է, չէ՞ որ միւս պատուոյ արժան բաներին էլ պէտք է ձեռք զարնենք. կարելի է էդ դործերը մեզ համար էլ, մեր ապագայ սերունդների համար էլ աւելի օգտաւէտ լինեն . . . :

Ե՛հ, սիրելիք, ո՞ր մէկը պատմեմ, էդպիսի ժողովուրդը հազար ու մէկ ցաւ ունի. ո՞ւմ պէտք է հասկացնես. լաւ է ես էլ ձէնս կտրեմ: Տեսնումեմ, որ դուք էլ ձանձրացաք իմ երկարաբանութիւնից և մեր պատմութեան կապից շեղուելուցս. գիտե՞ք՝ ի՞նչ կայ, ես մի քանի ցաւեր ունիմ, որ ինչ պատմութեան մէջ կուզէ լինի, եթէ մի քիչ նրանց դիպչումեմ, իսկոյն պատմութիւնն էլ, ինձ լսողներին էլ բոլորին էլ մոռանումեմ, չանէս (ծնօտ) թուլանումե, էլ ես ինձուինձ չեմ կարող զսպել, սկսումեմ դէլը տալ մինչև դադրելս. այդ բանը ծերութեանս պակասութիւնն է. ուրեմն դուք էլ պէտք է ձեր Մեծ—Պապին ներէք: Հիմայ այս խրատը միայն կտամ ձեզ, որ դուք այդ իմ "դէլը տուածը" ձեր մեծերին կարդաք (որովհետև իմ բոլոր խօսածները ձեզ գրքով թողնելու եմ այստեղ), եթէ նոքա դրանում մի հետաքրքրութեան արժանի բան գտնեն, յետոյ ձեզ քիչ քիչ կը հասկացնեն: Կսկ հիմայ շարունակե՛նք էլի մեր պատմութիւնը. կաշխատեմ էլ շատախօս չը լինել:



Յակոբը և Գէորգը լսելով իրանց կնքահօրը՝ և նորա խրատների օգուտը տեսնելով՝ բոլորովին փոխեցին իրանց առուտուրի ընթացքը, էլ ո՛չ խարէութիւն, ո՛չ շլորած խնձորները բռնի տակ դնելով ծախել, և ո՛չ սոցա նման ուրիշ բաներ: Այնուհետև Թուարանութեան գիւտի անունը քիչ քիչ անհետանումէր: Սորա փոխարէն բոլոր մօտ տեղերում, զանազան ազգերի մէջ տարածվեց սոցա հաւատարմութեան և ճշմարիտ վաճառականութեան համբաւը, էնպէս որ՝ շատ տեղերի վաճառականներ՝ փոխանակ մէկ էլ իրանք դալու ճանապարհի փող մտնելու՝ ուղղակի գրումէին Յակոբի և Գէորգի ընկերութեանը. "Պարոններ, խնդրեմ ինձ այսքան փութ խնձոր, այսքան մղօն՝ ֆլան քաղաքը շուտով հասցնէք": Ընկերու-

Թիւնր, որովհետեւ սայլապանները և այլ հարկաւոր բաները առաջուց պատ-
 րաստել էր որքան կարելի էժան գնով, իսկոյն պահանջը կատարումէր և ու-
 ղարկումէր խնձորը ու զած տեղը իւր ընտրած հաւատարիմ սայլապանի հետ՝
 այսպիսի մի նամակով, "այսքան խնձորը կանի այսքան ուուրլի կամ կօպէկ,
 այսքան մղոն ճանապարհի և սայլապանի ծախսն էլ՝ կանի այսքան, ընդ-
 ամենը այսքան և այսքան". և փողը սայլապանները յետ եկած իսկոյն
 հասցնումէին ընկերութեանը: Էս կերպ մեր Խնձորածախ ընկերութեան գոր-
 ծը շատ գեղեցիկ առաջ էր գնում. բայց մի դժուարութիւն էլ էր մնացել
 յաղթելու: Այդ ժամանակներում, ամեն մի քաղաք, ամեն տեղ իւր առան-
 ձին կաֆէ ունէր, առանձին փողը, առանձին կշիւր: Ընկերութիւնը շատ ան-
 գամ մեկ քաղաքից, որտեղ տաճիկներ (Թուրքեր) էին բնակում, ստա-
 նումէր էսպիսի նամակ. "Ձեր նշանակած գնով մեզ համար 1000 ղուրու-
 շի կամ 2 քիսայի ուղարկեցէք մեզ 30 հօֆայ խնձոր, մնացածը այսքան
 մղոն ճանապարհի (ծախսը) խտրջը համարեցէք": Միւս տեղից, որ Քաղ-
 ղիացիք էին, ստացվումէր մի ուրիշ նամակ— "100 Փրանքի մեզ ուղարկե-
 ցէք այսքան կիլօգրամ կամ այսքան լիւր խնձոր՝ հաշուելով այսքան մեզը
 ճանապարհի ծախս": Անգղիացիք ուրիշ կերպ էին գրում. Ալստրիացիք ու-
 րիշ կերպ. Արուսիացիք կամ Նեմէցները էլ ուրիշ: Ամեն անգամ խեղճ
 Քէորզը և Յակոբը պէտք է վաղէին կնքահօր մօտ, որ նա նորա համար
 հաշուի՝ թէ նամակներում նշանակած փողը կամ կշիւրը ինչքան իրանց
 քաղաքում գործածած ուուրլի, կօպէք, փութ կամ Փոււստ կանի": Էս բանը
 ի հարկէ շատ ձանձրալի էր:


Աերջը կնքահայրը, որ շատ իրա գլուխը չը տանեն, վեր առաւ մի
 տախտակ շինեց ու վրէն նշանակեց գլխաւոր ազգերի, որոնց հետ յարաբե-
 րութիւն կարող էին ունենալ, չափերի, կշիռների, տեղերի նշանակութիւ-
 նը. բաց ի էդ մի քանի օրինակներ և թուարանական խնդիրներ իր սանիկ-
 ների հետ կատարեց՝ որ նոքա փորձիլին, միւսանգամ իրանց հաշիւները
 իրանք կանեն:

Սրանից յետ էլ ոչինչ արգելք չը կար մեր տղոց հարստութեանը շա-
 տանալուն: Քէորզը և Յակոբը արգէն մեծացան՝ մեկը դարձաւ Քէորզ ա-
 ղայ, միւսը Յակոբ աղայ: Է՛հ աղայութեան էլ յարմար նոքա ակըր պէտք
 է տներ ունենային. և իրաւի երկու քօշք ու սարայ շինեցին, որ քաղաքի
 մէջ առաջինները դարձան: Էս մեր նոր աղաների պատիւը իրանց քաղաքի
 մէջ շատ պահումէին, բաց ի էդ նրանց քաղաքակից վաճառականները տես-
 նելով Խնձորածախների յաջողութիւնը, իրանք էլ սկսեցին սրանց ընթաց-
 քը բռնել. իրար հետ, գեղականների հետ ընկերութիւններ կազմեցին, մի

տեղ առաջ եկաւ "Յորենածախների Ընկերութիւն", միւս տեղ "Բրդածախ-
 ների Ընկերութիւն", երրորդ տեղ "Աղաժածախների Ընկերութիւն" և ըն և ըն:
 Այս ընկերութեանց կանտորները ամեն տեղ տարածվեց: Սորա ղրկումէին
 ամեն տեղ իրանց տեղի բարին ու բերքը, ամեն տեղ ճանապարհները հար-
 թեցին, շինեցին աւելի հեշտ հաղորդակցութեան համար. միով բանիւ՝ շու-
 տով էս մեր Խնձորածախների քաղաքը բոլոր էդ տեղերի վաճառականու-
 թեան կեդրոնը դառաւ: Եւ ո՞վքեր էին համարվում էս բաների ղլխաւոր
 պատճառը. յայտնի բան է, Պէորգ աղէն և Յակոր աղէն: Սրանից յետէլ
 ո՞ր գեղեցիկ, հարուստ աղջիկը լինէր, որ նրանց կին չուզենար լինել: Իրա-
 վի շուտով մեր Խնձորածախ աղաները իրանց համար լաւ, խոհեմ հարս-
 նացուք գտան:

Նշանտուէքից յետ քառասուն օր քառասուն գիշեր սրանց հարսա-
 նիքն էր. բոլոր քաղաքը սոցա մօտ հարսնէոր էր. Ուտել, խմել, քէֆ, ու-
 րախութիւն, ցնծութիւն


Իրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնէք ձեր մուրազի՞ն:



— Բան Աննամարիկն ի՞նչ էլաւ:

Օ՛, նրա բանն ուրիշ. Նորա վերջի պատմութիւնն եթէ անեմ՝ մի
 մեծ հէքեաթ էլ էդ կը լինի: Թէ՛ ինչպէս նա մի պալատական անձի ա-
 ուջարկութիւնը, որ ուզումէր նորան փեսայաճալ, բոլորովին հերքեց և
 մերժեց. որովհետեւ չէր սիրում այդ դասի մարդկանց շռայլ և բամբասան-
 քով լի կեանքը: Զը նայելով որ փառասէր ազգականները և իւր մեծերը
 իրանց օգտի համար՝ դրդումէին աղջկան որ պալատականի աուջարկու-
 նը շնորհակալութեամբ անպատճառ ընդունի: Թէ՛ ինչպէս նա իւր համար
 ընտրեց փեսայ մի խելացի և գիտուն արհեստաւոր տղայ, որ իւր սեփական
 աշխատանքով բաւականին գումար էր ձեռք բերել, և որը բաց ի իւր ար-
 հեստը մի փոքրիկ ուսումնարան էր պահում, ուր գիւղացւոց տղերանց սա-
 մի, լուծ, սայլեակներ, նոր, թեթեւ սայլեր և այլ շիննականին հարկաւոր
 բաներ շինել էր սովորեցնում: Աննամարիկն էլ ամենայն ջերմեռանդու-
 թեամբ սկսեց իւր մարդուն օգնելու այդ արդիւնաբեր՝ բայց դժուար գործի
 մէջ: Լուսաւոր մտքով սկսեց այդ ուսումնարանում կարգալ գրել ուսու-
 ցանել, երեխայից բարձր ու վարձը ամեն կողմանէ մաքրել աշխատումէր իւր
 քնքուշ և սիրող սրտովը, և առհասարակ իւր գործասէր բնաւորութիւնովը
 հիանալի մեծ ազդեցութիւն ունեցաւ ամբողջ ուսումնարանի յառաջադի-

մութեան վերայ: Հա՛, թէ՛ ինչպէս Աննամարիկի հարսանիքը, համեմատե-
լով եղբարց, համեստ և պարկեշտ էր, որ բաց ի շատ մօտ բարեկամներից՝
ոչ ոք չը կար: Թէ՛ ինչպէս յետոյ նա տուն էր կառավարում, որպիսի
մարդ դառաւ՝ այսինքն ինչպէս իւր որդւոցը ինքը կրթումէր և դաստիարա-
կում: սորա բոլորը, ասումեմ, երկար բաներ են: Թէ՛ սաղ մնացի, մի օր էլ
ձեզ էդ բաները կը պատմեմ. երբ դուք էլ բաւական կը մեծանաք՝ և ձեր
հետաքրքրութիւնը աւելի այդ նիւթերին կսկսի հակել:



ՄԵԾ ՊԱՊԻ ԳՆԱԼԸ

Սիրելի որդիք, հիմի հօ լսեցիք փոքր Խնձորածախնների և նոցա քոյր Աննամարիկի բոլոր պատմութիւնը: Ի՞նչպէս է, հաւանումէք՝ թէ չէ:

— Պապի, շատ հետաքրքիր և դուրեկան բան էր. բայց ճշմարիտն ասած, մի քանի տեղը բաւականին ձանձրալի էին:

— Ախր խաթայ է ձեզ հետ գործ ունենալը: Ձեզ համար մեղըը քրտումեն հացի վերայ, որ դուք սիրով հացն ուտէք և նրանով մի քիչ սննդակէք. իսկ դուք ուզումէք միայն մեղըը լիզ'լ՝ հացը թողնել. մինակ մեղըը փո՞ր կը կշտացնի՞: Ի՞նչ լաւ, որ էդպէս է, դուք ձեզ համար մի ուրիշ Պապ պտուեցէք, որ ձեզ զանազան հեքեաթներ ասի Թուարանութիւն սովորեցնելու համար. տեսնե՞նք, շուտ կը գտնէք:

— Ի՞նչի ես նեղանում, Պապի ջա՛ն: Դու հօ տեսնումէիր, թէ ի՞նչպէս մենք ուշքով ու մտքով լսումէինք սկզբից մինչ ի վերջը: Բանը խառնումեն էն անիծած թուանշանները, դու ի՞նչ ես մեղաւոր:

— Ի՞նչ, օրհնուածներ, իմ հեքեաթը հօ հասարակ հեքեաթներիցը չէ՞ Սա բոլոր Թուարանութեան կուրսն է. "Պղնձէ քաղաքը" չէ, որ բոլորը առանց մտածելու կարդաք ու միայն ձեր երեւակայութիւնը սուտ ու փութ բաներով լքցնէք:

Սրա ամեն մի գլուխը առանձին առանձին պէտք է սովորել, ինչպէս դաս էք սովորում: Ուրեմն ես կը թողնեմ ձեզ մօտ իմ պատմութիւնը, ահա՛ գրուած, որ դուք միւսանգամ կարդալով, հասկանաք ձեր չը հասկացած տեղերը:

— Պապի ջան, դու որ ասումես թէ սա բոլոր Թուարանութեան կուրսն է, բա՛ ի՞նչի մեր Ռուս վարժապետը՝ Թուարանութեան մասերը համրելիս, մի քանի ուրիշ բաներ էլ ասաց, որոնք դու չը բացատրեցիր:

— Ճշմարիտ է, կայ էլի շատ բաներ Թուարանութիւնից, բայց բոլորը
 չէր կարելի ձեզ պատմել. շատը պէտք էր դուրս թողնել. Ախր, թէ որ
 էդպէս չանէի՝ էլ հեքեաթ ո՞րտեղից դուրս կը գար, մի անվերջ պատմու-
 թիւն կը լինէր, որ դուք լսելու տեղ տասն անգամ պէտք է քնէիք: Աշ-
 խատեցէք էսքանը միայն լաւ հասկանալ՝ ինչ որ ես ձեզ պատմեցի. մնա-
 ցածը կամ լաւ վարժապետներից, կամ մեծ մեծ Թուարանական գրքերից
 կը սովորէք յետոյ:

Իէ՛հ հիմի, իմ սիրելի՛ որդիք, մնաք բարով, ես էլ բաւականին բե-
 զարեցի:

— Վացի՛ր, Պապի, մի՞թէ դու էլ մեզ ուրիշ պատմութիւն չը պէտք է
 անես:

— Ի՞նչու չէ: Եթէ էս պատմութիւնը լաւ սովորէք, ես կաշխատեմ ձեզ
 էլ լաւ բաներ պատմել:

— Շնորհակալ ենք, Պապի ջան. ջանք կանենք, որ քու աշխատանքը մեզ
 համար կորուստ չը լինի. . . .

Վ Ե Ր Զ

